

ՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱՅՐԵՐ

Ե

ՍՈՒՐԲ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

ՄԱՄԱՐԵ ՎԵՐԾԱՆՈՂ



ՆԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԱՅՐԵՐ

Ե



ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ-  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ  
ՆԵՐԲՈՂՆԵՐ

ՄԱՄԲՐԵ ՎԵՐԾԱՆՈՂ  
Ճ Ա Ռ Ե Ր

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷԶՄԻԱՇԻՆ - 2008

ՀՏԴ 23/28 : 1/14  
ԳՄԴ 86.37 + 87.3  
Դ 242

Թարգմ. գրաքարից՝  
Մարթա Արաքչյանի

Ս. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՐԹ  
Դ – 242 Ներբող Աստվածընկալ Սուրբ Խաչին, Ներբող Կաթողիկե  
Սուրբ Եկեղեցուն:  
**ՄԱՄԱՐԵ ՎԵՐԾԱՆՈՂ**  
Ճառեր. - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, 116 էջ:

ԳՄԴ 86.37 + 87.3

Տպագրվում է մեկենասությամբ՝

.....

ISBN 978-99930-75-70-7

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2008 թ.

**ԱՌԱՋԱԲԱՆ**

**Դ**ավիթ Անհաղթը հայ փիլիսոփայական մտքի ամենավեհ բարձունքն է: Փիլիսոփայական վեճերում հաղթանակների համար ստացել է *Անհաղթ* պատվանունը: Առաջին թարգմանիչներից է, հայ Եկեղեցու տոնելի սրբերից: Սովորել է Ալեքսանդրիայում: Վերադարձել է հայրենիք և նպաստել հայ փիլիսոփայական գիտության զարգացմանը:

Փիլիսոփայական երկերից բացի նրա անունով մեզ են հասել երկու ներբող՝

ա. «Ներբող Աստվածընկալ Սուրբ Խաչին»,

բ. «Ներբող Կաթողիկե Սուրբ Եկեղեցուն»:

Ներբողական գրականության գովեստական ժանրին պատկանող այս ներբողները լավագույն մուշկներից են իրենց յուրահատուկ լեզվական գունագեղությամբ և ոճային հատկանիշներով:

Ներբողներն առաջին անգամ են թարգմանվում արևելահայերեն:

**Մ**ամբրե Վերծանողը Ե դարի կրտսեր թարգմանիչներից է: Նրա կյանքի և մատենագրական վաստակի մասին քիչ բան է հայտնի: Հայ հիմ գրականության և հայ Եկեղեցու պատմության հեղինակները պատմական աղբյուրների լռության պատճառով պարզապես բավարարվել են նրան հիշելով որպես Մամբրե Վերծանող՝ դասելով նրան կրտսեր թարգմանիչների շարքը:

Մամբրե Վերժանողի մատենագրական վաստակից միայն ճաներ են մեզ հասել: Մխիթարյան հայրերը հրատարակել են Մամբրեի չորս ճառերը.

ա. «Ի Յարութիւն Ղազարու»,

բ. «Վասն Յարութեան Ղազարու, յաւուր շաբաթի»,

գ. «Նորին ի մեծի աւուր գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերուսաղէմ»,

դ. «Նորին յաղագս եկաւորութեան Փրկչին յերուսաղէմ»:

Չրատարակված այս ճառերից բացի Մատենադարանի թիվ 1798 ձեռագրում ընդօրինակված է Մամբրեի «Ի ծնունդն Փրկչի» խորագրով ճառը:

Մամբրեի ճառերը շարադրված են քրիստոնեական ճառագրության ավանդների հետևողությամբ: Նրանք հանդես են գալիս այլաբանական մեկնությամբ և խոր աստվածաբանությամբ:

Այլաբանական մեկնության տեսակետից գեղեցիկ են Տիրոջ՝ Երուսաղէմ գալստյանը նվիրված երկու ճառերը:

Ավետարանական բազմաթիվ մեջբերումներին անմիջապես հաջորդում են հեղինակի այլաբանական մեկնությունները:

Աստվածաբանական արժեքի տեսակետից ճառերում ցայտուն են դրսևորվում Սուրբ Երրորդության (առանձնացնելով երեք անձերից յուրաքանչյուրի հատկությունն ու գործունեությունը), Քրիստոսի մարդեղության և փրկագործության խորհուրդները, Ադամի մեղանշական և Չիսուսի փրկչական պարագաները:

Քրիստոսի մարդեղության խորհրդի մեջ իրականանում է Աստծու և մարդու հաշտությունն ու հաղորդակցությունը:

Վերոհիշյալ ճառերը առաջին անգամ են թարգմանվում արևելահայերեն:

## Ս. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

## ՆԵՐՔՈՂ ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ

**Մ**արգարեն ձայնում է.

«**Բ**արձրացրե՛ք մեր Տեր Աստծուն, երկրպագեցե՛ք նրա սուրբ ոտքերի պատվանդանին» (Սաղմ., 98, 5):

**Ե**ս նույնպես նույնն եմ քարոզում՝ Հոգու ազդմամբ ձայնելով:

**Ո**րովհետև եթե այն սուրբ ու պատվական այրը, իբրև ճշմարտության օրինակ՝ Սիրոն լեռը, մանավանդ այնտեղ լինելիք շնորհների մշտնջենավորությունը տեսավ՝ այն նմանեցնելով Աստծո ոտքերի պատվանդանի, և Հորդորեց իսրայելյան ազգին՝ երկրպագել ու բաձրացնել Աստծուն, ապա նաև ինձ՝ անարժանիս, ոչ մի դատապարտություն չի հասնի այժմյան խոսքերիս ստուգություն պատճառով:

**Ք**անի որ մեր առջև գտնվողը օրինակ չէ, այլ իսկություն, և ո՛չ խորհրդով պատվանդան միայն, այլ նաև տաճար, սեղան և աթոռ:

**Ա**յս սրբությունն իսկապես Աստծու ոտքերի պատվանդան է և իմանալի սուրբ լեռ՝ դիտանոց. այդպես է թարգմանվում Սիրոնը:

**Ո**րի համար էլ սուրբ, կատարյալ հավատի բոլոր մանուկներին հորդորում ենք երկրպագել [նրան]:

**Ք**անի որ ճշմարիտ աստվածօրհնությունն ու երկրպագությունն այս է.

Եղբայրնե՛ր, եկեք երկրպագե՛նք երիցս փափագելի ու քրիստոսազարդ այս սուրբ Նշանին: Քանի որ սա մեզ համար առիթ է՝ փոխվելու մահվանից կյանք, կյանք, որն անցավոր ու երկրավոր չէ, այլ անվախճան է, անճառելի ու անմատչելի:

**Ա**ր առավել է, քան հրեշտակական բարերձանկուծյունը՝ ըստ Ավետարանի խոսքի:

**Ք**անզի սա մեզ մարմնի դյուրուծյուններից և այն ամենից, ինչ աշխարհում կա, ետ է պահում առանց իղձի, և սա է մեր փրկության պատճառը այն ախտերից, որ հաստատվել են մեր հոգում:

**Ա**րդ, մեր այսքան և այսպիսի բարիքների համար ինչպիսի՞ գոհուծյուն պիտի հայտնենք:

**Ա**րքան մեր կարողուծյունն է, գովասանական երգերով միշտ խոնարհվելով՝ երկրպագե՛նք:

**Ե**վ երբ խոնարհվենք, հեռու վանենք ծանր ու թմրեցնող ամեն մի խորհուրդ, հոգու հստակ տեսուծյամբ թեթևացած՝ արժանանանք երկնային խորհուրդի և դեպի բարձրագույնը բարձրանանք:

**Ք**անի որ ոչ թե փոքր բան կամ այդ տեսանելին է մեր առջև, այլ որ դրանով ու դրա մեջ մեծն ու հրաշալին է ծածկված՝ հիացնող ահավոր գորուծյունը:

**Ք**անի որ կրկնակի և ոչ թե մեկն է դրա գորուծյունը:

**Թ**եև հողից աճած բույսի տունկ՝ փայտ է երևում մեզ, սակայն նրա մեջ է այն, որ երկիրը, միաժամանակ նաև ամբողջ երկիրքը կրելու գորուծյունն ունի, որին մոտենալ կամեցողը հարկ է, որ հույժ մաքուր լինի:

**Ք**անի որ եթե երկնքի բուն Մաքրագույնի առջև սերովբեները թևերով երեսները ծածկած են կանգնում, ապա անարգներիցս և հողանյութներիցս որքա՛ն արժանավոր մաքրուծյուն է պահանջվում:

**Մ**ական ինձ փոքր չի թվում հիանալը անունների այլազանուծյամբ, որ զանազանվում է չորս եղանակով՝ բնական, մասնավոր, ձևական և իմացական:

**Ք**նականն այն է, որ փայտը նույնանուն է ասվում, մասնավորն այն է, որ միայն իրեն է հատուկ, օրինակ՝ կիպարիս,

ձևականը՝ որ խաչն իբրև սպանուծյան գործիք է հաստատված,

իսկ իմացականը՝ վեր, քան ամեն մի խոսք՝ աստվածախաչ է այն և կյանքի գործիք:

**Ռ**՞վ չի սքանչանա այս ասածներխս վրա՝ թե սպանման գործիքը միաժամանակ և կյանքի գործիք է:

**Մ**րա ձևը դեպի մահ է նայել տալիս, իսկ սրա գորուծյունը՝ դեպի կյանք:

**Ա**րովհետև բնութենակից է այն տունկին, որով մահն է, թեև ոչ տեսակով, և կրում է այն տունկի գորուծյունը, որով կյանքն է, թեև ոչ բնությամբ:

**Ք**անի որ ճշմարիտ կյանքը, մերձենալով սրան, վատթար գորուծյունը՝ մահը, փոխեց լավի՝ կյանքի, որովհետև կյանք է պարզևում այն ամենին, ինչին մոտենում է:

**Խ**ավարի դեմ լույս ունեմ այդ, որով ճշմարտվում է Աստծու խաչ լինելը:

**Ե**վ աստվածախաչ անվանելով այդ, ո՛վ աստվածասերներ, մի՛ ամաչեք, քանի որ այն պարծանքների պարծանք է մեզ համար՝ ըստ Պողոսի. «Ո՛վ Տիմոթեոս, ամոթ մի՛ համարիք վկայել մեր Տեր Հիսուսին, այլ մասնակի՛ց եղիր ավետարանելու Աստծու գորուծյունը, որ մեզ փրկեց» (Բ Տիմ., Ա 8):

«**Ա**րովհետև կորստյան մատնվածների համար խաչի քարոզուծյունը հիմարուծյուն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծու գորուծյուն» (Ա Կորնթ., Ա 18):

**ԵՎ**՝ «Ես ևս ամոթ չեմ համարում Աստծուն ավետարանելը, քանի որ այն Աստծու զորությունն է՝ ի փրկություն բոլոր հավատացյալների» (Հռոմ., Ա 16):

**Ա**պա ուրեմն սա ոչ թե ամոթ է մեզ, այլ պարծանքների պարծանք, քանի որ մեր աստվածագոր փրկությունն է:

**Ք**վարթունը Տիրոջ գերեզմանի մոտ մարդկորեն խորհող տրտմած կանանց սփոփեց.

«Փրկչի՞ն եք փնտրում, ո՛վ կանայք, խաչ Ելածի՞ն. հարություն առավ» (Մարկ., ԺԶ 6):

**Ն**րանցից, իբրև Աստծուն հույժ մերձ գտնվողներից ու վեհերից, մեզ պետք է ուսանել գիտություն և բարեպաշտություն՝ նրանցից օրինակ առնելով:

**Իսկ** ո՛վ արդյոք առաքյալի պես սրան կասի զորություն աստվածային սուրբ զորությունից, քանզի հեթանոսները ոչ մի զորություն ճշմարիտ Աստծունը չեն համարում, նույնիսկ ձյան սառեցնելն ու կրակի այրելը, մինչդեռ միակ ճշմարիտի մեջ է ամենայն զորություն:

**Ա**ս նշանն է Աստծու՝ մարդկանց հանդեպ սիրո. ինչպես աստվածային Գիրքն է ասում. «Աստված իր՝ մեր հանդեպ սերը հայտնեց. մենք մեղավոր էինք, Քրիստոս մեզ համար մեռավ» (Հռոմ., Գ 8):

**ԵՎ**՝ «Աստված այնքան սիրեց մարդկանց, մինչև իր Միածին Որդուն տվեց» (Հովհ., Գ 16):

**ԵՎ**՝ «Նրա՝ մեր նկատմամբ սերը նրանով երևաց, որ իր անձը դրեց մեզ համար» (Եփես., Ե 2):

**ԵՎ**՝ «Ոչ ոք չունի այնպիսի սեր, որ իր անձը դնի իր բարեկամի համար, ինչպես որ ես եմ դնում իմ անձը» (Հովհ., ԺԵ 13), – վկայում է Տերը:

**Ա**րդ, Նա, Ով իր անձը դրեց, սրանո՛վ դրեց, սրա՛ վրա

դրեց և տակավին սրա վրա է ու չի բաժանվում սրանից:

**Ո**ւրեմն, հիրավի, ինչպես ասվեց, Աստծու զորությունն է սա. թեև սրա վրա Գամվածը մարմնով իջեցվեց վրայից, սակայն Գամվածի զորությունը նաև այսօր է սրան միացած: Քանի որ Ով հաճեց սրա վրա բնակվել, սրանից չբաժանվեց, այլ բնակվեց, բնակվում է և պիտի բնակվի:

**Ա**յսուհետև արժանանանք հաղորդվելու սրան՝ համբուրելով այն ոչ իբրև սոսկ խաչ, այլ իբրև նույն իրեն՝ այստեղ դամված Աստծու ահավոր զորությունը:

**Ո**րովհետև իսկապես այստեղ է Նա, որովհետև Ով սրա վրա էր, այժմ էլ սրա վրա է և սրա վրա պիտի լինի մինչև հավիտյան:

**ԵՎ** եթե Հնի ու օրինակի ժամանակ այսպես է ասում. «Այս է հանգստավայրն իմ հավիտյանս հավիտենից, սրա վրա պիտի բնակվեմ, որովհետև հավանեցի սա» (Սաղմ., ԾԼԱ 14), որքա՛ն ավելի Նորում և ճշմարիտում այսպես կլինի:

**Ա**սվում է. «Լեռը, որի վրա բարեհաճեց բնակվել Աստված, և Տերն իսկ բնակվելու է այնտեղ հավիտյան» (Սաղմ., ԿԷ 17). այս խոսքը հեռու չէ իմ ասածից:

**Մ**ույնը նաև սաղմոսի հաջորդ տողն է ցույց տալիս՝ անվանելով այն Աստծու կառք, որ ելավ բարձունքները՝ գերյալներին փրկելու. այն բնությունը, որ ոչ մի կառքի կարիք չուներ:

**Ա**սվում է, թե քառադեմ էր կառքը, այս կառքը նույնպես քառադեմ է՝ խաչակառք, որի վրա բարձրացավ էմմանուելը և ստուգապես կառավարելով՝ ավար առավ գերվածներին:

**Մ**ակայն չի ասվում, թե կառքը տեր չունի, այլ՝ որ Տերը սրա վրա է:

**Ա**րպեսզի ցույց տա, թե իր՝ երկինք ելնելուց հետո այս կառքը երբեք չզատարկվեց և թափուր չմնաց և հավիտյան թափուր չի մնալու, այլ լի և զեղուն ելնումով հավիտյան չի դատարկվելու:

**Ա**րովհետև ո՛չ թե ժամանակավոր, այլ մշտնջենական Պատարագին՝ սրա վրա Մորթվածին է հավատում Եկեղեցին, ուստի Տիրոջից հրամայվեց զենման նույն խորհուրդը կատարել միշտ, անդադար, մինչև Նրա երկրորդ հայտնությունը:

**Ա**հա հարույթյուն Առածի վրա մնում են մեխերի տեղերը, տեգի խոցվածքը: «Այդ ի՞նչ վերքեր են քո ձեռքերի մեջ» (Ձաք., ԺԳ 6), – մարգարեի միջոցով հարցումին պատասխանում է. «Սրանք այն վերքերն են, որ ես ստացել եմ իմ սիրելիի տանը» (Ձաք., 13, 6):

**Ն**աև Նրա՝ աշխարհ գալու մասին է ասվում. «Նայեցին, ում որ խոցեցին» (Հովհ., ԺԹ 37). ուրիշ ի՞նչ, եթե ոչ այս սուրբ Պատարագի մշտնջենավորություն ու հավիտենականության մասին է ասում այս խոսքը հավատացողներին:

**Ք**անի որ անմահ է հավաստի զոհը, անմահ է ու միշտ կենդանի:

**Ք**անի որ «Աստված Հոր մոտ է և առանց կասկածի մարդ է երկրում, և նույնը՝ Աստված Հոր մոտ»:

**Ե**վ ինչպես որ ճշմարիտ Աստված է՝ անպարագրելի ու անբավ, որ մարմնով պարունակվեց Կույսի արգանդում և մարդկորեն ծնվեց. ըստ որում՝ ծնողն աստվածածին է, իսկ Ծնվածը՝ անպարագրելի ու անբավելի Աստված, այնպես էլ [հարկ] է Նրան համբույրով հաղորդվել և մարմնով Նրա մահվամբ մկրտվել:

**Ա**ր այս խաչը Աստծու խաչ է, խաչ Ելածը՝ անմահ, անպարագրելի ու անբավ Աստված, ոչ մի տարակույս չկա:

**Ք**անի որ եթե առժամանակյա և ոչ անմահ զոհ պատարագվեր այստեղ, ապա ժամանակավոր կլիներ նաև Նրա՝ խաչ ելնելը:

**Ա**պա ուրեմն ճշմարտապես Անմահի պատարագ, Զոհի զոհարեման տեղ և սեղան է այն:

**Ե**վ ո՞ւր արդյոք, եթե ոչ սրա վրա է Նա, Ում ահից դուրում են երևելիներն ու աներևույթները, սարսափած փախչում են դեհերն ու խավարի բոլոր իշխանությունները:

**Ա**յսուհետև հոգու՝ իբրև մարմնի աչքերով հայտնապես տեսնելով՝ հավատացի. իբրև թե հենց այժմ Հոր Միածինը սրա վրա բազկատարած մեխված երևաց:

**Ա**րձես տակավին փրկական սուրբ արյան ցողը կենարար կողից մեր աչքերի առջև ցայտելով՝ աներևույթ հրաչքով փրկագործում է բանական հողը:

**Մ**ական դեռևս ամեն ինչ չէ, որ տեսնում ենք հնազանդված Նրան, «Ով ամեն բան հնազանդեցրեց գործով» (Եբր., Բ 8):

**Ա**ւրեմն «մինչև ամեն բան լրվի» ասելով՝ հնազանդություն պետք է իմանալ, ուրեմն և՛ փրկություն:

**Ե**վ փրկություն ասելով՝ ամենքի փրկագործությունը, ինչպես գաղատացիներին ասաց. «Զեր աչքերի առաջ Հիսուսու Քրիստոս նկարագրվեց խաչը ելած» (Գաղ., Գ 1):

**Ք**ուր, որ չեք կամենում հետևել խաչին, այլ կերպ եք խորհում, քանի որ ուր խաչն է, այնտեղ է խաչվածը, իսկ ուր խաչն ու խաչվածն են, այնտեղ էլ խաչելությունն է:

**Ա**րդ, եթե խաչելության մասին լսողը և հավատացողը ականատես է ասվում, ուրեմն ուր ականատեսի խաչն է, ինչպե՞ս նրա առջև չի լինի խաչելությունը նույն հավատով:



**Ա**րդ, ուրեմն խաչ ասելով՝ այստեղ Գողգոթա ենք հասկանում, Գողգոթա ասելով՝ խաչելուծյուն, խաչելուծյուն ասելով՝ զոհաբերուծյուն ենք հասկանում, իսկ սրանով՝ փրկագործուծյուն: Գողգոթա-գագաթը կառափնատեղի է. այնտեղ է թաղված առաջին մարդը:

**Շվ** ամեն բան այնտեղ է, քանզի գագաթը ցույց է տալիս սրա՝ բարձր լինելը, և կառափնատեղին՝ սրա ձևը, դրա հետ միասին՝ նաև [այստեղ] թաղվելը, քանզի փայտով վիրավորված Ադամը նրանով իսկ ընկնելով՝ մեռավ:

**Շվ** երկնային Ադամը, գթասիրաբար կամենալով նորագործել այստեղ թաղված ծառայի և նախահոր փրկուծյունը, հավիտենական արդարուծյունը բերեց՝ նման մարմնով լուծելով նրա մեղքը և մարմնով ճաշակելով մահը՝ սպանեց նրա մահը և Գողգոթա անվանվածը երկինքներից վեր բարձրացրեց:

**Շվ** մեղքի պատճառ անսուրբ փայտը փրկուծյան պատճառի և սրբուծյուն սրբոցի, սպանման տեղը՝ կենագործման տեղի, թաղումը՝ սքանչելի հարուծյան փոխարկեց:

**Շվ** փրկուծյամբ մեղքի պատճառը վերացրեց, այն երկինքների երկինք և փառքի աթոռ դարձրեց և հավիտյան այնտեղ բնակվեց:

**Մ**րա պատիվը արդարապես ճանաչելը հավատն է հանդերձյալի նկատմամբ:

**Մ**ամենալով իրենց բարեպաշտուծյունը եւ սրա պատիվը առավել զարմանալի ցույց տալ, որպեսզի մանկամիտ մարդկանց ձգեն՝ փափագելու այն, աստվածասեր թագավորներն ու մեծահարուստները թանկագին քարերով զարդարեցին ու գեղեցկացրին այն՝ սրա պատիվը սոսկալի ու քստմենելի ցույց տալով:

**Մ**ինչդեռ սա գերագույն, աստվածային, երկնային փառքով է զարդարված և սպասավորվում ու պաշտվում է հրեշտակների յոթնարիյան դասերի կողմից, որոնք իրենց Տիրոջն են տեսնում սրա վրա:

**Մ**յն բազմաչյա սերովբեներով ու վեցթևյան քերովբեներով է շրջապատված, որոնք իմանալի ձայներով անդադար երեքսրբյան սրբասացուծյունն են երգում սրա վրա բարձրացած Աստծուն:

**Ք**անզի բոլոր աներևույթներից հավատի հաստատուն նշան երևեցնող օրինակ է, Աստծու ամենիմաստ առաջնորդ:

**Հ**ին Օրենքի խորանում քերովբեներն Աստծու հրամանով պատվում էին քավուծյան սեղանը և հովանի էին լինում նրան, որի վրա անբան ողջակեզների արյունն էր հեղվում:

**Մ**յնտեղ նախապես ակներև օրինակով սրա՝ պատիվը ցույց տրվեց:

**Շ**րկնայինների սեղան այս խաչը երկրավորներիս կողմից խոստովանվում է ճշմարիտ քավարան:

**Շվ** այս սեղան-խաչի եղջյուրները երկնային սուրբ Գառի՝ Աստծու Որդու դաստակների մեխերի փորվածքներից հոսած արյունից կարմիր ներկվեցին:

**Շվ** մենք՝ երկրավորներս, սրա վրա այսպիսի փրկուծյան համար մեր աղքատիկ խոսքով կցորդվելով մաքրագույն, երջանիկ հոգիներին, մեր փրկուծյան համար գովասանք հատուցենք այս փառավորյալ աստվածազոր սուրբ նշանին:

**Օ**րհնյա՛լ ես,

աստվածազարդ քրիստոսապսակ սուրբ փա՛յտ, որ միակն ես անշունչների և շնչավորների, կենդանիների ու

անկենդանների մեջ, որ անճառելի շնորհի հասնելով՝ փառավորվեցիր, որի համար էլ բանական էականերիս կամավոր երկրպագությունն ես պահանջում:

Օրհնյա՛լ ես,

քրիստոսապսակ սուրբ փա՛յտ, որ երկրի վրա բուսած լինելով՝ քեզ վրա իբրև պտուղ կրեցիր Անկրելիին և գերագույն երկինքների կամարների ծայրերը բարձրացար, լցրեցիր երկինքն իսկ, համայն երկնքի ու երկրի խորքերը, որ ծաղկեցիր իսրայելյան ազգի մեջ, և քո Պտղով լցվեց համայն տիեզերքը:

Օրհնյա՛լ ես,

աստվածազարդ սուրբ փա՛յտ, որ բուսելով երկրում՝ մեզ մոտեցրիր Եղեմում գտնվող և քերովբեների ու սերովբեների բոցեղեն սրերով շրջափակված փայտը և մահվան իշխանության տակ ընկածներիս համար ձրի կենդանություն ծաղկեցնելով՝ կյանքի փայտ դարձար:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, քանզի ինչպես առաջին փայտն իր գեղեցիկ ու քաղցր պտղով մահվան առիթ եղավ՝ հրապուրելով աղամածին կույսին, Կույսից ծնված [նոր] Ադամը քեզ վրա դառնություն ճաշակելով՝ կյանք պարգևեց մարդկանց:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, որ մեր գլորված նախահորը բարձրացնող ցուպ և հաստատող գավազան եղար: Որի համար էլ մարգարեն նրա անունով գոհության խոսքեր է ասում Փրկողին. «Քո ցուպն ու գավազանը կմխիթարեն ինձ» (Սաղմ., ԻԲ 4): Իմաստունը նույնպես, իր հոգու աչքերը նրան հառելով, ասում է. «Կենաց փայտ է նրանց համար, ովքեր ապավինում են նրան և վստահությամբ հենվում նրա վրա» (Առակ., Գ 18):

Օրհնյա՛լ ես,

կենա՛ց փայտ, իմանալի տապա՛ն, որ այս կենցաղի խեղդող ծովի ծփացող ալիքների միջից քեզ ապավինած հոգիներին թեթևորեն դեպի երկինք ես բարձրացնում՝ բաց ունենալով Քո վերնատան դուռը՝ սուրբ և տերունական կողը: Որի վրա Տերդ արձակված հրեշտակի՝ շյուղաբեր աղավնու փոխարեն բացված իմանալի ձեղունով մարդկային սուրբ բանական հոգին Հորը ավանդեցիր բարբառովդ, որը ձիթենու ճյուղը՝ որդեգրության պայմանն առած՝ բերում է մարդկային ազգին:

Օրհնյա՛լ ես,

աստվածազարդ սուրբ փա՛յտ, ճշմարիտ տո՛ւնկ, որ քեզնից կախված Գառով ոչ միայն Իսահակը, այլ Ադամի բոլոր ծնունդները փրկվեցին մահից:

Օրհնյա՛լ ես,

կենա՛ց փայտ, դեպի երկինք տանող իմանալի սանդուղք, որով զվարթունների դասերը մշտապես երկիր են իջնում և ելնում, և Տերը քեզ վրա հաստատվեց, որը Հակոբը հեռվից տեսավ և հրաշքից սոսկալով՝ Քո տեղը երկնքի դուռ և Բեթել՝ Աստծու տուն անվանեց:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, որ քո խորհրդով Եգիպտոսում մորթված գառնուկների արյունով պատած դռներով, որպես դեպի երկինք տանող մուտքով, իբրև օրինակ տիեզերքի անդրանիկ՝ Ադամի, փրկվեցին Իսրայելի անդրանիկները: Որից հոգիներն [առավել], քան մարմինները վերցնելով՝ ողորմեցիր [և դարձրիր] դեպի Քո ժառանգությունը, ուր կաթ ու մեղր է բխում:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, որ քո խորհրդով [Մովսեսը] ջրից վերց-

ված գավազանով ջրերին հարվածելով՝ փոխեց դրանց բնույթը և կարծրացրեց դրանք, և ժայռին հարվածելով՝ հոսեցրեց այն, և բազուկներն իբրև խաչ տարածելով՝ մարտում հաղթեց Բելիարին:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, ամպանման սյուն, որ անտանելի լույսին ու հրին քեզ վրա կրելով՝ քեզ հետևողներին մշտապես դեպի երկնային քաղաք ես առաջնորդում և լուսավորված պահում:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, իմանալի տապանա՛կ, երկնային մանանայով լցված ոսկյա սափոր, հրաշաբեր գավազան՝ ծաղկով պայծառացած: Միաժամանակ և իրար հարմարեցված երկու տախտակ, քեզ վրա դրոշմվեց անճառելի Բան Աստված, և դու քեզ վրա վերցնելով՝ կրեցիր Աստվածությամբ միավորված տերունական սուրբ մարմինը:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, իմանալի քարեղեն և քառանկյուն տախտակ, որի վրա ոչ թե մատներով տասնաբանյան դրոշմեց Աստված, այլ Սինայի փոխարեն Սիոնից Ինքը՝ անպարագրելի Աստված, ամբողջ աշխարհին շնորհեց ճշմարիտ աստվածճանաչողութունը:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, իմանալի գավազա՛ն, որ չոր լինելով՝ նույն պահին դալարեց ոչ թե արքայական կաղնին, այլ ամենքի թագավորը, որ անթառամ և երկնային ծաղիկ ծաղկեցրիր, և ոչ միայն այս, այլ նաև փրկական ջրի ու արյան կենդանի աղբյուր բխեց քո ծայրից, որով լցվեց ամբողջ տիեզերքը:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, քեզ Հիսուս Ինքը Իր վրա վերցրեց, որպեսզի մինչև արեգակի մայր մտնելն իսպառ սպանի թագավորող մեղքը, և կախվեց քեզնից՝ թևավորիցդ, որին գիրը երկճյուղ է անվանում:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, որ Հաելի փոխարեն Կույսի Որդին քեզ վրա մեխեց ծնոտը, որով [առաջին մարդը] ճաշակել էր դառնությունն ու մահը, որին զգետնելով՝ սպանեց:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, որ այս կյանքի հորձանուտի մեջ պտտվողներին կարթի նման բռնելով՝ մահվանից կյանքի ճգեցիր, որ իմանալի վիշապին կորստյան մատնող կարթ եղար՝ նրա քիմքի մեջ ընկնելով:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, իմանալի աշտանա՛կ՝ ամեն մի ոսկուց պատվական, որ իմանալի Լույսին քեզ վրա ունենալով՝ յոթ ճառագայթների փայլմամբ աշխարհի լույս եղար:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, որ սեղան եղար հրեղեն հացին, որին բարձրացնելու համար սերովբեն ունելի կարիք ունեց:

Օրհնյա՛լ ես,

սո՛ւրբ փայտ, որ վերագույն մորենու՝ Կույսի մեջ բնավորվեցիր հրաչքով: Եվ նրա մարմինն ու զգայարանները դիմացան հրին՝ հրաշալի ցամաքություն հանդես բերելով. այն հյուսիս և դալարագեղ թփի դիմանալը աննյութական հրին պատկառանքի ու զարմանքի տեղի է տալիս:

Իսկ քո հույժ դյուրակեզ չորությունը իմանալի բորբոքուն քուրայից հրագույնն առավ, հրախառն սուրբ արյան հոսմամբ իջավ քեզ վրայ, իսկ դու անկեզ պահվեցիր, առավել բարձր ես հրաչքից:

Որի համար և նա՝ Կույսը, ով իր որովայնում կրեց այդ հուրը, կամավորապես քեզ երկրպագեց:

Քանզի անտանելի, արյունոտ հրի ահավորութունից այն ժամանակ բոլոր տարերքները, միաժամանակ նաև երկիրն իր վրա գտնվողներով հանդերձ, երկինքը և նրանք, որ երկնքում են՝ հրեշտակները, սասանվեցին, մինչև իսկ կքակտվեին, եթե չնայեին, չկրեին ամեն բան կրող Հրին:

Լուսինը, ավելի ցած գտնվելով, ներքևում գտնվողներին երևութապես իր արյունը բերեց, իսկ Անփոփոխի անվանակիրը՝ արեգակը, իմանալի ծայրագույն պատվով հնար մտածեց չբերել իր հուրն ու լույսը. նա պատկառանքի քող գցեց, որովհետև ճշմարտութունը թագավորելու ժամանակ պիտի լուի ամեն մի կարծեցյալ զորութուն, որ հույժ համբավված է այս աշխարհում:

Ա՛վ փայտի շնչի հրաշքին.

իսկ դու Լիբանանից մի ձողիկ, չոր փայտ, կրելով ամենը՝ արյունը, հուրը և լույսը, և նույնութամբ ամբողջը պահելով, ելքդ, փա՛յտ, մի կողմ չդրեցիր:

Ա՛վ հրաշքին,

երկնքում անմարմնասեր լուսատուն՝ արյուն, երկրավոր և մարմնասեր արյունը քեզ վրա՝ լույս և հուր, որ նշանակում է Աստվածութունը՝ երկրում, և մարդիկ՝ երկնքում, և հրի ու արյան՝ երկնքի՝ երկիր փոխադրության այս ահավոր հրաշքը նախապես ցույց տվեցիր մարգարեին:

Ա՛վ հրաշքին,

երկնային հուրն, ի վերուստ նայելով քեզ՝ ցայտող հրալից արյունիդ, կիզվելով հանգավ: Իսկ դու, փոքր-ինչ խռիվ չոր փայտ, քեզ վրա նույն հուրն ընդունելով, անկեզ մնացիր:

Ա՛վ հրաշքին,

այդ ահավոր հրիդ երևույթից հաստակառույց երկիրը

հիմքից սասանվեց դղրդալով, իսկ արձագանքը, ճեղքելով ժայռերը, պատռեց դրանք: Իսկ դու տունկի մի ճյուղ, չոր փայտ, մանավանդ եղեգի մի ծղիկ, առանց ջախջախվելու ու անսասան մնացիր, հույժ բյուրապատիկ առավել ես հրաշքից:

Օրհնյա՛լ ես,

սուրբ փայտ, իմանալի հնձան, քանի որ քեզ վրա երկնային ողկույզը ճգմվեց՝ Նա, ով մեր կյանքի թշնամուն հնձանի պես կոխկռտեց և նրա մաղձը դուրս թափեց:

Օրհնյա՛լ ես,

սուրբ փայտ, իմանալի կամուրջ, որ մարդկանց մահվանից դեպի կյանք անցկացրիր:

Օրհնյա՛լ ես,

սուրբ փայտ, իմանալի մագաղաթ, քանի որ քեզ վրա անջնջելիորեն գրվեց մեր ազատության ու որդեգրության կտակը ոչ թե թանաքով և ոչ էլ մատներով, այլ որ անպատմելի է՝ Աստծու Որդու արյունով:

Օրհնյա՛լ ես,

սուրբ փայտ, կենարար սուրբ Հովվի իմանալի՛ գավազան, քանի որ քեզնով ընտրվելով են զատվում Եկեղեցու անարատ գառները՝ ապականողից աներկյուղ, գազանից ապահով, ճակատին արված նշանով ազատվելով ապագա Օրից և աստվածային բարկության սրից:

Օրհնյա՛լ ես,

սուրբ փայտ, անձայն բարեխօ՛ս, հրեշտակների նախատի՛պ, սրբութուն Տիրոջ իմանալի փառքի, Եկեղեցու փառք, առաքյալների պարծանք, մարգարեների հանդիսադիր,

մարտիրոսների պսակ,  
քահանաների շնորհաբաշխություն,  
վարդապետների հավատի սահման,  
թագավորների հաղթանակ,  
իշխանների քաջության հույս,  
քրիստոսասեր զորքերի առաջապահ,  
առաջամարտիկների  
քաջալերություն,  
նահատակների զորավիգ,  
վտանգվածների օգնական,  
պարտվածների ապավեն,  
հալածվողների ապաստան,  
փախչողների պատսպարան,  
շվարածների խաղաղարար,  
նեղվածների լիացուցիչ,  
վշտացողների մխիթարություն,  
ցնծացողների գոհություն,  
մեծատուններին զգաստացնող,  
աղքատների անկողնուտելի գանձ,  
անզգամների զգաստություն,  
անկարգների խրատ,  
երիտասարդների պահպան,  
մանուկների դաստիարակ,  
ծերերի ժողովարան,  
ճանապարհորդողների առաջնորդ,  
հոգնածների հանգիստ,  
նավողների նավահանգիստ,  
մոլորվածների դարձ,  
տառապողների ապավեն հարկ,  
այրիներին հոգ տանող,  
որբերին խնամող,

միայնացածների պարիսպ,  
ճգնավորների ժուժկալություն,  
ապաշխարողների իղձ,  
հիվանդացածների բժշկություն,  
դեերին սարսափեցնող,  
հավատացյալների  
անձեռակերտ զենք,  
մեղավորների քավարան,  
անմեղների պահպան,  
ողջերի փրկարան,  
մեռածների հիշատակի հույս:

Մըդ, ամեն բանով ամեն բանում  
օրհնյա՛լ ես, սո՛ւրբ փայտ,  
որ ամենի նորոգման ժամանակ,  
երբ ամեն բան հրով փոփոխվի,  
երբ ավարտվի այն ահեղ,  
մեծ ու երևելի Օրբ,  
ուշացող Փեսայի երևալու ժամանակ՝  
վերջին գիշերը, դու երկնայինների  
առջևից ընթացող կարապետ և  
հրավիրակ, ավետիսը կբերես  
երկնավոր Թագավորի գալստյան:

Մյնժամ անմատույց լույսով լուսավորելով աշխարհի  
չորս ծագերը՝  
ճառագայթարձակ կծագես արևելքից՝ իսպառ լուսնե-  
նով լուսատունների կարծեցյալ ճաճանչները:

Մնտանելի փառքի Լույսն այնժամ քեզ վրա կերևա՝  
անհավատների հանգիմանության  
և հավատացյալների պարծանքի,

անսուրբների դատապարտության  
և բարեգործների գովության համար:

**ԵՎ** հարուժյուն առած սուրբերին Քրիստոսով կենդանիների՝

Փեսայի լուսազգեստ բարեկամների  
հետ միասին հարսանյաց հանդես կհրավիրես:

**Ի**սկ մոլորվածների ու ծուլերի համար, որոնք չեն երկրպագում քեզ,

անլույս ու հարակեզ հնոց կդարձնես հուրը, որով աջ ու ձախ կողմերի պիտի բաժանվեն:

**ԵՎ** երբ ամեն ոք, նա, ով մաքրությամբ իրեն արժանի դարձրեց, պսակվի,

և նա, ով անփույթ գտնվեց իր փրկության նկատմամբ, օգնության կարիք ունենա,

երբ կհասկանան, որ Համագոյակցի՝ ամենքի Հորը, հնազանդվելը

Որդու մարդեղութունն է քեզ վրա հնազանդվելու չափ, Աստված կլինի ամեն բան ամեն բանում:

**Ե**րբ ամեն բան ավարտվի, այնժամ բոլորի կողմից պիտի խոստովանվես փրկության մեն-միակ գործիք՝

քրիստոնյաների պարծանքի և Քրիստոսի փառքի համար:

**Ա**յստեղ մեր Տիրոջ և Փրկչի՝  
Հիսուս Քրիստոսի այս պայծառացյալ  
և պատվական սուրբ նշանով  
ավարտում եմ խոսքս.  
Նրան փառք  
հավիտյանս.  
ամեն:

## ՆԵՐՔՈՂ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ

**Մ**եր աղոթքներով հայցենք և մեր ստացած օգնությամբ, ըստ կարգի, երգով դեպի նույն խոսքն ընթանանք:

**Ա**ւրախացի՛ր, Լույսի՛ խորան, քեզ հասավ գարնանային ժամանակը. պայծառ է երկինքը, բարձր է արեգակը, հստակ է բոլորակ լուսինը, մաքրագույն են աստղերի բույլերը: Ծովի եզրերին դաշնավորվում են ալիքները, այսինքն՝ քո նորոգման կրակի պայծառությունը, և անխռով խաղաղությունը Հորից հաստատվում է քո մեջ:

**Ա**ւրախացի՛ր, Լույսի՛ խորան, հարավի եղեմի օրինակ, արքայաձեռն երկի՛նք, դեպի քեզ եկավ Մեսիան՝ ճանապարհորդելով Փառանից:

**Ա**ւրախացի՛ր, Լույսի՛ խորան, որ [քեզ] վրա իրենց թևերով ծածկված սերովբեներն են անտեսանելիորեն իջնում՝ ճեղքել անցնելով վերին օդը, այսօր քո մեջ քողաբաց ու բացահայտ տեսնում ենք բոլորի Տիրոջը:

**Ա**ւրախացի՛ր, Լույսի՛ խորան, Զաքարիան քո մասին է հայտնում՝ ասելով. «Ուրախ եղիր հույժ, դ՛ուստր Սիրոնի, և ցնծա՛, Երուսաղե՛մ, ահա գալիս է քո Թագավորը քեզ մոտ» (Ձաք., Թ՝ 9): Այս [ասելով]՝ ցույց է տալիս, որ Թագավորական զարմից Թագավորը, ավանակի վրա նստած, դեպի քեզ գալիս, իսկ ավետիան ընդունում է Վերին Երուսաղեմի դուստրը:

**Ա**ւրախացի՛ր, Լույսի՛ խորան, եբրայեցի մանուկները ձիթենու ճյուղեր էին մատուցում՝ Աստծուն ընդառաջ ելնելով և աղաղակելով. «Օվսաննա՛, օրհնյալ լինես դու, որ գալիս ես Տիրոջ անունով» (Հովհ., ԺԲ 13):

**Ա**ւրախացի՛ր, Լույսի՛ խորան, որ Քո առջև ճյուղեր և

ձորձեր սփռողների փոխարեն քո ղռներով քո մանուկներն են մտնում և արժանի դարձած բոլոր առաքիներին ու ուղորմածները նոր սովորած եղանակով սերովբեների հետ սրբասացությունն են կատարում մեր մեջ:

Աւրախացի՛ր, Լույսի՛ խորան, քանզի երանելի առաքյալներին հնազանդելով՝ լուսավորեցին տիեզերքը՝ ուղղելով այն Աստծու Միածին Որդու ետևից, որի պատճառով էլ մշտապես քո մեջ են գերիվեր գտնվողները, և քո խորանի պատիվը բարձրանում է, իբրև երկնքի կամարի զարդը:

Ա՞ւր են արդյոք մեզնից օտարացածները, որոնք նմանվում են ցորենի բարակ խրձերի, կամ ժողովուրդները, [որ] սահմանափակում են նրա անբավ լայնությունը (որ բյուրավոր հրեշտակներ են մտնում սրա մեջ՝ երգելով երաժշտական և նոր օրհնություններ). նրանք այսօր պապանձվելով չարին են հետևում, նմանվում են կեղծավոր ու որովայնամոլ մարդկանց՝ [ամենեկին] չհիշելով Պողոսին, [որ ասում է]. «[Աստծու] տաճարն ապականողին Աստված պիտի ապականի» (տե՛ս Ա, Կոր., Գ 17), իսկ ապականված [տաճարում] Աստված ինչպե՞ս պիտի բնակվի: Որովհետև անգամ երկրավոր թագավորների սովորությունն է՝ ատել ավերված ու լքված ապարանքները. դրանք ոչ միայն իջևանելու համար արժանի չեն համարում, այլ նաև ճանապարհորդելիս նրա մոտով իսկ չեն անցնում՝ անարգանք համարելով իրենց փառքի և մեծության համար: Երանելի Հովհան [Ոսկեբերանը] նույնպես հարում է նույնին՝ սկսելով երկնքի տարրերից, որոնց մասին աստվածային Գրքերն ասում են, թե օրհնում են Աստծուն, [Աստծուն օրհնում են նաև] երկրի վրա գտնվող սողուններն ու գազանները՝ նույնպես (տե՛ս Դաճ., Գ 62-63, 79), որին արժանի չի համարում չարագործների բերանները, քանի որ. «Չար գանձարանից բխում են չարիքներ» (տե՛ս Ղուկ., Զ 45): Աստվածաբանը, իր Հարության

ճառում հիշատակելով այս, ասում է. «Մաքրությո՛ւն պողաբերենք՝ պատարագելով բարձրագույն սեղանի վրա, և դեպի վերնային գնդերը անցնենք»: Եվ չի ասում, թե չար և աղանդավոր մարդկանց սրտի վրա, որոնք բարու փոխարեն չարիք են գործում: Այնպիսիների մասին առաջին մարգարեն ասում է. «Սակայն մեղավորին Աստված ասում է. «Իսկ դու ինչո՞ւ ես պատմում իմ արդարությունը» (Սաղմ., ԽԹ 16): Մեղավոր է անվանում նրանց, ովքեր մեղք գործեցին՝ Աստծու Միածին Որդուն [չհավատալով] և հեռացան Նրա պատվիրանից: Այժմ տե՛ս սողունի իմաստությունը. իր բոլոր անդամները վերավորել է տալիս սպանողին և [միայն] գլուխը [ողջ] պահելով՝ առողջացնում է թշնամու վերավորած բոլոր անդամները: Երանելի Դավիթն էլ մեղանչեց, բայց օրհնության երգը երբեք չզաղարեց նրա բերանում, որովհետև հաստատուն էր նրա հույսը Աստծու սիրո հանդեպ: Տե՛ս, թե մարգարեն որքան էր հանդիմանում նրան, իսկ նա հնազանդվում էր պատվիրանին, մինչև ըստ օրենքի՝ կատարյալ դարձրեց իր անկատարությունը: Սույնը Սուրբ Հոգով երգողից սովորում են նաև մերոնք, խոստովանությամբ և ապաշխարությամբ կատարյալ են դարձնում իրենց անկատարությունն ու թերությունը և չեն հեռանում Ավագանի շնորհների որդեգրությունից: Իսկ հեռացած մանիքեականները նմանօրինակ սեր են անվանում իրենց զազրելի գործերը՝ միմյանց առջև մարդահաճություն անելով, և դավանում ու հավատում նրան, ինչն սպանում է առավել, քան երկսայրի սուրը: Այնպիսիների մասին է աստվածաբանն ասում, թե՝ «Ոմանք իրենց փրկությունը վաճառեցին սակավ շողոքորթությամբ»: Քանզի նրանք, ովքեր պատերազմի ժամանակ կամ գազանի ձեռքով են վերավորվում, բժիշկներն առողջացնում են նրանց վերքերը, բայց բժիշկների դեղերն անօգուտ են նրանց համար, ովքեր



կտրել են տալիս իրենց գլուխը կամ վիրավորել են տալիս իրենց սիրտը: Ճիշտ այդպես էլ նրանք են կտրվել հավատի գլխից: Եվ ինչպես որ եթովպացին չի կարող իր սև մաշկը սպիտակեցնել, կամ լեղին՝ փոխել իր դառնուկությունը, և կամ ինչպես որ անգգամը չի կարող հեզ լինել, այդպես էլ մի՛ հավատացեք նրանց քծնող խոսքերին, որովհետև չարի խորհուրդները կատարողներ են նրանք: Պատշաճ չէ, որ անմեղ գառը բնակվի անապատի գազանների, աղավնու ձագը՝ գիշատիչ հավքերի և կամ հավատացյալը՝ անհավատների հետ: Հալածե՛նք նրանց և դարձյալ փախչե՛նք [նրանցից], որովհետև կարճ է ժամանակը և օրըստօրե դեպի չարն է գնում: Իսկ մենք զգո՛ւյշ լինենք, խորչե՛նք օտարներից՝ [Եկեղեցուց գատվածներից], հաստատո՛ւն պահենք հավատի գլուխը: Եկեղեցու շնորհներով նույն երգով կրկնենք սուրբ խաչի նշանին.

**Ա**րարձրագահ դիտանո՛ց, առաքյալների պատվի փա՛ռք, հավատի հաստատության կրո՛ղ, մարգարեների երգարան, ոսկեփողյան ձայնի նվագատեղի, թագավորների օծարան, հաստատության գլխի թագ, քահանաների հայրենի գանձի շտեմարան, վարդապետների հոգևոր ցողն է անձրևում քո մեջ, հայրապետների հանդիսարանի տեղ, մարտիրոսների վկայարան, և նրանց հիշատակը միշտ կատարվում է քո մեջ: Խոստովանողների ամուր քաղաք, մեղավորների քավարան, ապաշխարողների թողութայան տեղի, կրոնավորների հաստատուն հույսի բնակարան, մեռելների հիշատակը խնդրող, սգավորների մխիթարություն, արդարների հանգստարան, ծերերի սփոփանք, մանկամարդ երիտասարդների հոգևոր վարժարան, կույսերի մարգարտե գարդ, ամուսնացածների բրաբիոն՝ մանյակի ծայրին, զորավարների զորություն մարտում, պատերազմող քաջ ռազմիկների հաղթանակ թշնամիների դեմ, նեղվածների նավահանգիստ,

ճանապարհորդների երթ և խաղաղություն դարձ, այրիների հարսնարան, երկնային ապավեն և փրկություն հույս, որբերի հաստատուն վեմ օգնական, մանուկների դաստիարակ, սատանային սպանող, լեգեոն զորքերին հալածող, այսահարների ամուր պարիսպ, հիվանդների առողջություն:

**Մ**րդ, քանի որ քո մեջ են հաստատվում այս ամենը, ուրախացի՛ր, Լույսի՛ խորան: Ստեփանոսը՝ աշխարհի նշխարը, տեսավ բոլորի անբովանդակելի Հորը, անսկիզբ, Հորը աթոռակից և հավասար Որդուն, Նրանց համագո և հավասար Հոգուն:

**Ա**ւրախացի՛ր, Լույսի՛ խորան, քեզ տեսավ սուրբ Գրիգորը. կամարածև լույս երևաց. և նա վկաներին [տեսավ] նրա մեջ պսակված, [տեսավ] գառների փոխված այծերին, և ոսկե մուրճը [տեսավ], որ բախեց, և թնդացրեց լայնատարած ծովի լայնությունը, սարսելով դողացին անդունդների սանդարամետները, որովհետև ըստ օրինակի՝ ըստ նախնի Մովսեսի էր անում. նրա օրինակով Փրկչի նմանությունը վեր բարձրացնելով՝ կանգնեցրեց Հայաստանյայց ընկած ազգը. շինեց սուրբերի վկայարանները և բոլոր ուխտատեղիները, ավերեց քանդեց կուռքերի մեհյանների հիմքերը և շինեց ու հաստատեց Ավագան, մկրտեց հեթանոսների սևաթույր գայլացած ազգերը և սպիտակեցրած աղավիններ ու գառներ դարձրեց՝ ըստ առաքյալի այն խոսքի, թե՛ «Ուր մեղքը շատացավ, շնորհներն է՛լ ավելի շատացան» (Հոմ., Ե 20): Ուսուցանեց թագավորին և նրա բռնակալական զորությունը անմեղ մանկան վերածեց, աղաչեց Արարչին, և նրա գազանակերպված մարմինը մաքուր ու քրիստոսագրեցս դարձավ, քարոզեց հեթանոսներին՝ սկսելով [աշխարհի] լինելության սկզբից, մինչև լրումը կենահարավեր ժամանակի, բացեց նրանց խոպանացած ու վիմափակ ականջները: Կանգնեցրեց սուրբ խաչի նշանը և հոր-



դորեց պսակեց Եկեղեցիները, զարդարեց դրանք մետաքսե ոսկեթել վարագույրներով, կարգեց քահանաներ և սպասավորներ. և բոլորի հետ օրհնում էր Աստծուն հավիտյան:

**Ա**ւրա՛խ եղիր, Լույսի՛ խորան. երբ բոլոր Եկեղեցիները փոխվելով միանան մորը՝ Վերին Սիրոնին, մեզ արժանի՛ դարձրու Քրիստոսի հոտի բրդատու և ընտանի ոչխարների հետ միասին մտնելու քո գավիթը:

**Ա**նդունի՛ր և իմ այս նվաստ վերտառությունն էլ և արժանի՛ դարձրու հաղորդվելու մաքրափայլ ոսկենման մեկնիչներին, որպեսզի սերմերից բուսնելով և արմատներ նետելով՝ ընձյուղենք զարնանային ժամանակում (որ դատաստանի մեծ Օրն է)՝ հաստատուն հույսով ապաստանելով սուրբ խաչի զորությանը և սուրբ Աստվածածնի բարեխոսությանը շնորհներով և մարդասիրությամբ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս. [ամեն]:



## ՄԱՄԲՐԵ ՎԵՐԾԱՆՈՂ

## ՓՐԿՉԻ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ՆՐԱ՝ ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐԸ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Լ**ուսից փայլող լույսը պայծառացնում է լույսը սիրողների աչքերը, իսկ երկնային և արարչական լույսը ծագեց ողջ տիեզերքում: Լույս էր օրենքը, ինչպես խոստովանում է երաժշտապետը՝ Դավիթը. «Տիրոջ պատվիրանները լույս են և լուսավորում են մեր աչքերը» (տե՛ս Սաղմ., ԾԺԸ 105): Լույս էր Հովհաննես կարապետի մկրտությունը և մեղքերից մաքրում էր խոստովանությամբ, մարմինները՝ ջրով լվանալով, և ավելին էր, քան քահանայական մկրտությունը: Իսրայելի Լույսը աստվածային Հայտնությունն է և մկրտությունը: Սա է բարձրագույն Լույսը և վերասացյալ լուսավորների լույսի Լույսը, քանի որ Եռյակ զանազանությամբ Հոր Խոսքը երևաց նախ մարգարեական փայլող լուսավորությամբ, որ բազմաստվածության գիշերի մեջ գուշակում էր Նրա գալուստը: Երկրորդ՝ անապական Կույսից մարմնով ծնվելով՝ Աստված Հավաստի դարձրեց կանխագուշակությունը նախահայրերի, որոնք արարչական Հոգով Հայտնեցին Կույսի Հղության, [Տիրոջ]՝ Բեթղեհեմում ծննդյան, Եգիպտոս փախչելու, Բանի տնօրինությունների և աստվածաբար մեր մեջ կենցաղավարելու՝ Եռյակ [Միության]՝ տիրապես և աստվածաբար Հայտնության մասին: Եվ երկուսը գերազանցելով՝ առավել շնորհով հարստացավ, քանի որ ճշմարտապես վերցրեց մեր բնությունը. մեր բնությունից իսկ ծնվեց և երեսուն տարի մնաց այս ժամանակի մեջ, որում աստվածային հրաշքներ չգործեց, որպեսզի խակ և անժամանակ չերևա օրենքի իշխանության տակ գտնվողներին վարդապետելը, լուծեց նախանձողների [նախանձի] պատճառները և

ավարտելով սահմանված մարմնավոր օրերը՝ կոտրեց չարակնողների հակառակասեր կամքը: Առաջին մարդու հանցանքի պատճառով մեղավոր [մարդկուլթյան] համար առավ նրա կերպարանքը, աստվածապես երևաց երիտասարդ նախաստեղծի նույն տարիքով, որպեսզի երկու վկաների օրինակով հավաստի դարձնի Արարչի՝ բարեբանուլթյամբ հայտնուլթյունը: Քանզի [Աստծու խոսքը] իսկապես մարմնացավ՝ պահելով բովանդակ մարդկային [կյանքի] հատվածների ողջ կարգը. հանձն առավ Կուլթի դաստիարակուլթյամբ մանկուլթյունը. բոլորի բնուլթյան Աղբյուրը, մանուկ լինելով, անխոս ձևացավ, ուլթերորդ օրն ըստ օրենքի թլփատուլթյուն ընդունեց, քառասուններորդ օրը բերվեց տաճար, որին աղավնիներ ընծայեցին, երեսուն տարեկանում մկրտվեց Հովհաննեսի կողմից և ավարտեց ավանդը գրային ժողովարանին, որպեսզի չարիք նյուլթողները՝ օրենքով պարծեցողները, հայհոյուլթյան պատճառ չունենան: Քանի որ Հովհաննեսի [մկրտուլթյունը] սրբում էր մարդկային բնուլթյան հոգին ու մարմինը և օրենքի ժողովրդի հոգու և մարմնի մաքրուլթյունը ուղիղ ճանապարհ էր դարձնում երկրի վրա մարմնացած Աստծու համար: «Ես խոսքի ձայնն եմ անապատում» (Հովհ., Ա, 23): Խոսքի ձայնն ասելով՝ իր կանխահրավեր կանխագուշակ կոչն է ցույց տալիս, իսկ անապատ ասելով՝ առաքյալների՝ դեռևս անհայտ և սկիզբ չառած քարոզուլթյունը: Դարձյալ՝ անապատ, որովհետև սուրբ հայրերը մարգարեացան քաղաքներում և թագավորների դռների մոտ, իսկ մեծ Հովհաննեսը՝ ամայացած վայրում՝ Սաղիմայում, և Հորդանանի ափերի մոտ, վայրենու պես և բացօթյա. գնում էր և բարձր ձայնով ասում. «Ապաշխարեցե՛ք, որովհետև մոտեցել է երկնքի արքայուլթյունը» (Մատթ., Գ 2, Դ 17): Ապաշխարել՝ իր կողմից մկրտվողների՝ իրենց գործած մեղքերի համար զղջումն էր

անվանում, իսկ արքայուլթյուն՝ Հիսուսի Աստվածուլթյունը. այն Նրա մկրտուլթյան ժամանակ հայտնի դարձրեց արարչական Զորուլթյունը. Զորուլթյուն Սուրբ Հոգին խոստովանեց բոլորի Հոր՝ ամբողջ տիեզերքում [Նրան] հաճելը, իսկ նույն ինքը՝ մկրտիչը, Նրա՝ մկրտուլթյան գալու ժամանակ ասաց. «Ահա Աստծու Գառը, որ վերացնում է ողջ մարդկուլթյան մեղքը» (տե՛ս Հովհ., Ա, 29): Սոսկալով աստվածային Հրից՝ նա պատկառեց մկրտել Նրան և ծառայաբար ասաց Նրան. «Ի՛նձ պետք է մկրտվել բոլորին կյանք Տվողիցդ, և Դու՝ անճառելի Արարիչդ, նվաստանո՞ւմ ես արարածիս բնուլթյան առջև: Ի՛նձ է պետք գալ Քեզ՝ Սուրբ Հոգին Տվողիդ, ողջ տիեզերքը Վերածնողիդ, երկնավոր Հոր որդեգիր Դարձնողիդ և մեր անունները կյանքի գրքում Գրողիդ մոտ: Սուրբ Հոգին Տվողդ, գալիս ես ինձ մոտ Դու, որ չես ճանաչում մեղքը և այրում ես մարդկային անօրենուլթյունները. Արարի՛չդ արարածների, նվաստանում ես նյուլթիս՝ ձարտարապետդ, ծառայիս՝ Տերդ, Քո առջևից գնացողիս՝ երկնային Արքադ, Աստվածդ՝ մարդուս, Հոգին Տվողդ՝ դեպի ապաշխարուլթյուն [կոչող] մկրտչիս, Տերդ՝ սպասավորիս: Չե՛մ փորձի, ասում է, մահկանացու բնուլթյամբս հպվել հրեղեն Բնուլթյանդ, որովհետև «լափող կրակ ես» (Բ Օր., Դ 24), Աստվա՛ծ մեր» (տե՛ս Մատթ., Գ 14): Խոստովանելով Պետրոսի՝ առաքյալների մեջ մեծի նման, որ սոսկալով կիզող բնուլթյունից՝ զատկական ընթրիքի ժամանակ հրաժարվում էր աստվածային սպասավորուլթյունից (տե՛ս Հովհ., ԺԳ 8): Այստեղ Հովհաննեսն էր պատկառում Արարչի գլխին ջուր լցնել, այնտեղ Պետրոսն էր սոսկում Տերունական ձեռքից սպասավորուլթյուն ընդունել, երբ Տերը կամենում էր նրա ոտքերը լվանալ: Այստեղ Արարիչը պատասխանում է՝ ասելով. «Հիմա պետք է անել այս» (տե՛ս Մատթ., Գ 15), այնտեղ ասում է. «Եթե իմ աստվածային ձեռքերով ոտ-

քերդ չլվանամ, ինձ հետ որդեգրութեան շնորհ չես ընդունի» (տե՛ս Հովն., ԺԳ 8): Եվ ծառայապես հնազանդվեց երկուսին էլ. այստեղ Հովհաննեսը [տերունական] հրամանով հարկադրվեց մոտենալ և սարսափմամբ ջուր լցրեց աստվածային գլխին, այնտեղ Պետրոսը, ծառայաբար ոտքերը Տիրոջ առջև պարզելով, սոսկաց արարչական ձեռքերի [սպասավորութունը] խափանել:

Եվ հայտնութեան այս խորհուրդը սկիզբ առավ մկրտութունից. Հովհաննեսը մկրտեց ոչ ըստ կարապետական այն գոչման, թե՛ «Մարմնով ու հոգով մաքուր վարք ունեցե՛ք, ձեր մեջ ուղիղ ճանապարհ պատրաստեցե՛ք Արարչի համար» (տե՛ս Մատթ., Գ 3): Արդ, բոլորի Արարիչը, Իրենից առավել ո՞ր բարձրագույնի համար մաքրեր Իր անձը. եթե Հովհաննեսը, որ բարձր ձայնով ասում էր. «Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը» (Մատթ., Գ 3), Նրան նկատի ունեն, ապա բոլորի Արարիչը ումի՞ց պատկառելով է հայցում մկրտութուն. կարապետի խոստովանութունից հայտնի է. «Ե՛ս եմ մկրտութուն հայցում Քեզից՝ Սուրբ Հոգի Տվողիցդ, Հոգևորիցդ՝ օրինավորս, Հոգուցդ և Հրիցդ՝ ապաշխարութեան [կոչող] կարապետս, Ավագանից վերստին Ծնողիցդ և [Հորը] որդեգիր Դարձնողիցդ՝ խոստովանութեամբ և մարմնի մաքրութեամբ լվացողս»: Չի ասում, թե հոգու և մարմնի մաքրութեան և կամ ինձնից ավելի բարձր լինելուդ համար եմ քո կողմից մկրտվում, այլ որպեսզի քո՝ կարապետիդ մկրտութեամբ կնքեմ ամեն բան և հայտնապես սկզբնավորեմ Իմը՝ ավետարանականը: Իսկ որդեգրութեան համար կհրամայեմ [քո] մկրտութունից սոսկ ջրով մկրտել և իբրև Արարիչ՝ մկրտվածներին կկոչեմ ապաշխարութեամբ մկրտվել Սուրբ Հոգով և հրով: Եվ ասվում է, թե աստվածային հայտնութունը հավաստի դարձավ երկու վկաներով. երկնքից՝ Հոր ձայնով, [որ ասում

էր]. «Դա՛ է իմ սիրելի Որդին, Նրանով հաշտվեցի աշխարհի հետ» (տե՛ս Մատթ., Գ 17), և երկրից՝ ճշմարիտ կարապետիդ այն խոսքով, թե՛ «Սա է Աստծու Գառը և ամբողջ աշխարհի մեղքերը վերացնողը (տե՛ս Հովն., Ա 29): «Եվ կարապետիդ աշակերտողներին արարչաբար կկորզեմ իմ Ավետարանի սպասավորութեան համար»: Քանզի երկու վկաների՝ Արարիչ Հոր և կարապետ Հովհաննեսի միջոցով և երիտասարդ տարիքով Հիսուս կնքեց գրավոր օրենքը և աստվածապես հայտնեց հոգևորը, իսկ Հովհաննեսի մկրտութունը, որ վեր էր քահանայականից, գիրը հոգու փոխեց, կարապետականը՝ ավետարանականի, ծառայականը՝ տիրականի, մարդկայինը՝ աստվածայինի: Քանի որ տերունական բերանը Հովհաննեսին խոստովանեց ճրագ, Իրեն՝ արեգակ (տե՛ս Հովն., Ե 35), օրինականների ժողովարանի անօրինութունը՝ գիշեր, իսկ սաղուկեցիներից ու փարիսեցիներից մկրտութեան եկողներին ուրախանալ է ասում նրա՝ Ջահի կարապետութեամբ, իսկ Իր՝ մկրտութեան գալը Արեգակի ելք [է անվանում]: Ինչպես որ գիշերն է լուսավորվում, երբ վառվում է ճրագը, այդպես էլ նսեմ օրենքի մանուկները թող ուրախանան Հովհաննեսի կարապետութեամբ: Իսկ երբ ճշմարիտ Արեգակը՝ Հիսուս, եկավ մկրտվելու, վկայվեց Հոր կողմից և հայտնեց արեգակնափայլ վարդապետութունը, նսեմացավ Հովհաննեսի կարապետական ճրագը Հիսուսի ավետարանական արեգակնափայլ վարդապետութեան առջև, և տեղի տվեց ծառայականը արարչականի հանդեպ, ինչպես ճրագը՝ արեգակի: Ասում է՝ բազում են երկնավոր Հոր որդիները. որդի անվանում է հրեշտակներին, մարդկային ազգից՝ Իսրայելին (տե՛ս Ելք, Դ 22), իսկ քահանաներին ու թագավորներին անվանում է «պարարտութեան որդիներ» (տե՛ս Զաք., Դ 13), այդպես սուրբ Ավագանում մկրտվածներին է Իր որդիները անվանում, իսկ ճշմարիտ Որդի՝ Հորից չբաժան

վելով մարմնացած Արարչակից Խոսքին, Որին Իրեն բոլորից առավել սիրելի, Իրեն Արարչակից ու Փառակից է անվանում, որով հաշտվում է աշխարհի հետ: Քանզի ո՛չ նահապետները, ո՛չ մարգարեները, ո՛չ քահանայական ու կարապետական մկրտությունը Հորը աշխարհի հետ հաշտեցնել չկարողացան, այլ միայն Միածինը՝ Հոր Փառակիցն ու Համագոյակիցը, Սուրբ Հոգու աստվածային հայտնությունը Արարչին հաշտեցրեց արարածների հետ և քակտեց առաջին մարդու պատվիրանազանցությունը [առաջացած] միջնորմը, և իրար խառնվեցին հրեշտակների ու մարդկանց՝ Աստծուն [ուղղված] բարեբանությունները: Մեզ համար ի՞նչ [խորհուրդ ունի] Սուրբ Հոգու աղավնակերպվելը տերունական մկրտության ժամանակ: Նախ՝ որպեսզի սպասավորի ջրից ծնվածին, Աստվածություն՝ ջրի մեջ մկրտվելու ժամանակ: Երկրորդ՝ որպեսզի արարածների Անդրանկին՝ Հիսուսին, երկրից թռչունը ծառայապես սպասավորի, երրորդ՝ որովհետև երկնային և արագաշարժ Սուրբ Հոգուն օդում թռչող բնությունը բոլոր կենդանիներից ավելի արագ կսպասավորեր: Հաստատ[վում] է այդ ծառայությունը Հովհաննեսի այն խոսքով, թե՛ «Տեսնում էի Սուրբ Հոգուն, որ աղավնակերպ իջնում և հանգչում էր աստվածային գլխին» (տե՛ս Հովհ., Ա 32), որովհետև նյութական բնության Համագոյակից են ասում տերունական և ազատ, Արարչակից Սուրբ Հոգուն, քանզի եղածներից ո՞վ կճանաչի Անեղի մարմնանալը, եթե ոչ Նույն Ինքը՝ Սուրբ Հոգին, համափառ և անբաժան մի իշխանությունը: Քանզի աստվածային երիտասարդացած Խոսքը՝ Սուրբ Հոգու և Անեղի Համագոյակիցը, անճառելի բնությունը [գալիս էր] մկրտվելու ոչ թե Իր՝ Արարչի մկրտվելու, այլ մկրտվողներին [Իրեն] որդեգիր դարձնելու համար: Քանզի ինչպես որ անմեղ լինելով՝ կերպարանակից եղավ առաջին մեղավոր

մարդուն, այդպես էլ, անմեղ լինելով, մկրտվում է իբրև մեղավոր, որպեսզի քավի մեղավորների մեղքերը, որովհետև Պողոսը նրան բոլոր արարածների անդրանիկ խոստովանեց (տե՛ս Կողոս., Ա 15): Քանզի Նա, ով անսկիզբ էր Իր Աստվածությունը, մարմնանալով՝ սկիզբ ունեցող եղավ, և ժամանակներից հետո Ծնվածը արարածների անդրանիկը եղավ Իր անսկիզբ Աստվածության պատճառով, որպեսզի Արարչին և արարածների Անդրանկին երկնային մասերի անդրանիկը՝ ջուրը, շտապի ծառայապես սպասավորել: Քանզի ջուրը կար, երբ ի սկզբանե բաժանում էր երկու տեսակները՝ երկիրը՝ իր ոլորտի պարունակությունը, և ամրացած տարածության վրա համասփյուռ երկինքը: Եվ որպեսզի ջրի միջոցով Իրեն Աստված երևացնի, ջուրն է սպասավորում Միածին Որդու մկրտությունը: Որից սկիզբ է առնում իշխանությունը՝ ամբողջ աշխարհը վերստին ծնելու՝ իբրև [երկնավոր] Հոր որդեգիրներ: Որովհետև ամենասկզբում գոյացածը ջուրն էր, որը Հին Ուխտում քահանայական մաքրությունն էր ծառայում, իսկ կարապետական [մկրտության ջուրը] սրբում էր մեղավորների մեղքերը: Իսկ տերունական մկրտության ժամանակ իշխանությունն ստացավ ոչ միայն մեղքերը քավելու, այլ նաև արարչական մասն ընդունելու որդեգրապես: Քանզի ըստ Մովսեսի՝ երևացող արարածների մեջ առաջին ստեղծվածը ջուրն է, իսկ Հոր Խոսքն ու արարածների Անդրանիկը այս աշխարհում Իրեն հայտնեց ջրի մեջ և ջրից հոգեպես ծնեց ամբողջ մարմնավոր աշխարհը, որը երաժշտապես Դավիթը, մարգարեական հոգով կանխավ տեսնելով, ասում է. «Օրհնեցե՛ք Տիրոջ անունը, ջրե՛ր, որ վեր եք երկնքից» (տե՛ս Սաղմ., ԾԽԸ 4): Քանզի թեպետև երկրի վրա հոսող Հորդանանի վտակը շարժվում էր երկնքից էլ վեր, քանի որ Նա, Ով նստում էր երկնքում և երկրի վրա, իրենից ընդունեց մկրտություն:

Երկնքում Նստողը երկրավոր մարդ [եղավ]՝ երիտասարդի պես, և երկրաքարչ ջուրը, թափվելով աստվածային մարմնի վրա, երկնքից գերիվեր [եղավ]: Դրա համար էլ համարձակախոս Եսային ասում է. «Ահավասիկ երկար տարիներ ու բազում ժամանակներ անց պիտի գա Տիրոջ անունը» (Եսայի, Լ. 27), և ապա շարունակում է. «Եվ նրա հոգին, ինչպես ձորը լցվող հորդահոս հեղեղ» (Եսայի, Լ. 28): Երբ մարգարեություններն իրենց լրումին հասան, և օրենքը կնքվեց, Տիրոջ ծնվելու լուրը հասավ Հերովդեսին ու քահանայապետին: Իսկ Հորդանանի ջրով մկրտության ժամանակ Սուրբ Հոգին, Հոր հետ ձայնելով, բացահայտորեն ասաց. «Դա է իմ սիրելի Որդին, Դրանով հաշտվեցի աշխարհի հետ» (տե՛ս Մատթ., Գ 17): Քանզի Հորդանանի խորությունը ձոր է ասում, որի բաց տարածությունը լցնում-լրացնում է՝ Հորդանանի ջրով մինչև պարանոցը ծածկելով տերունական մարմինը և նրանից վեր կարապետի աջով պատկառանքով մկրտվելով. այն ամբողջ աշխարհը կործանած ջուրն էր, որ աստվածային հրամանով վերացրել էր աշխարհի վայելչությունը: Իսկ այստեղ երիտասարդացած Աստված Իր մարդասիրության ու բարեգլխության նշանը հայտնում է ջրով, որպեսզի Իր՝ ջրի մեջ իջմամբ կնքի առաջին անեծքը, որ ջրից էր, և [ամեն բան] անշնչացնող ջուրը [Հոր] որդեգիրը դարձնող ծնողի փոխի, և որպեսզի արարածների անդրանիկ ջուրը անդրանիկ Որդուն սպասավորի երկու մկրտությամբ՝ տերունական՝ Հորդանանում և առաքելական՝ սուրբ Ավագանում: Արարչի՝ ջրից այսպիսի հայտնությունը Սուրբ Հոգով կանխապես տեսավ թագավորների մեջ մեծը՝ Դավիթը, և ասաց. «Գետերը թող ծափ տան միասին իրենց ձեռքերով» (Սաղմ., ԴԷ 8): Քանզի երբ Արարիչը այս աշխարհի ջրի մեջ իջավ, ցնծացին աղբյուրներից բխող վտակները. որովհետև ինչպես որ Հորդանանում

լինելով՝ բովանդակապես Աստվածությունը ամբողջովին Հոր հետ էր, այդպես էլ, Հորդանանի [ջրերի] մեջ իջնելով, ամբողջապես լցրեց դրանք: Այդ պատճառով էլ Հորդանանի հետ ցնծացին տիեզերական [բոլոր] ջրերը և ձեռքերով ծափ տվեցին՝ տոնելով երկու մկրտությունը՝ տերունականը՝ Հորդանանում և առաքելականը՝ սուրբ Ավագանում: Իսկ ձեռքերով ծափ տալը [խորհրդանշում է] երկու տեսակի աջը՝ Հովհաննեսինը, որ մկրտում էր Տիրոջը, և առաքյալներինը, որ սուրբ Ավագանով որդիներ էր նորածնում բոլորի Արարչի համար:

Իսկ ի՞նչ [խորհուրդ ունեք մեզ համար] Հիսուսի՝ երեսուն տարի՝ մինչև երեսուն տարին լրանալը, լուելը, չուսուցանելը և հրաշքներ չգործելը: Որպեսզի երեսուն տարեկանում մարմնի կատարյալ տարիքի հասնելով՝ կատարյալ մարմնով երևա, Իր մեջ անբաժան համագոյությունը երևացնի երկու բնությունը, քանզի ինչպես որ կատարյալ էր անճառելի Աստվածությունը, այդպես էլ երևացող [կատարյալ] մարմնով Իրեն հայտնի ողջ տիեզերքին: Երկրորդ՝ որովհետև պիտի հայտնվեր երեսնամյա Հովհաննեսի ձեռքով մկրտվելով, նրա իսկ տարիքով հանդիպեց մկրտչին, երիտասարդը մկրտություն խնդրեց երիտասարդից, որպեսզի ըստ հարցումների և համագոյ վկայեն տարիները, որովհետև սահմանված տարում հղացան ամուլ Եղիսաբեթը և Գաբրիելի ավետիսով՝ սուրբ Կույսը: Եվ մարմնացած երեսնամյա Բանը Իր երեսնամյա կարապետի [ձեռքով] մկրտվեց, որպեսզի աննման և աստվածային հայտնության դեմ երևա: Դարձյալ՝ քանի որ արիություն ու քաջություն երիտասարդությունն է, որը, միավորվելով արարչականին, Աստվածացած հաղթող մարմնով հայտնվեց Հորդանանում, որտեղից սկսելով՝ կատարեց տերունական սքանչելագործությունները և տիեզերակալությունից

զրկեց ու դուրս շարտեց աստվածացած հակառակամարտին:

Իսկ Հովհաննեսի՝ Տիրոջից վեց ամսով մեծ լինելը կարապետի՝ Տիրոջ համար ճանապարհի պատրաստության [համար] էր, ով ոչ թե գիշերային տեսիլքով, այլ ցերեկով բարձր ձայնով հնչեցնելով, ասում էր. «Ձեր մեջ մաքուր ճանապարհ պատրաստեցե՛ք Տիրոջ համար»: Քանի որ ոչ թե հեռավոր, այլ շատ մերձակա՝ վեց ամիս անց, գալստյան մասին էր ասում: Վեց ամիս առաջ հայտնեց իր կարապետ լինելը, որի ընթացքում կատարեց իր կարապետական ծառայությունը՝ երեսուն տարեկանում մկրտեց բոլորի երեսնամյա Արարչին՝ Հիսուսին: Իր Իմաստության գրքում հանճարեղ Սողոմոնը այսպիսի երիտասարդ Աստծու մասին է գրում. «Ուրախացի՛ր, երիտասարդ, քո երիտասարդությունը» (Ժող., ԺԱ 9): Որովհետև երիտասարդի բնությունը եռանդուն է, միտքը՝ պարզ, իսկ առաքինի մարմինը [պատրաստ է] հոգևոր նահատակության: Այսպես և Հոր երիտասարդացած Բանը երեսուն տարեկանում Իրեն որպես Աստված հայտնեց տիեզերքին արիություն ու քաջություն տարիքով, որով, մկրտության ջրում շնչահեղձ անելով, մեռցրեց ծովասուլյգ վիշապի գորագնդերին, քանզի «ուրախանալ» է անվանում Հորդանանում հայտնվելը, Սուրբ Հոգու՝ երկնքից իջմամբ վկայելը, երկրի վրայի ջրերի՝ Հորդանանի հետ բերկրելով ցնծալն ու տարերքների՝ ունայնությանը հնազանդվելուց դադարելը: Իսկ երիտասարդական մանկություն երեսնամյա լինելուն է ասում, երբ իր մահվամբ մահվանից փրկագնեց ողջ տիեզերքը: Եվ գերեզմանից հարություն առնելով, Իրեն ամպեղեն կառքով երկինքների երկինք հանելով և Հոր աջ կողմում Նրան հավասար փառքով նստելով՝ նույն երիտասարդական տարիքով մնում է անփոփոխելի և տիեզերական ցնծությունը

միշտ ցնծում է երիտասարդի պես: Ուստիև անճառելի և աստվածային հայտնությունը մեծարելով՝ հրեշտակային երգով բարեբանե՛նք և միաբանե՛նք հավատարիմ Վկային՝ Սուրբ Հոգուն, որ երկնքից՝ Հորից, իջավ և երևաց աղավնակերպ, լուսափայլ և ուղղափառ դարձնե՛նք մեր միտքը հերձվածողական աղանդներից: Ձայնակի՛ց լինենք Հովհաննեսի խոստովանությունը. «Ահա՛ Աստծու Գառը, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ., Ա, 29), քանզի թեև հավատի խոստովանությամբ ժամանակով ետ ենք, ժամանակակի՛ց դառնանք կարապետին, [արժանի՛] լինենք տերունական երանիին. թեպետև մարմնավոր աչքերով չտեսանք, հոգևոր բիբերով տեսնե՛նք կնիքը և ուղղափառ հավատով Հորդանանի հետ ցնծա՛նք՝ ուրախանալով մկրտությամբ, տիեզերական գետերի հետ ձեռքերով ծա՛փ տանք՝ ամբողջ աշխարհում Ավագանից [վերստին] ծնվածների համար: Կանխավ տոնախմբողնե՛ր լինենք և ուրախանա՛նք աստվածային հայտնությամբ, քանի որ. «Մեր տեր Աստված երևաց մեզ երկրում» (տե՛ս Սաղմ., ԾԺԷ 27), ցնծա՛նք իր Արարչին Թաբոր լեռան վրա հայտնությամբ Թագավոր տեսանողի հետ՝ ունայնությանը հնազանդվելուց դադարելու և հակառակամարտի իշխանության՝ բազմաստվածության հետ միասին դուրս վռնդվելու համար: Դրա համար էլ Ամենակարող Հորը, Միածին Որդուն և Մաքուր և Ազատիչ Սուրբ Հոգուն՝ երեք Անձնավորությունը և Մեկ անբաժան Աստվածությունը՝ պանծալի երկրպագություն, մշտնջենավոր փառաբանություն, պատիվ և զորություն հավիտյանս հավիտենից. ամեն:



## ՂԱԶԱՐՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

**Մ**ստվածային բոլոր հրաշքները, որ [գործեց] մեր Տեր Հիսուս Քրիստոս, կարևոր են, դրանց մեջ կան հրաշքներ, որոնք առավել կարևոր են և ունեն երկնավոր հույսի մխիթարությունը: Իսկ երբ տեսնես [մեռածի] հարությունը, մեկի հարություն միջոցով հավատա՝ Ազամից սկսած մինչև [Քրիստոսի] երկրորդ գալուստը բոլոր [մեռյալների] հարությունը:

Կա բան, որ ըստ բնության շարժվեց մեր Տերը, և կա բան, որ ըստ մեր բնության տեսական արվեստի: Մեր բնությունն իբրև մարդ ձևավորվելիս սկիզբ է առնում գլխից: Իսկ գծագրող նկարիչները թագավորների պատկերները [նկարելիս] սկսում են ոտքերից. նախ ներքևից վերև նկարում են մարմնի բոլոր անդամները, ամենավերջում նկարում են գլուխը և դեմքը, որից հետո միայն բոլորը ճանաչում են, թե ով է:

Մեր Տերը նույնպես սկսեց այդպես. [նախ] գինի դարձրեց ջուրը, ապա առողջացրեց բոլոր խեղված անդամները. ուր [ոտքն էր]՝ ոտքը, ուր [ձեռքն էր]՝ ձեռքը, ուր [ականջն էր]՝ ականջը և բոլոր մյուս [անդամները], միաժամանակ մարդկանց միջից հալածեց դեերին: Իսկ երբ եկավ մոտեցավ Իր [երկրավոր կյանքի] վախճանը, հարություն տվեց Ղազարոսին, որով և ամբողջացրեց Իր գործած հրաշքները: Այսպես, Հովհաննեսի Ավետարանում սրանից հետո ուրիշ ոչ մի հրաշքի մասին չի խոսվում, այլ սրանից [անմիջապես] հետո պատմվում է խաչելության մասին: Իսկ եթե հարցնես Մարիամի՝ Նրա ոտքերն օծելու մասին, [ասեսք], որ նրան մեղքերի թողություն շնորհեց և ոչ թե բժշկեց խեղված անդամները: Ավանակը [խորհրդանշում է] հեթանոսական



նոսների սրբվելը, մանուկների ձայները՝ մարգարեական խոսքերի վկայությունը: Իսկ Ղազարոսի հարուժյունից մինչև մեր Տիրոջ խաչելությունն ու լուսավոր հարուժյունը, [կատարված] բազում այլ մեծամեծ գործերը (ինչպես՝ մեռելներից շատերին Իր հետ բերելը և նրանց՝ շատերին ցույց տալը՝ տիեզերական հարուժյան ավետիսը տալով) Իրազործություն են ասվում և ըստ Հովհաննեսի՝ չեն մտնում առաջին հրաչքների մեջ, քանզի հրաչազործությունը սահմանվեց լինել Ղազարոսի հետ, ինչպես գլուխը՝ կենդանու վրա, ինչպես մարդու պատկերը, որ թագավորական պատիվ ունի կենդանի [մարմնի հետ] միությունամբ:

Անսահման էր և սահմանի մեջ մտավ, թվական տարիների մեջ կատարելության հասավ, մասնավոր հրաչազործություններով սահմանվեց հարուժյուն տալու Իր սիրելիին և ապա տարավ հանեց դեպի անսահմանություն, և ապագա [հարուժյան] հույսով [նաև]՝ ամբողջ աշխարհը:

«Եվ մի հիվանդ կար՝ Ղազարոս անունով, Բեթանիայից՝ Մարիամի ու Մարթայի գյուղից» (Հովհ., ԺԱ 1): Հիսուս շրջում էր Հորդանան գետի մյուս կողմում՝ այնտեղ, ուր Հովհաննեսը մկրտություն էր արել, և դեպի կենդանություն էր որսում ամբողջ անապատը: «Նրա քույրերը մարդ ուղարկեցին Նրա մոտ և ասացին. «Տե՛ր, ահավասիկ Նա, ում Դու սիրում էիր, հիվանդացել է» (Հովհ., ԺԱ 3): Լսեց հիվանդի մասին գույժը և սահմանափակեց մահվան իշխանությունը, քարոզեց Աստուծո փառքի մասին, որպեսզի նրա մեջ փառավորվի Աստուծո Որդին: Այնտեղ մնաց երկու օր, թույլ տվեց ավազակին՝ մտնելու Իր սիրելիի տունը. մտավ ապականություն գործողը և ըստ իր կամքի՝ խռովություն գործեց:

Մարիամի սպասավորին հայտնապես ոչ մի պատասխան չտվեց. [ոչինչ չասաց] ո՛չ գնալու և բժշկելու և ո՛չ էլ չգնա-

լու և անտեսելու մասին: Բազում աղերսանքներով ուղարկեցին և մեծամեծ թախանձանքներով աղաչեցին, հիշեցրին ամենօրյա ընդունելությունը, ո՛չ կասկածանքով կանչեցին և ո՛չ էլ երկբայությունամբ հավատացին ամենքին հարուժյուն Տվողին, այլ մարդկորեն շտապեցին, մինչև իրենց հիվանդի վախճանվելը: Քանզի մինչ հոգին բնակվում է ախտավոր մարմնի մեջ, [մարդն] ավելի շատ սայթաքում է, քան հաստատուն է, ինչպես Դավթի բերանով Սուրբ Հոգին է ասում. «Հիշի՛ր, որ մարմին են սրանք՝ շունչ, որ դուրս ելնելով՝ այլևս ետ չի դառնում» (Սաղմ., ՀԷ 39): Աստված չի մոռանում և վերստին հիշում մոռացածները, նրանց բարքի բնույթի [մասին] է կրկնում, ինչպես որ Պողոսն է ուրիշների թերահավատության մասին իր լեզվով կրկնում. «Ինչպե՞ս են հարուժյուն առնում մեռելները, կամ՝ ի՞նչ մարմնով պիտի գան» (Ա Կորնթ., ԺԵ 35): [Մարմինը] շարժող հոգին ելել գնացել է. ամբողջ մարմինն ընկել է ապականության ներքո. ոչ միայն հոգերն են քակտվում, այլ նաև մարմնի գոյացությունն է հող դառնում: Այդ պատճառով էլ հարկ համարեց մեռնող ու կենդանացող սերմերի մասին այլաբանությունամբ նրանց համոզել, որ հարուժյուն [է լինելու]: Այսպես նաև Ղազարոսի քույրերն էին ալեկոծվում իրենց մտքում. հավատում էին [Նրան]՝ իբրև Աստուծու, և իբրև ճարտար Բժշկի՝ հիվանդի մոտ կանչեցին: Նրա մոտ ուղարկեցին միջնորդի՝ երկուսի կողմից խոսելու: Հեռվից բռնեց հիվանդի երակները, մանրամասն զննեց և ճշգրիտ պատմությունն ասաց. «Այս հիվանդությունը մահաբեր չէ, այլ քնի և վեր կենալու պես է, և Աստուծու փառքի համար է» (տե՛ս Հովհ., ԺԱ 4). նրա վեր կենալով Աստված է փառավորվում. ամենայն փառքով նաև Որդին է ցնծալով բերկրում:

Եկան Մարիամի կողմից ուղարկված մարդիկ և ոչինչ չկարողացան պատմել Տիրոջ խոսքերի հայտնություն մա-

սին: Գոռոզացավ և հպարտացավ մահը և կատարեց իր չար կամքը:

Մեր Տերն իր աշակերտներին ասում է. «Եկեք գնանք Հրեաստան» (Հովհ., ԺԱ, 7): Մահվան երկյուղը նաև այնտեղ եկավ և ավելի խիստ տագնապեցրեց նրանց, քան Ղազարոսի քույրերին: «Տե՛ր, – ասում են, – այժմ հրեաները փնտրում են Քեզ, որպեսզի սպանեն, իսկ Դու նորից այնտե՞ղ ես գնում» (Հովհ., ԺԱ, 7): Նրանց առաջ բերեց լույսի [մասին] ճառը. «Ով ցերեկով է քայլում, չի սայթաքում» (Հովհ., ԺԱ, 9)՝ ցույց տալով, որ ով վախենում է մահվանից, չի տեսնում: Այժմ մի՛ ընկալիր մարմնավոր աչքերի տեսնելու մասին, այլ ապացույց՝ մարդկանց երկյուղի մասին, որովհետև թույլերը զգուշանում են ավելի հզորներից, մշտապես [նրանցից] թաքնվելով, ու սարսափով են ավարտում այս աշխարհի դառը կյանքը. հավատի տեսավորությունն էմ ասում. սրան ակնկալելը ակնարկելով է ցույց տալիս և ապագայում կատարվելիքը տեսնում է այդ ժամին: Եվ եթե [մարդն] իր հոգում ստացած չունենա այդպիսի տեսավորություն, եթե կեսօրին էլ գնա, կսայթաքի, և խավարը մշտապես նրա հետ կլինի: Ինչպես որ Մարիամի ուղարկած մարդկանց ունայն մտքով արձակեց այնտեղից, իբրև գուժկաններ, այդպես էլ իր աշակերտներին այսուայն կողմ տարուբերեց և չկամեցավ խորհուրդի հայտնությունը ցույց տալ նրանց: Ինչո՞ւ: Որովհետև երկու անգամ հարույթյան հրաշք տեսան և չհավատացին, փոխանակ իրենք աներկյուղ լինելու, Նրան էլ են վախենալ ուսուցանում, ասում են. «Հրեաները սպառնում էին սպանել Քեզ, և Դու նորից այնտե՞ղ ես գնում» (Հովհ., ԺԱ, 8): Սպանվելն ու մեռնելը նույնն են. քահանայի՝ տասներկուամյա մեռած դստերը հարույթյուն տվեց, նաև Նային քաղաքի [այրու] միամորիկ որդուն բռնեց ու կանգնեցրեց դագաղից: Նա, ով կարող է

մեկ մեռյալի կյանք տալ, [կարող է] և շատերին [ապրեցնել], և եթե այլոց մահը հալածեց, առավել ևս՝ ձերը [կհալածի]. ինչո՞ւ էք այդքան վախենում ու դողում. մի՞թե չեք ելնելու այդ մարմնից և մի՞թե հանապազ չեք կրթվում այն խոսքով, թե՛ «Մի՛ վախեցեք նրանցից, ովքեր մարմինն են սպանում և հոգին սպանել չեն կարող, այլ նրանցից, ովքեր կարող են կորստյան մատնել հոգին ու մարմինը» (տե՛ս Մատթ., Ժ 28): Նա միաժամանակ հոգին ու մարմինն է ազատում մահից: Թաքոր լեռան վրա Հորից լսեցիք նույն ձայնը. «Դա է իմ սիրելի Որդին. Դրա՛ն լսեցեք» (Մարկ., Թ 6, տե՛ս Մատթ., ԺԷ 5, Ղուկ., Թ 35): Իսկ դուք, փոխանակ Նրան լսելու, կամենում եք հրաման տվող լինել. «Մի՛ գնա Հրեաստան, ասում եք, որովհետև Քեզ կսպանեն»: Ակնհայտ է, որ [եթե] Ղազարոսի հարույթյան խորհուրդն էլ հայտնի դարձներ ձեզ, [միևնույն է] դուք չէիք հավատա: «Մի՛ գնա Հրեաստան, որովհետև կամենում են Քեզ սպանել»:

Նրանց մտքի տկարություն պատճառով այսուայն կողմ տարուբերեց խոսքի միտքը, որպեսզի կրթի նրանց լսելիքը. մերթ ասում է. «Այդ հիվանդությունը մահաբեր չէ» (Հովհ., ԺԱ, 4), դարձյալ ասում է. «Այլ Աստծու փառքի համար է, որպեսզի փառավորվի Աստծու Որդին» (տե՛ս Հովհ., ԺԱ, 4): Հիվանդությունն, անտարակույս, մահաբեր էր, և փառքը, ի տես ամբողջ թերահավատ ժողովրդի, հորդեց մահվան միջից: Այն[քան] ժամանակ խոսեց աշակերտների հետ, մինչև որ մեռյալը թաղման ու գերեզմանի վիճակվեց:

Ապա դրանից հետո ասաց. «Մեր բարեկամ Ղազարոսը ննջել է, սակայն ես գնում եմ, որ նրան արթնացնեմ» (Հովհ., ԺԱ, 11): Ո՛վ Տեր, ասես, մանուկների հետ ես խոսում և որպես մանուկների՝ կաթով ես կերակրում նրանց. մոր պես ծնում ես, դայակի պես անուցում, վարդապետի պես ուսուցանում ես և նրանց տգիտությունը ծածկում ես իմաստու-

Թյամբ: Դու ե՞րբ էիր Ղազարոսի սենեկապանը, որ գնալիր ու քնից արթնացնեիր նրան: Երկու օրվա գնալու չափ է ճանապարհի հեռավորությունը. մինչև Դու գնաս, Ղազարոսը քնած կմնա. մի՞թե մանրագործից կամ թունդ գինուց է թմբել, կամ մարդկանցից ո՞վ չորս գիշեր ու չորս ցերեկ անընդհատ քնած կլինի, և այժմ դու գնում ես՝ արթնացնելու նրան: Ինչո՞ւ նրան չեն արթնացնում նրա քույրերը, որ շտապ սպասավորներ են ուղարկել Քեզ մոտ: Նրա քնած լինելու պատճառով չէ, որ Քեզ մոտ առաքեցին, այլ մահաբեր հիվանդության պատճառով ստեպ աղաչեցին Քեզ, որ գնաս ու բժշկես:

Արդարև, անմեղ գառներ էին աշակերտները. գիտեին այն, ինչ տեսնում էին, և հավատում էին այն ամենին, ինչ լսում էին. չկարողացան հասու լինել աստվածային խորհուրդներին: «Տե՛ր, ասում են, եթե ննջել է, ապա կապրի» (տե՛ս Հովհ., ԺԱ, 12): Շատ հիվանդներ կան, որ ննջում են, բայց չեն ապրում, [հիվանդներ էլ] կան, որ չեն ննջում, բայց ապրում են: Ո՞վ տգետների փաղաքջանք. կամենում էին սփոփել ծածկագետ Զորությունը: Գիտեին, որ մեր Տերը սիրում է այն տունը և այն տանը՝ առավելապես [սիրում է] անմեղ Ղազարոսին, և չէին կամենում, որ նրանց ընտանիքի վիշտը հասնի [Նրան]: Ուստի և Իր՝ Ղազարոսի հանդեպ տածած սիրուց առավել սիրով Տերը գթաց նրանց, բացեց խորհրդի ծածկույթը և հայտնապես ասաց. «Մեր բարեկամ Ղազարոսը մեռավ» (Հովհ., ԺԱ, 14): Եվ որպեսզի հանկարծակի վեր չթոչեն, չճչան, չկոծեն ու լաց չլինեն, գուժաբեր խոսքերից հետո շտապ մատուցեց անսուգ մխիթարությունը. «Բայց ես ուրախ եմ ձեզ համար, ասաց, որպեսզի դուք հավատաք, որ ես այնտեղ չէի» (տե՛ս Հովհ., ԺԱ, 15): Ահա կրկին խրթին պատասխան, որին չկարողացան ամբողջովին հասու լինել և հասկանալ: Նրանց ականջին

միաժամանակ հնչեց մահվան և ուրախություն անունը, ոչ իսկ հասցրեցին զարմանալ երկու միտք ունեցող խոսքի վրա: Ինչպես որ Թովմասի վախկոտությունը մեզ տեղեկացնում է նրանց տխմար ու անուսում լինելու մասին, նա ասում է. «Եկեք մենք էլ գնանք, որ նրա հետ մեռնենք» (տե՛ս Հովհ., ԺԱ, 16): Նա գնում է՝ մեռյալին հարություն տալու և ապրեցնելու, նրանք՝ ողջերը, մահվան էին պատրաստվում: Որքան տարակույսներ կան այստեղ. երկրագործ մշակների համար ավելի դյուրին է կոշտացած հողը մշակել, քան գիտունների համար՝ տգետներին գիտության հավանության բերելը: Կոշտ հողը կարճ ժամանակում սկսում է գործել, և շատ պտուղներ են ակնկալվում նրանից, իսկ տգիտությանը կոշտացած մարդուն միայն Աստված կարող է գործել տալ: Որքան զորանում էր թերահավատությունը երկու կողմից, կրկնապատիկ ուրախանում էր չարը բոլոր կողմերից: Բայց որովհետև մարդացած Աստված միջնորդ է Աստծու և մարդկանց միջև, չդանդաղեց ու չվախեցավ ամաչեցնել ամբողջ թերահավատությունը. Հայրենի զորությունը Հզորը գործեց:

«Հիսուս եկավ և Ղազարոսին գտավ չորս օրից ի վեր գերեզմանի մեջ» (Հովհ., ԺԱ, 17): Եվ որովհետև այն դյուրը Երուսաղեմից հեռու է [միայն] երեք մղոն, համարի՛ր, թե ամբողջ քաղաքն էր իջել եկել այնտեղ՝ այն վշտին [մասնակից լինելու]: Մեր բնությունն այսպիսի սովորություն ունի. ավետիսից առավել սիրում ենք բոթ լսել, մանավանդ ուրիշների, քան մեր մասին, և [առավել սիրում ենք] մտնել սգո տուն, քան ուրախություն. մեկը՝ աներեսություն, մեկը՝ չարասիրաբար հեզնելու, շատերը՝ շատախոսություն կամ դատարկախոսություն համար, և քչերն են, որ սգակից են լինում ու կիսում են տրտմությունը: Այս պատճառով քաղաքի ողջ բազմությունը հավաքված էր Ղազարոսի քույ-

րեւրի մոտ. գյուղը քաղաք էր դարձել, և քաղաքը՝ գյուղ. թեև կամովին չէր բազմամբոխը. Երուսաղեմում կգործվեր սքանչելիքը:

«Երբ Մարթան լսեց, որ Հիսուս գալիս է, Նրան ընդառաջ գնաց, իսկ Մարիամը տանը նստած էր» (Հովհ., ԺԱ, 20): Երկուսն էլ ընկնում էին գովելի օրհնության ներքո, մեկն իբրև մարդու բերան, իսկ մյուսը՝ սիրտ՝ խորհրդի աման. սիրտն իր տեղում հաստատուն կառուցվեց, խուքը, իբրև սրտի թարգման, առաջ ընթացավ և պատմեց սգավոր սրտի պաղատանքը Նրա ականջին, Ով եկել էր՝ վերացնելու սուգը Իր սիրելիի տնից: Իմացավ Բանը, որ բոլոր նրանց մխիթարողները, որ եկել հավաքվել էին, յուրաքանչյուրը լի էր սգով ու տրտմությամբ. տրտումը տրտումին մխիթարել և ուրախացնել չի կարող, և սգավորը սգավորին չի կարող մխիթարել, այլ սգի վրա սուգ են ավելացնում: «Մի՛ տանջվիր, ասում են, մի՛ տառապիր, իմ եղբայրը ավելի երիտասարդ մեռավ, հարսին դեռ նոր էր տուն բերել, անզավակ ելավ գնաց այս աշխարհից, և նրանից ոչինչ հիշատակ չմնաց, ոչ իսկ նրա անունը մնաց ողջերի մեջ»: Մի ուրիշ կին առաջ է գալիս ու ասում. «Միամորիկ որդի ունեի, ամուսինս մեռել է, իսկ քույր ու եղբայր չունեմ, և նա էլ դեռ մանուկ մեռավ, ծաղկի նման թառամեց, չհասավ իր հարսնացուի քաղաքը, առագաստ չմտավ, չտեսավ այս աշխարհի վայելչությունը. ետ դարձավ գորությունը, եղծվեց և ապականվեց տուրեառիկ փոխանորդության այս կյանքում»: Ուրիշներ սրանից առավել գուլթ շարժող [բաներ էին պատմում], սիրտ էին շարժում, աղիքները գալարեցնում, երիկամները դողացնում, և ջղերը թուլանում էին, հոգերը՝ լուծվում, մարմնի գորությունը թուլանում էր, վայի վրա վայ էր ավելանում, ճիչի վրա՝ ճիչ, այրոցի վրա՝ այրոց, վերքերի վրա՝ նոր վերքեր. այնժամ շարն էր կեղե-

քում. արժան է այդպիսի խոսքերը մխիթարություն անվանել, ես չգիտեմ. եկել էին մխիթարելու մի մարդու, բայց բոլորը նստեցին անմխիթար սգի մեջ:

Մարթան թողեց այս ամբոխին և Հիսուսին ասաց. «Տե՛ր, եթե այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի, բայց հիմա էլ գիտեմ, թե ինչ էլ որ Աստծուց ուզես, Աստված քեզ կտա» (Հովհ., ԺԱ, 22): Հոգևոր իմաստություն, աստվածային սեր, ճշմարիտ հավատ և անսուտ մարգարեություն. այս չորսը հարազատ եղբայրներ են, քանզի նրանց շարժողը Մեկն է՝ Աստված, ինչպես որ նույն երաժիշտն իր բերանով փչում է և՛ պարզ, և՛ թանձր, և՛ ավելի թանձր, մյուս [հնչյուն]ները՝ ըստ իրենց կարգի. թեև [ձայները] թվով բազում են, բայց ասվում է մեկ ձայն, այլ ոչ թե բազում ձայներ, և ձեռքը շարժողից է ձայների ընտրությունը երևում, գործիքը մեկը և նույնն է բոլորի մոտ: Այսպես նաև Մարթան ու Մարիամը, իսկ Ղազարոսը՝ մեռյալների մեջ (և եթե այն տանը նրանց պես ուրիշ հավատացող լինեիր, նա ևս), թեև տարբեր բաներ էին խոսում, բայց մեկ էր բոլորի հավատը, մի սիրով էին Քրիստոսին սիրում, բոլորը մի հոգևոր իմաստություն ունեին: Շատերի միաբանություն մասին մարգարեացավ Մարթան. «Տե՛ր, ասում է, եթե այստեղ լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի»: Այնտեղ, ուր կյանքն է, մահը չի մտնում. Տերը բազում անգամ մտել էր Մարիամի ու Մարթայի տուն, մահը հալածվել էր այն գյուղից, ո՛ւր մնաց, թե այդ տնից: Երկնավոր իմաստությամբ ասաց այն, քանզի. «Ով մարգարեին ընդունում է իբրև մարգարեի, մարգարեի վարձ կստանա» (Մատթ., Ժ 41), իսկ ով Աստծուն ընդունի, կժառանգի աստվածային իմաստությունը. այն իմաստությունից մարգարեացավ. «Գիտեմ, ասում է, թե ինչ էլ որ Աստծուց ուզես, Աստված Քեզ կտա»: Այս խոսքը մարգարեություն է, քանզի ամեն ինչ

բերեց և կարգեց «Քեզ կտա» [խոսքի մեջ]. ոչ միայն մի մեռյալի հարուցումն, այլ նաև վաղնջական ժամանակների՝ անցյալ դարերի [մեռյալներինը] ևս: Բայց գուցե որևէ մեկին թերի թվա այս խոսքը՝ կա՛մ Աստծուց խնդրելը, կա՛մ Նրա՝ տալը: Այս նաև Ինքը՝ Տերն ասաց. «Ամեն բան տրված է ինձ իմ Հորից» (տե՛ս Մատթ., ԻԸ 18), և հաստատում է նրանց մտքերը. «Ոչ ոք չգիտի Հորը, եթե ոչ՝ Որդին, և ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ՝ Հայրը»: Այս խոսքը Նրանց մի լինելն է ուսուցանում և ոչ թե [Մեկի] ավագ և [Մյուսի] կրտսեր լինելը: Ուստիև Տերը հավանեց Մարթայի հավատը: Հիսուս նրան ասաց. «Քո եղբայրը հարուցումն կառնի»: Մարթան Նրան ասաց. «Գիտեմ, որ հարուցյան ժամանակ՝ վերջին օրը, հարուցումն կառնի» (Հովհ., ԺԱ, 23-24): Եվ Տերը նրան միանգամից հայտնեց վերջինն ու առաջինը. «Ես իսկ եմ հարուցումն և կյանք» (Հովհ., ԺԱ, 25):

Կնոջ առջև բացվեցին երկնքի դռները. տեսավ անեղ և անսկիզբ Լույսին, հասավ անմատչելի տեղը, հավասարվեց Զերեզեոսի որդուն և ոչ թե տեսանելի կրծքին ընկավ, այլ դեպի իմանալի գորուցումնը բարձրացավ, Կենաց Խոսքին շոշափեց և նույն կյանքի մեջ ընկղմվեց: Եկավ արտասուքներով և լցվեց խնդուլթյամբ, վշտով էր լցված և բերկրեց, մտքի աչքերը բացվեցին, ներքին մարդը լուսավորվեց, հեռացավ թախիծը, գվարթացավ երեսի գույնը, ողջացան մարմնի վերքերը, և մոռացավ անմխիթար սուգը, եղբոր բոթը բերեց և հարուցյան ավետիսը լսեց. մինչև եղբորը հարուցումն առած տեսնելը մեռելների հարուցյան [մասին խոսքի] միջոցով Կենդանիին տեսավ՝ Կենդանիին և բոլոր մեռյալներին Կենդանացնողին:

«Ես իսկ եմ հարուցումն և կյանք»: Եղիան հարուցումն տվեց մեռելներին, բայց նրանք դարձյալ մեռան, Եղիսեն նույնպես [հարուցումն տվեց] մեկին ու երկուսին: Ես ոչ

միայն հարուցումն Տվող եմ, այլ նաև հարուցումն. հարուցումն եմ տալիս և անմահացումն մեջ պահում. «Ով հավատա ինձ, մահ չի տեսնի և չի ճաշակի հավիտյան» (տե՛ս Հովհ., ԺԱ, 26): Մեր Տերն այս ասաց Մարթային և ապա նրանից շտապ պահանջեց վարդապետության վարձը. «Հավատո՞ւմ ես, – ասում է, – այն ամենին, ինչ լսեցիր»: Իսկ նա ասաց. «Այո՛, Տե՛ր, ես հավատում եմ, որ Դու ես Քրիստոսը՝ Աստծու Որդին, որ աշխարհ էիր գալու» (տե՛ս Հովհ., ԺԱ 26-27): Ինչպես վերևում ասացինք, մարգարեության չորս մասերը, որ ընդունեց և հագավ կինն այնտեղ. «Դու ես, ասում է, որ աշխարհ էիր գալու»: Աշխարհում էր, իսկ դու ասում ես՝ գալո՞ւ էիր: Կրկնում է մարգարեների խոսքը, որ նաև այն սամարացի կինն ասաց. «Երբ մեսիան գա, մեզ ամեն ինչ կպատմի» (Հովհ., Դ, 25): Ասաց Կույսից ծնվելու մասին և ակնարկեց երկրորդ գալուստը, քանզի նա, ով տեսնում է սկիզբը, նայում է նաև վերջին. իբրև արքունիքի ներսն ընկավ, ամեն բանի մասին առավել չափով տեղեկացավ և Աստծու մեծամեծ [բաների մասին] լսեց, եկավ տրտում՝ իբրև մարդ, գնաց ուրախությամբ լցված՝ իբրև Աստծո հրեշտակ: Գնաց՝ իր քրոջն ասելու. «Վարդապետն է եկել և քեզ է կանչում» (Հովհ., ԺԱ, 28): Արդարև, ճշմարիտ վարդապետն առանց այբուբենի է սովորեցնում, առանց հնչյունների է հեգել տալիս և ուսուցման համար անհրաժեշտն է ընդունում և լրացնում: Վարդապետ ասաց և մտավ աշակերտների կարգի մեջ, խոսեց Մարիամի հետ, և [նա] լուելյայն, հեշտակամ և դյուրահավան կերպով աշակերտեց նույն վարդապետությանը: Շտապով գնաց Հիսուսի մոտ՝ դեպի նույն տեղը, դեպի նույն ուրախությունն ու դեպի նույն Ուսուցիչը: Եվ Նա երկուսին էլ՝ մեկին՝ ծածուկ և մյուսին հայտնի կերպով այս սգավոր աշխարհից ձգեց անտրտմական ուրախության մեջ: Հրեաները, որ եկել

էին Մարիամի մոտ՝ եղբոր մահվան պատճառով նրան մխիթարելու, ունայն ու դատարկ էին երկնավոր մխիթարութիւնից, սգավոր ու տխուր նստել էին տանը, արտասովում էին և նույն տրտմութեամբ ասում էին իրար. «Ուրեմն գնում է գերեզման, որպեսզի այնտեղ լաց լինի»: Վեր կացան և իրենք էլ գնացին նրա հետ ոչ թե դեպի հարութիւն, այլ դեպի մեռյալի գերեզմանը, քանզի. «Ով ունի, նրան պիտի տրվի և պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցածն էլ» (Մատթ., ԺԳ 12) ոչ թե Տվողի ազահութեան, այլ ընդունողի վատթարութեան պատճառով: Հանապազ գերեզմանասեր էին. թողեց այնտեղ մեռած մարդկանց, ինչպես որ մարգարեն է սուտ ասածու անունը տալով և նրանց մեռյալներ ասելով. «Նստած էին, – ասում է, – նրանց կանայք և ողբում էին Թամուզին» (տե՛ս Եզեկ., Ը 14): Նրանց միջից Մարիամը վեր կացավ և եկավ Նրա մոտ, ում արդեն ճանաչում էր, թե՛ «Ով իմ բազում մեղքերին կարողացավ ձրի ներում շնորհել, կարող է նաև իմ ծանրատաղտուկ տրտմութիւնը փարատել ինձնից»: Ընկավ Նրա առաջ և կրկնեց նույն խոսքերը, որ իր քույրն էր ասել. «Տե՛ր, եթե այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի» (Հովհ., ԺԱ, 32): Նույն դպրոցի մանուկները սովորում են խոսել նույն բանը. իրենց վարդապետի կամքին հաճելի, հավանելի և միաբան նույն ուսմունքով են խրատվում: Այդպես և Ղազարոսի քույրերը. երկուսով բռնվեցին մեկ անհատնելի սիրով՝ իբրև Երկնավորի մեկ կենդանի որս, երկուսով մեկ սիրով սիրեցին Տիրոջը, երկուսով միապես մեկ գիտութեամբ արբեցին. մարդու տեսան և Աստծուն հավատացին, նրանց սրտի լրութիւնից նաև նրանց բերանի խոսքերը նույնը միաբան կրկնեցին:

Աշխատած մարմնից քրտինք է բխում, և զայրագին սրտից աչքերը արտասուք են բերում ոչ միայն մեռյալներ-

րի, այլ նաև ողջ սիրելիի համար, երբ նա հեռվից է գալիս: Մարիամը տեսավ Հիսուսին, և երկու սիրո երկունքը ստիպեց նրան՝ մեռածի հիշատակն ու կենդանի Սիրելիին տեսնելը. չճչաց՝ ըստ աշխարհի կարգի, այլ հույժ ցնծութեամբ հեղեց, թափեց արցունքները Ողորմածի առջև: Տեսարանն այնքան աղիողորմ էր, որ մինչևիսկ բոլոր հրեաներին բարձրաձայն ողբով լաց լինել տվեց. նույն միաբանութեանը նաև մեր Տերը հավասարվեց, արտասուքը՝ արտասուքին, տրտմութիւնը՝ տրտմութեանը, համարեց, թե նույն սուգը սգաց: Այդ պատճառով էլ Գիրքն ասում է. «Եվ սաստիկ խռովվեց իր հոգում» (Հովհ., ԺԱ, 33), որպես թե իր ամբողջ զորութեամբ տրտմեց, չկարողացավ պարզաբար ասել. «Ո՛ր դրեցիք նրան», այլ ուժգին հեծելով, լալով ու արտասուքով է ասում, իբրև իր սիրելիի վրա [սգացողներին] տրտմակից և սգակից: Յորդահոս անձրևներից մշակների այգիներն առատ բերք են տալիս, առապարներն ու անապատները իրենց բույսերն են աճեցնում, այդպես նաև մարդկային հորդ արտասուքը շարժում է մարդացած Աստծու գութը. եղավ նրանց սգակիցը, որպեսզի մարդիկ Աստծու մխիթարութեանը կցորդ լինեն: Հողի տակ թմրած ու չբուսած շատ սերմեր կային, երկնքին ու երկրին վայել էր տեղալ նրանց վրա, որպեսզի եթե մեկ հատիկը բուսնի, ապա ակնկալիք կլինի, որ մյուսներն էլ շուտով կբուսնեն:

«Ո՛ր դրեցիք նրան», – ասում է: Նրան ասացին. «Տե՛ր, արի՛ և տե՛ս» (Հովհ., ԺԱ, 34):

Դեռևս որսում էր մարդկանց փրկութիւնը. Բեթանիայից Բեթաբբե յոթանասուներկու մղոն է. այդչափ հեռվից իմացավ Ղազարոսի մահվան մասին, մոտենալով, ավելին՝ կամրջին հասնելով, անգիտանում է. «Ո՛ր դրեցիք նրան», – ասում է: Դուք դրեցիք, իսկ ես առնում եմ, մեռած դրեցիք, ես կենդանի եմ վերցնում, դուք դազաղով տարաք,



իսկ ես ձայնով քայլել եմ տալիս: Եթե այդ այդպես է, ապա ինչո՞ւ ես հարցնում, Տե՛ր: Աստվածային գործեր էին գործվելու այնտեղ. գուցե մարդիկ գրկվեին. քանզի նրանց առջև բազում անգամ երկնավոր հայտնություններ եղան. անմարմին գորությունները մարմնավոր երևացին, բայց չմարմնացան, միայն Սա է կրում երկու ներգործությունները: Ուստիև զգուշանում է երկու կողմերից. ոչ միայն արտասուքով բավականացավ, այլ նաև հարցնելով ստուգեց և նրանցից ընդունեց անսուտ վկայությունը:

«Տեսե՛ք, ասում են, ինչքան էր սիրում նրան, որ արտասպեց» (Հովհ., ԺԱ, 36): Արտասվում են ոչ միայն մարմնի աչքերը, այլ բոլոր անդամները քրտնում են, այդ նաև մեր Տիրոջը բազում անգամ պատահեց աշխարհում. այնքան խորությունը սովորեցրեց [Իր]՝ մարմին առած լինելը, որ մինչև իսկ պատճառ եղավ վատթարագույն չարախոսություն, մինչև անգամ ասացին. «Սա, որ կույրի աչքերը բացեց, չէ՞ր կարող նաև այնպես անել, որ սա չմեռներ» (Հովհ., ԺԱ, 37): Դուք, ասում է, սովոր եք հայհոյելու. երբ մեծ ծովը բաժանեց և բազում սքանչելիքներ արեց, հայհոյեցիք և չգոհացաք Աստծուց, այլ անասունով փոխանակեցիք նրան, երգումով հեռացաք Մովսեսից. եթե Մովսեսը ծովի միջով ճանապարհ բացած չլիներ, փարավոնն ամբողջ ժողովրդին իր սուր սրերի տակ առած կլիներ: Շնորհակալ չեղաք նրան, ով այսչափ բազմությունը փրկեց մահից, շնորհակալ չեք լինի նաև կույրին բժշկելու համար:

Կույրի շունչը կենդանի էր և շարժում էր նրա մարմինը, մեռած էին նրա աչքերը. մեռած մարմնի մեջ շունչ չի բնակվում, և ոչ էլ արեգակի լույսը՝ մեռած աչքում: Եթե կենդանացրեց մեռած աչքը և շնորհեց նրան հեռացած լույսը, ապա ուրեմն կկենդանանար նա, ով մեռած էր ամբողջ մարմնով: Իսկ դուք, որքան կամենում եք, շատացրեք

ձեր չարախոսությունները. թերևս նույն տեղում ամաչեք ձեր առաջին ու վերջին հայհոյություն համար, մանավանդ երբ ձեզնից շատերը փառաբանեն Աստծուն մեծամեծ սքանչելիքի համար, որ պիտի տեսնեք:

«Հիսուս գնաց գերեզման, ուր դրել էին Ղազարոսին. դա մի քարայր էր, որի վրա մի քար էր դրված» (տե՛ս Հովհ., ԺԱ, 38): Առաջինների սովորությունն էր մեծ աշխատությունը ամբացնել իրենց գերեզմանները, որովհետև նրանցից հեռու էր հարուխան հույսը. միայն այս կյանքը գիտեին և միայն այս դառը մահվանն էին հավատում, մեռելների հիշատակը գերեզմանն էին համարում, իբրև նրանց հիշատակ չիրիմ էին պատրաստում և մեռյալի անունը փորագրում էին դռան վրա: Հարուխան ակնկալիք ոչ ոք չուներ, ուստիև Մովսեսն ակամայից հակվում է դեպի առաջինների սովորությունը. «Եթե մեկն անորդի մեռնի, նրա եղբայրը նրա կնոջը թող առնի և իր եղբոր անունով զավակ ունենա» (տե՛ս Բ Օր., ԻԵ 5, Մատթ., ԻԲ 24). Վիճակված երկիրը ժառանգելու հնարք: Եվ դարձյալ՝ Երկրորդ օրենքով ընդդիմացավ: Իսրայելացիները մեռելների գերեզմանների հետ կապված նույն սովորությունն ունեին:

«Հիսուս ասում է. «Գերեզմանի դռնից քարը մի կո՛ղմ դրեք» (տե՛ս Հովհ., ԺԱ, 39): Նա, ումից դողում է երկինքը, հալչում են լեռները, փոքր վեմը [մի կողմ դնելու] համար օգնական է փնտրում մարդկանցից. ո՛չ [թե] օգնական [է փնտրում], այլ վկաներ: Արտասուքներով սատար եղավ մարդկանց, դրա փոխարեն պահանջում էր մի կողմ դնել վեմը: Երկիրը մարդիկ են մշակում, իսկ երկինքը հրեշտակներն ունեն. հրեշտակների ու մարդկանց Տերը եկել էր այնտեղ. օգնության համար հրեշտակներ պետք չէին, հրամայում է նրանց, ում սովորությունն է մշակել երկիրը: Ասում է. «Դո՛ւք այստեղից հանեք վեմը և նայե՛ք գերեզմանի

մեջ, թե ներսո՞ւմ է մեռածը: Թե որքան սոսկալի է մեռածի տեսքը, շուտով կվկայեն ձեր աչքերը, իսկ ձեր թիկունքը [կվկայի] վեմի ծանրութիւնը: Ձեր աչքերը՝ մեռածի դիակին, իսկ նեխածի հոտը [գերեզմանին] մոտիկ կանգնածներդ ուռնգներին է: Այդքան վկաների մեջ մեռածի հարութիւնը չեք կարող ուրանալ»: Գիտե՞ր նրանց չար սովորութիւնը, ջանում էր բոլոր կողմերից արգելել հայհոյութիւնը: Նույնը վկայեց և Մարթան՝ մեռածի քույրը. «Տե՛ր, ասում է, հիմա արդեն նեխած կլինի, քանի որ չորս օրվա է»: Հիսուս նրան ասաց. «Քեզ չասացի՞՞ եթե հավատաս, կտեսնես Աստծու փառքը» (Հովհ., ԺԱ, 39, 40):

Մարդիկ մեռածից են նեխածի հոտ զգում, Աստված՝ մեղավորից. ամբողջ աշխարհն էր հիմնովին նեխած. չգարչեց ու ոչ մեկից երես չդարձրեց, այլ իր անուշահոտութեամբ համեմեց բոլորին: Մշակի համար նեխած սերմը հոտ չունի, նրա միտքը լեցուն է ուրախութեամբ, և զմայլվում է իր անդաստանների հոտով. այդ մասին փոքր-ինչ վկայում է Իսահակը, երբ քննում ու օրհնում է Հակոբին:

Ո՛վ Մարթա, ինչ որ դու ապականութիւն ես անվանում, այնտեղից մարդկանց անապական կյանքն է բուսնելու. միայն առանց երկբայելու հավատա՛ Աստծուն, և այնտեղից անուշութեան ու կենդանութեան հոտ կգա, այնքան պայծառ ու լուսավոր, որ մինչև իսկ Աստծու փառքը հավատով կարող ես տեսնել: Եթե բազում անգամ էլ ամպերն անձրև տեղան այն հողի վրա, որի մեջ սերմեր չեն ցանվել, ցորեն չի բուսնի այնտեղ, և եթե բազում երկնային շեփոններ էլ հնչեն այն գերեզմանի վրա, ուր մեռյալ չի դրվել, ոչ ոք այնտեղ մեռյալի հարութիւն չի տեսնի: Ահա [Ղազարոսը] մեռած է և գերեզման է դրված: Դու դավանում ես մահը, իսկ Տերը կենդանի կյանք է խոստանում և հարութիւն է տալիս: Կրկնի՛ր, երեք անգամ ասա՛ այդ վկա-

յութեան մասին, որպեսզի պապանձվեն չարախոսների բերանները, երբ չորսօրյա մեռյալին կենդանի տեսնեն հրապարակում: Նեխահոտի պատճառով մի՛ կասկածիր բոլորի Տիրոջը. անուշեցուցիչ ա՛ղ է դա բոլոր հոտած մարմինների համար, թափանցիկ լո՛ւյս է բոլոր կուրացած աչքերի համար, ձա՛յն է դա, որ բացում է բոլոր խուլ ականջները, որ այժմ գործով կտեսնես քո սիրելի եղբոր վրա. աչքով կգտնես Նրան և մտքով Նրա փառքը կիմանաս:

«Եվ երբ քարը վերցրին գերեզմանի դռնից, Հիսուս վեր՝ դեպի երկինք, բարձրացրեց աչքերը և ասաց. «Հա՛յր, հոյհութիւն եմ տալիս Քեզ, որ ինձ լսեցիր, և ես գիտեի, որ ամեն ժամ լսում ես ինձ, բայց այս անում եմ շուրջս կանգնած այս ժողովրդի համար, որպեսզի հավատան, որ Դո՛ւ ինձ ուղարկեցիր» (Հովհ., ԺԱ, 41-43): Մեր Տերը Ղազարոսին հարութիւն տվեց մինչև վեմի հանվելը. մինչև աչքերը երկինք բարձրացնելը Հիսուս տեսնում էր Հորը, և մինչև Նրա ձայն տալը Հայրը լսում էր Նրան. ո՛չ միայն այն ժամին, այլև ամենայն ժամ, իսկ տեսնողներին և լսողներին [այնպես թվաց, թե] միայն այն ժամին [լսեց]: Ո՞ւմ հոգին է մարմնից զատ, ողջերից՝ ոչ մեկինը, սրանից առավել անզատ միաբանութիւն է Միասնական Երրորդութիւնը:

Ամաչի՛ր, Թեոդորիտո՛ն, երկինք մի՛ բարձրացրու աչքերդ, Նեստորիո՛ս, որովհետև կույր աչքով եք Սուրբ Երրորդութեան միաբանութիւնից և ձեր իսկ կորստյան համար միաբանեցիք՝ խոսելու ամոթալից վարդապետութիւնը: Ասում են՝ Մեկը ձայն է տալիս, և Մեկը լսում է, Մեկն աղաչում է, Մյուսը՝ աղաչել տալիս, Մեկը գթում և Մյուսին գթալ է տալիս. իբրև թե իշխանութիւն չունի հարութիւն տալու, [այդ պատճառով էլ] Հորը բարձրաձայն օգնութեան է կանչում: Ո՛վ, որքան նախատելի են այդ մարդկանց խոսքերը ոչ միայն իմաստունների, այլ նաև սուրբ Ե-



կեղեցու ամենատխմար մարդկանց աչքում: Երբ քահանայապետի տանը նրա դասերը մեռելներից հարուժյուն տվեց, չաղաչեց, չթախանձեց, չպաղատեց, երկինք չնայեց և Հոբը չկանչեց. նայեց մեռածին ու ասաց. «Տալիթա՛, կու՛մի՛, որ նշանակում է՝ աղջի՛կ, դո՛ւ, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց» (Մարկ., Ե 41): Եվ [աղջիկը] գարթնեց, ինչպես քնից, իսկույն վեր կացավ, ինչպես առողջ, և նրան ուտելու բան տվեցին: Նային քաղաքում նույնպես մեծ բազմություն էր գնում դագաղի ետևից. մարդկանցից ոչ ոք չթախանձեց Նրան, և ոչ էլ Նա աղաչանքներ մատուցեց Հորը, «միայն ձեռքը դիպցրեց դագաղին, և մեռելն իսկույն վեր կացավ» (տե՛ս Ղուկ., Է 11-15): Այդպես նաև բոլոր հրաշքները գործելիս, ուր ինքն անձամբ էր անում, Աստվածության գորուժյունն էր ցույց տալիս, իսկ ուր Հորն էր աղաչում, կատարյալ սերն էր ցույց տալիս:

«Այս անում եմ շուրջս կանգնած այս ժողովրդի համար»: Եվ ինքն էլ բացատրում է մեկնությունը. «Որպեսզի հավատան, թե Դու ինձ ուղարկեցիր աշխարհ» (Հովհ., ԺԱ, 42): Հորից՝ ճշմարիտ գոհություն մարդկանց համար. «Գոհանում եմ Քեզնից, Հա՛յր, որ ծածկեցիր այս իմաստուններից ու գիտուններից և անմեղ մանուկներին հայտնեցիր» (տե՛ս Մատթ., ԺԱ, 25): Բոլորս ենք ընկել չարաչար մեղքերի տակ, բայց անբավելի մեղքերի տակ են ընկել նրանք, ովքեր բաժանում են անբաժանելի Բնությունը, որովհետև այնտեղ չեն կարող խոռովություն առաջ բերել, իրենք իրենց անձեռում են տաղնապում խոռովվելով. մարդկանցից հայհոյվում, իսկ Աստուծուց դատապարտվում են նրանք և ջնջվում կյանքի Գրքից:

Բայց մենք այնտեղից շտապենք Ղազարոսի գերեզման հասնել. թեև արժան չէ գերեզման անվանել այն, այլ մեռելների հարուժյուն:

«Երբ այս ասաց, բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Ղազարո՛ս, վե՛ր կաց, դո՛ւրս արի»: Եվ մեռելը ելավ՝ կապված ոտքերով, ձեռքերը՝ երիզով ամրացված և երեսը՝ վարչամակով պատած»: (Հովհ., ԺԱ, 43-44): Լա՛վ լսիր, աղաչո՛ւմ եմ: Երբ խորամուկս լինես՝ ընթերցելու աստվածային Գիրքը և իմանալու խոսքերի գորուժյունը, քո մտքով ոչ մի տառ թող գուր չանցնի, քանզի բոլոր շարագրվածքները հղի են երկնավոր իմաստությունք և իմաստուն մտքերի համար ծնում են հոգևոր բաներ, տգետների առջև ամլանում են, իսկ ունակների առջև բազմորդի հիշատակներ լինում, այդպես նաև բոլոր նրանց լսելիքում, ում ականջներն ու մտքերը առողջ են, ըստ այդմ և մտքերն են անուշանում:

Բարձր ձայնով աղաղակեց ու կանչեց մեռյալին. ձայնի սաստկությունը չէ, որ վեր կացրեց [մեռածին], ո՛չ, մտքովդ իսկ չանցկացնես: Երբ մի ժամանակ մեռյալը մեռելին հարուժյուն տվեց, ոչ մի ձայն չհասնեց: [Մեր Տերն] աղաղակեց մարդկանց բազմություն համար, որպեսզի ձայնի միջոցով լուծի ամենայն հակառակություն, ստիպեց, դեպի Իրեն կորզեց բոլոր աչքերը: «Մեռելի դիպչող ամեն ոք մինչև երեկո թող պիղծ համարվի» (տե՛ս Ղ-տ., ԺԱ, 24): Կատարեց օրենքի հրամանը. հեռու մնաց գերեզմանից տասներկու կանգուն՝ չմոտենալով մեռյալին, ձեռքի փոխարեն ձայնը բարձրացրեց, ձայնը եղավ երկնային որոտ, արտասուքը՝ օգտակար ամպի ցող, վե՛մի խստությունը փափկեց, և այն բերրի անդաստան դարձավ: Ձայնի սաստկությունը կակղեցրեց, հալեցրեց քարերը, որոնց վրա խոտ չէր բուսել, և դրանք ընդունեցին օգտակար առատ անձրևը և ամրացրին սերմերի թուղությունը: Նեխահոտն անուշաբույր դարձավ. ձայնը մտավ գերեզման, բունեց մեռածի ձեռքից, ո՛չ քաշեց և ո՛չ քայլեցրեց, որովհետև կապված էր կապանքներով, ինչպես որ հրեշտակն՝ Ամբակում մարգարեին, որ հնձողներին

կերակուր՝ եփված հաց ու թան էր տանում, տարավ [այն փոսի մոտ, ուր նետված էր Դանիել մարգարեն] (տե՛ս Դան., ԺԴ 32-36): Աստուծո խոսքն ավելի արագընթաց է, քան երկնքի հրեշտակը, և արագընթաց լինելուց առավել՝ հզոր է:

«Եվ Հիսուս նրանց ասաց. «Արձակեցե՛ք դրան և թողեք, որ գնա» (Հովհ., ԺԴ 44): Արձակեցե՛ք դուք, որ կապեցիք, քակեցե՛ք դուք, որ փաթաթեցիք, և կողոպտեցե՛ք դուք, որ պատանքեցիք. մի՛ դարչեք, նեխահոտ չկա, մի՛ խորչեք, ինչպես օրենքն է հրամայում, մեռած չէ, այլ կենդանի է, տեսե՛ք ձեր նշաններով, իմացե՛ք ձեր ձեռքերով: Բացե՛ք այդ փաթաթված բերանը և դուք նրա մահվան այլ վկանների հետ վկա՛ եղեք հարույթյանը, որ տեսաք: Մեկ մրգով ճանաչվում են երկրի բոլոր պտուղները. մեկ՝ ժամանակավոր հարույթյունը աւետիսն է ապագա [հարույթյան]:

Ո՛վ հիվանդույթյուն՝ կենդանույթյան հույս, ո՛վ հիվանդույթյուն՝ հարույթյան առհավատչյա, ո՛վ հիվանդույթյուն՝ մահվանն ընդդիմացող մարտիկ, ո՛վ հիվանդույթյուն՝ բանսարկուռի ոսոխ, ո՛վ հիվանդույթյուն, հավատի հիմք, թերահավատների հանդիմանույթյուն: Չեմ ախորժում հիվանդույթյուն անվանել, այլ հիվանդացած մտքերի բժշկույթյուն, ոչ մահացու հիվանդույթյուն, այլ հիվանդացած անձանց բժշկույթյուն, ո՛չ հիվանդույթյուն՝ մահվան նինջի, այլ ննջեցյալների՝ մահվանից կանգնելու համար, այլ մեր հարույթյան պատկեր: Սքանչանա՛նք Ղազարոսի նորահրաչ հարույթյամբ, պայծառանա՛նք աստվածային ներգործությամբ, բերկրե՛նք Ղազարոսի հարույթյամբ՝ նույն հույսը մեր անձերում հաստատելով: Թող ցնծա՛ն սուրբերի հոգիները, քանզի վերստին պիտի հազնեն իրենց մարմինները, որ մահվան մատնեց բանսարկուն: Թող մահը ողբա՛ իր թագավորույթյան կործանումը, թող դժոխքը կոծի՛, որովհետև քակտվեց իր գորույթյունը, թող հրճվի՛ նախաստեղծը

կորած ոչխարին փնտրելու եկած Հովվի գալստյամբ, թող ծա՛փ զարկեն հավատացյալները Ղազարոսի նորագման ժամանակ, թող սգա՛ն դեերը՝ տեսնելով իրենց կործանումը: Հարույթյան հույսի մասին թող ավետարանեն գերեզմաններում բնակվողներին, այսուհետև մեզ չի զարհուրեցնի մահը, չի դողացնի բանսարկուն՝ նա, ով մահվան պատճառ եղավ: Գտանք կենաց ծառը. հեռացավ սերովբեն, որ բոցեղեն սրով պահպանում էր այն, խափանվեց մահաբեր ծառի ազդեցությունը, թղենու տերևը պատռվեց, քանզի այսօրվա հարույթյունը մեր անմահույթյան գրավականը եղավ:

Ո՛վ աստվածային ձայնի գորույթյանը, որ պատուեց դժոխքը և դուրս կորգեց մահվան կողմից ըմբռնված հոգին: Ո՛վ աստվածային ձայնի գորույթյանը, որ քակտված անդամները վերստին նորոգեց կյանքի համար: Ո՛վ աստվածային ձայնի գորույթյանը, որ [մարմնից] բաժանված հոգին մի ակնթարթում միացրեց լուծված մարմնին առաջին ստեղծվածից ոչ պակաս պատվական հրաշագործությամբ: Ո՛վ ձայնի գորույթյանը, որ չիրմից կանգնեցրեց չորսօրյա մեռածին՝ կապված ոտքերով եւ արագորեն բերեց այնտեղ, ուր [Ինքն] էր:

Սիրելիներ՛ք, մեր մտքերն անբիծ հավատով սեւեռենք ձայնին և մեր մտքի աչքերով տեսնե՛նք կենդանույթյուն Տվողին՝ Քրիստոսին, դավանելով, որ նույն Ինքն է մեր հարույթյունն ու կյանքը, չկասկածե՛նք համընդհանուր հարույթյանը, քանզի ահա այդ ձայնը նաև մե՛զ է հարույթյուն տալու գերեզմաններից: Այսուհետ այստեղ փութա՛նք ապագա հարույթյան համար առավել օգտակար գործեր ամբարել, որպեսզի Փեսային ընդառաջ չեղնենք հանգած լապտերներով, որպեսզի երբ կանչվենք գերեզմաններից, մեր ձեռքին պատրաստ ունենանք ողորմության յուղը, որով պայծառանում են մեր լապտերները: Քանզի դրանից հետո

այլևս չկա վաճառատեղի, չես կարող գնել, ինչ որ հույս ունես գնել: Ա՛յժմ է վաճառահանդեսը, այստե՛ղ են ժողովված աղքատները, նրա՛նց մեջ գանձենք, ուր «ցեցը չի մոտենում» (տե՛ս Մատթ., Զ 19, Ղուկ., ԺԲ 33), նրա՛նց վստահենք գանձը, և գողը չի կարող պատերը ծակել, նրա՛նց ձեռքով դնենք պահեստի մեջ, որպեսզի այնտեղ դատավորի ձեռքում գտնենք: Ընթանանք դեպի մեղքերի լուծումը ավելի առաջ, քան Աթոռի դրվելը, ատյանի հրապարակում մերկ չկանգնենք, ավելի լավ է այժմ մենակ խոսել Դատավորի հետ, [ավելի] դյուրին է այստեղ լուծել մեղադրանքները, որպեսզի երբ գիշերվա մեջ ծագի Լույսը, և երևա արդարների Պարծանքը՝ ուշացող Փեսան, կարողանանք Նրան ընդառաջ ելնել պայծառ լապտերներով, որպեսզի դատաստանից փրկվելով՝ առագաստ մտնելու արժանանանք՝ հրավիրվածների հետ ժառանգելով անպատմելի ուրախությունները մեր Տեր Հիսուս Քրիստոսով, որին փառք հավիտյանս. ամեն:



## ՂԱԶԱՐՈՍԻ՝ ԾԱԲԱԹ ՕՐԸ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Մ**յս վեց շաբաթը խորհրդանշում է վեց հազար դարը, իսկ այս շաբաթը մեր բնության հարուստյան ու դատաստան [խորհուրդն] ունի, քանզի [մեր Տիրոջ]՝ Երուսաղեմ գնալն ու քաղաքի դղրդալը հայտնում են մեռելների հարուստյան մասին: Ինչպես որ Պասեքի շաբաթ օրվա ճրագալույցը հայտնում է Քրիստոսի՝ մեր Աստծո՛ւ գիշերով հարուստուն առած լինելու մասին և մինչև հարուստունը տեղի ունենալը կանխագուշակում է այն, այդպես էլ սրանով՝ [Ղազարոսի հարուստյամբ], ցույց է տալիս բոլոր մարդկանց հարուստունը, որ տեղի է ունենալու է կիրակի օրը: Եվ ինչպես որ [Տերը] նախ ասաց իր հարուստյան մասին և ապա հարուստուն առավ, և ինչպես որ նախ մարգարեները կանխագուշակեցին, և ապա Քրիստոս կատարեց, այդպես էլ Տերը նախ ավետարանում է. «Կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն Նրա ձայնը և դուրս կգան» (Հովհ., Ե 29):

[Այդ ժամանակը] հիմա է, որովհետև Ղազարոսի հարուստունը օրինակն է մեր մարդկային բնության [հարուստյան]: Որովհետև երբ [մեր Տերը] կամեցավ բժշկել նախաստեղծի ամբողջ մարմինը, սկսեց ամենափոքր անդամներից. մեկի չորացած ձեռքը [բժշկեց], մյուսի բորոտությունը, մեկ ուրիշի աչքերը, [ապա] սակավ առ սակավ սկսեց հարուստուն տալ. Նային քաղաքի մի այրի կնոջ որդուն և հազարապետի դստերը, և ապա Բեթանիայում, իբրև բոլոր մարմինների հարուստյան առհավատչյա՝ [հարուստուն տվեց] Ղազարոսին:

Ղազարոսը մեռավ շաբաթվա այն օրը, երբ մատնվեց Հիսուս, և Տերը նրան հարուստուն տվեց այն օրը, երբ ին-

քը ննջեց գերեզմանում: Ահա թե ինչու է Ադամն իր ծնունդներով գոհացողական ձայնով երգում. «Տե՛ր, հոգիս դժոխքից հանեցիր և փոսն իջնողների միջից փրկեցիր ինձ» (Սաղմ., ԻԹ՝ 4) [ասելով] բոլոր մարմինների նորոգման մասին: Եվ կատարյալ փրկագործությունը, Քրիստոսի չարչարանքներն ու հարույթունը պահվում են, իսկ Ղազարոսի՝ քառասուն[օրյա պահքից] հետո հարույթունը ցույց է տալիս, թե պահքն ու աղոթքը Քրիստոսին չարչարակից են դարձնում մեզ: Ղազարոսի հարույթյան օրինակով պահքով և աղոթքով մեր հոգին կանգնեցնենք զանազան ախտերով գլորումից: Եվ որովհետև տասներորդ ժամին մեղանչեցինք և դրախտից դուրս ելանք, մեր՝ դրախտից դուրս ելնելու նույն ժամին բոլորի Տերը խաչից գերեզման իջավ, և այդ նույն ժամին էլ հարույթուն տվեց Ղազարոսին:

«Եվ մի հիվանդ կար՝ Ղազարոս անունով» (Հովհ., ԺԱ 1), որ ըստ եբրայեցիների՝ օգնական է նշանակում: Իսկ հիվանդությունը, ըստ իմանալի տեսության, խորհրդանշում է մարդկային ազգի մեղքերը, մեռնելը՝ մեղքերի [պատճառով] մահը, որ չար է:

«Բեթանիայից», որ նշանակում է աշխարհի սգո տուն՝ ըստ Ադամի հանցավորության նմանության: Սգակից են լինում բոլոր արարածները, մինչև այժմ ողբում են, հեծեծում ու հառաչում են Ադամի՝ փառքի դրախտի վայելչությունից, կենդանի Աստուծո [տեսությունից] ընկնելու համար: Իսկ Հիսուս Քրիստոսով արձակվեցինք մեղքերի կապանքներից՝ Նրանով կյանքի նորոգման համար:

«Մարիամի գյուղից»՝ լուսավորվելու տերունական լույսով և Նրա գալստյամբ:

Սա այն Մարիամն էր, որ իր եղբոր հարույթուն առնելու համար վաճառեց իր ամբողջ ունեցվածքը և գնեց այն յուղը, որով օծեց Տիրոջ ոտքերը, ջրով լվաց և սրբեց իր մա-

գերով իրենց տանը, «ուր Ղազարոսը սեղան նստածներից մեկն էր» (Հովհ., ԺԲ 3): Ո՛չ թե այն պոռնիկն է, որը բորոտ Սիմոնի տանը օծեց Տիրոջը (որի մասին պատմում են երեք ավետարանիչները): Այս Մարիամը լի էր մաքրույթյամբ ու պարկեշտությամբ և «լավագույն [մասն ընտրեց]» (տե՛ս Ղուկ., Ժ 41) աստվածային [պատգամների մեջ]:

«Եվ Մարթայի»՝ ասվում է տերունական գալստյամբ ցնծացող:

«Որոնց եղբայրը հիվանդ էր» (Հովհ., ԺԱ 2): «Եղբայր» [բառը] քույրերին հարազատ լինելն է հայտնում. թվում է՝ նրանց մասին է ասված. «Սրա համար (իրենց հիվանդ եղբորը օգնելու համար) օրիորդները սիրեցին քեզ» (Երգ, Ա 2): Պատմագիրները սովորությունն է իրադարձությունների մասին պատմելիս ցույց տալ դրանց տեղերը՝ իրենց խոսքերը հավաստի դարձնելու համար: Իսկ ինչո՞ւ է կանանց և ոչ Ղազարոսի գյուղ անվանում: Քանզի թեև այն վայրը բոլորին էր, մանավանդ [առավել] Ղազարոսինը, քան նրա քույրերինը, բայց ավելի տեղին էր վայրն անվանել ողջերի, քան մեռածի անունով: Իսկ [Մարիամի՝] Տիրոջ ոտքերը օծելը [նրա՝ Տիրոջ հանդեպ] սիրո առավելությունն էր իր երբորը [Նրա] արած մեծ երախտիքի համար, իսկ [Նրա ոտքերը] իր մագերով սրբելը՝ որովհետև ավելի պատվական ոչինչ չունեք բացի գլխից, որով սպասում էր կենսաբեր ոտքերին:

Հիսուս Հորդանանի այն կողմում էր, շրջում էր այն վայրերում և դեպի կենդանություն էր որսում ամբողջ անապատը:

«Սրա քույրերը Նրա մոտ մարդ ուղարկեցին» (Հովհ., ԺԱ 3): Որ խորհրդանշում է մարգարեների դասերին:

«Տե՛ր, ում Դու սիրում էիր, հիվանդացել է»: Դեռևս կատարյալ հավատ չունեին և խորհում էին իրենց եղբոր հան-

դեպ գուլթ առաջացնելու համար հիշատակել [Տիրոջ՝] նրան սիրելը:

«Երբ Հիսուս լսեց»: Լսեց հիվանդի մասին գուլթը, թույլ տվեց, որ մահն իշխի նրա վրա և մահացնի:

«Այդ հիվանդուկները մահաբեր է, այլ Աստծու փառքի համար է»: Յուլյց է տալիս, որ հիվանդուկներն իշխանուկներն չունի նրան մահվան տանելու, բայց փոքր-ինչ ժամանակ [թույլ է տալիս], որպեսզի հոգևոր Աստծու փառքը: Յուլյց է տալիս [նաև], թե Նա հեռվից բռնեց հիվանդի զարկերակը, մանրամասն զննեց, ճշմարիտ պատմությունն արեց և որպես Տեր՝ իշխանուկները քնից արթնացրեց իր ծառային: Մարդիկ քնած ժամանակ այգանվում են սիրելիներից՝ չկարողանալով օգնել, վեր կացնելով՝ Աստված փառավորվում է իր հայրական փառքով, և Որդին ցնծալով բերկրում է Աստծու փառքի համար: Ինձ թվում է՝ դեպի Հայրն է տանում խոսքը, ինչպես որ ապագերեզմանի վրա աղոթում է [Իր Աստվածուկները] ժխտող, Իրեն Աստծուն հակառակ անվանող հրեաների պատճառով: Աղոթում է Հորը Նա, Ով աստվածային հրամանով պիտի կանչեր մեռյալին՝ հայտնի դարձնելով Հոր և Իր կամ[ակցությունն] ու փառակցությունը: Դարձյալ՝ կանխապես գուշակեց ծերերի ու մանուկների կողմից տրվելիք փառաբանությունը:

«Քույրերը մարդ ուղարկեցին Նրա մոտ»: Բազում աղերսանքներով ուղարկեցին, մեծ թախանձանքով աղաչեցին, առանց երկբայելու հավատացին բոլոր մեռելներին հարուկներն Տիրոջին, բայց մարդկորեն շտապեցին, քանի դեռ հիվանդը չէր մահացել: Ինչն է առավել հեշտուկները վնասվող, քան մարմինը, որն ավելի շատ սայթաքում է, քան առողջ է, քանի որ հոգին, որ ելնում է, այլևս չի վերադառնում. [մարմինը] շարժող հոգին գնում է, ամբողջ

մարմինն ընկնում է ապականության ներքո և հող է դառնում: Այդ պատճառով էլ Ղազարոսի քույրերն ալեկոծված էին իրենց մտքում և Նրան իբրև Աստծու հավատալով՝ որպես ճարտար Բժշկի՝ հիվանդի մոտ կանչեցին:

«Երկու օր մնաց այնտեղ»: Թույլ տվեց ավագակին՝ մտնելու իր սիրելիի տունը, ապականություն գործելու և խռովեցնելու: Գոռոզացավ մահը և կատարեց իր կամքը:

«Հիսուս լսեց և ասաց»: Հիսուս ոչ մի պատասխան չտվեց. [ո՛չ ասաց] գնալու և բժշկելու և ո՛չ էլ չգնալու և անտեսելու մասին: Ասացին հիվանդի, բայց լսեցին փառքի անունը և գնացին տրտմուկներով: «Երկու օր մնալ» [ասելով՝ կա՛մ] բացահայտում է նախահայրերի մոտ գալստյան ժամանակը, կա՛մ էլ մոլեգնոտ հրեաներին հանդիմանելու համար է, որպեսզի ամբողջ երկիրը տեսնի և իմանա [Ղազարոսի] մահվան մասին, որ աստվածագործ հրաշքն առավել պայծառուկներ էր եկա:

«Հիսուս սիրում էր Մարիամին, Մարթային և նրանց եղբորը՝ Ղազարոսին» (Հովհ., ԺԱ. 5): Ըստ այն խոսքի, որ Քրիստոսի անունից առակագիրն է ասում. «Ես սիրում եմ նրանց, ովքեր սիրում են ինձ, և շնորհներ եմ բաշխում իմ բարեկամներին» (տե՛ս Առակ., Ը 17): Քանզի Տիրոջ՝ Եգիպտոս իջնելուց առաջ նրանք գնացել էին Ագրիանապոլիս և մեծ սիրով գրկել և իրենց բազուկների վրա էին կրել ամեն բան Կրողին, բոլորի մեղքերը Վերացնողին, Հոր Սկզբնակցին, Միածնին, իսկ երբ Տերը վերադարձել էր Եգիպտոսից, սրանք նույնպես կույս Մարիամի ու Հովսեփի հետ եկել էին Բեթանիա:

«Եվ Հիսուս աշակերտներին ասում է. «Եկե՛ք գնանք Հրեաստան» (տե՛ս Հովհ., ԺԱ. 7): Մահվան երկյուղը այնտեղ էլ եկավ և շատ ավելի տագնապեցրեց նրանց, քան Ղազարոսի քույրերին: Քանզի սովորությունն չէր նրանց հայտնել տեղը, ուր պիտի գնար:

Ինչո՞ւ եք այդքան զարհուրում ու դողում. մի՞թե չեք ելնելու այդ մարմնից, մի՞թե Տիրոջից իսկ չլսեցիք. «Մի՛ վախեցեք նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող» (Մատթ., Ժ 28): Նա հոգին ու մարմինը փրկում է մահից:

«Տե՛ր, – ասում են, – հրեաները Քեզ փնտրում են, որպեսզի սպանեն, իսկ Դու այնտե՞ղ ես գնում» (տե՛ս Հովն., ԺԱ 8): Աշակերտներին այսուայն կողմ էր տարուբերում, չէր կամենում նրանց հայտնի դարձնել խորհուրդը, որովհետև հարուժյան հրաշքներ տեսել էին, բայց չէին հավատացել: [Տերը] հարուժյուն էր տվել Հայրուսի տասներկուամյա դստերն ու Նային քաղաքի այրու որդուն: Նա, ով կարող է [մեկ] մեռյալի հարուժյուն տալ, [հարուժյուն կտա] նաև բոլոր ննջեցյալներին, եթե հալածեց ուրիշների մահը, ապա առավել ևս ձերը [կհալածի]: Թաքոր լեռան վրա Հորից լսեցիք. «Դա՛ է իմ սիրելի Որդին, Դրա՛ն լսեցեք» (Ղուկ., Թ 35), բայց դուք, փոխանակ Նրան լսելու, պատվիրում եք չգնալ Հրեաստան. եթե ձեզ հայտնած լիներ Ղազարոսի [մահվան] խորհուրդը, [միևնույն է,] չէիք հավատա ձեր մտքերի տկարուժյան պատճառով:

«Իսկ Հիսուս պատասխանեց. «Ցերեկը տասներկու ժամ ունի» (Հովն., ԺԱ 9): Ամբողջ օրվա մասին է ասում, քանզի Տիրոջ օրն է, որով լուծվում է կռապաշտության խավարը [նրանց], ովքեր ցերեկով են գնում: Երբայցի ճարտասանները լույսին են օր ասում, Լույս է Քրիստոս, որ լուսավորում է:

«Ով ցերեկով է քայլում, չի սայթաքում»: Որքան առավել [չեք սայթաքի] դուք, որ ինձ հետ եք, ինձ, որ աշխարհի լույսն եմ: Մի՛ ընկալիր իբրև մարմնի աչքի տեսնելու և մարդկանց և բոլոր կենդանիների երկյուղի մասին ասված խոսք, երբ թույլերը վախենում են ուժեղներից, այլ ես ա-

սում եմ հավատով տեսնելու մասին, որ ապագան տեսնում է այժմ. ով իր հոգում չունի այդ տեսողությունը, եթե անգամ կեսօրին է քայլում, սայթաքում է, որովհետև հանապազ խավարն ունի իր հետ: Փոքր-ինչ կրթեց նրանց մտքերը, մինչև որ մեռածը գերեզման իջավ:

Ապա ասում է. «Մեր բարեկամ Ղազարոսը ննջել է, գնամ արթնացնեմ նրան» (Հովն., ԺԱ 11): Իբրև մանուկների՝ կաթով ես կերակրում, մայրաբար ծնում, դայակի պես սնում ես և նրանց տգիտությունը ծածկում ես իմաստությունամբ. ե՞րբ էիր դու Ղազարոսի սենեկապետը, որ երկու օրվա ճանապարհ էս գնում՝ նրան զարթնեցնելու համար. մի՞թե թմրել է գինուց, կամ ո՞վ է չորս օր ու չորս գիշեր քնած մնում. նրա քույրերն ինչո՞ւ չեն արթնացնում նրան: Անմեղ գառներ էին աշակերտները. ինչպես տեսնում էին, այդպես էլ ընկալում էին, և ինչ որ լսում էին, նույնին էլ հավատում էին բնավ չէին կարողանում հասու լինել աստվածային խորհրդին: Այստեղ հայտնում է Բեթանիա և ոչ թե Երուսաղեմ գնալու մասին, որպեսզի նրանց մտքից փարատի երկյուղը, իսկ «զարթնեցնեմ» [ասելով]՝ ցույց է տալիս Ղազարոսի հանդեպ իր հոգացողությունը:

«Տե՛ր, եթե ննջել է, ապա կառողջանա»: Շատ հիվանդներ են ննջում, բայց չեն ապրում, շատերն էլ չեն ննջում, բայց ապրում են: Ո՛վ անգետների փաղաքշանք. կամենում էին սփոփել Ծածկատեսին. աշակերտները գիտեին, որ մեր Տերը սիրում է անմեղ Ղազարոսին, և չէին կամենում, որ նրա ընտանիքը վշտանա: Նրանք կարծում էին, թե [Ղազարոսը] ննջել է, նա կապրի ու կառողջանա:

Տերը բացեց ծածուկ խորհուրդը և հայտնապես ասաց. «Մեր բարեկամ Ղազարոսը մեռավ»: Որպեսզի հանկարծակի վեր չթռչեն ճշալով կամ կոծելով, ասում էր՝ մեռավ, որով, այսինքն՝ օրենքով, բռնված էր մարդկային ազգը, որ



Քրիստոսով անմահության պիտի փոխվեր Ղազարոսի հարուստի մեջ, որ օրինակն էր ապագայում կատարվելիքի:

«Ես ուրախ եմ ձեզ համար, որպեսզի դուք հավատաք, որ ես այնտեղ չէի» (Հովհ., ԺԱ, 15): Խրթին խոսք, որն հասկանալի չկարողացան. մահվան անունն ու ուրախության [ավետիսը միաժամանակ] հնչեցին նրանց ականջներում, և զարմացան՝ չկարողանալով հասու լինել երկմիտ խոսքին: Բայց երկչոտ Թովմասը մեզ տեղյակ է դարձնում նրանց տխմարությունը: Չեմ մեծարում նրան, այլ. «Ուրախ եմ» ձեր հավատի հաստատման համար, որովհետև պիտի տեսնեք իմ գորությունը չափը:

«Թովմասն ասում է. «Եկե՛ք մենք էլ գնանք, որ նրա հետ մեռնենք» (Հովհ., ԺԱ, 16): Սա գնում է՝ մեռյալին հարություն տալու, իսկ մենք՝ ողջերս, մահվան ենք պատրաստվում. որովհետև այժմ տարակուսել էին: Հողագործ մշակների համար շատ ավելի դյուրին է վարել կոշտացած հողը, քան գիտունների համար՝ տգետների հավանության բերելը. հողագործը չորացած հողի վրա քիչ է աշխատում և շատ պտուղներ է ակնկալում, իսկ տգիտությունը կույր մարդուն միայն Աստված կարող է գիտություն բերել: Որքան զորանում էր թերահավատությունը, բոլոր կողմերից ուրախություն էր լինում բոլորի անհավատությունը. Իր Հայրական գորությունը Հզորը գործեց:

«Հիսուս եկավ, Ղազարոսին գտավ չորս օրից ի վեր գերեզմանի մեջ: Այն գյուղը մոտ էր Երուսաղեմին» (տե՛ս Հովհ., ԺԱ, 17). այսինքն՝ սուգը մերձ էր ուրախությունն ու խաղաղությունը:

«Տասնհինգ ասպարեզ» մինչև Երուսաղեմ. ասպարեզը ճանապարհի երկու մղոն է: Ծնունդից մինչև խաչելություն կրկնակի թվով. երեք [անգամ] հինգ շարժվող զգայարաններով՝ աչքերով, ականջներով, քթով, բերանով և շոշափե-

լիքով, որոնք միացրեց իր հոսթյանը, երբ երկինք համբարձվեց, և նրա հետ հարություն տվեց և նստեցրեց Հոր հետ:

«Հրեաներից շատերը եկել էին Մարթայի ու Մարիամի մոտ» (Հովհ., ԺԱ, 19): «Գալը» աստվածային տեսչությունը իմացվում է «լինել», որպեսզի Աստուծո գործած հրաշքները տեսնող լինեին. քանզի ոմանք օգտվեցին՝ Հաստատվելով և խարսխվելով Քրիստոսի հավատին:

«Որպեսզի մխիթարեն նրանց»: Ազարակը քաղաք էր դարձել, և քաղաքը՝ ազարակ. քաղաքի ամբողջ ժողովուրդը եկել էր նրանց վշտակցելու: Քանզի մեր բնությունն սովորույթն է այնպիսին. սիրում է լսել ուրիշների բովեր, ուրախությունն տուն մտնելուց առավել սիրում է սգո տուն մտնել. մեկը՝ աներեսություն, մյուսը՝ չարախնդալու, շատերը՝ շատախոսելու համար, և շատ քչերն են, որ տրտմակից են լինում: Քանզի Երուսաղեմում պիտի գործվեին հրաշքները:

«Երբ Մարթան լսեց, որ Հիսուս գալիս է, Նրան ընդառաջ գնաց»: Մարթան ընդառաջ գնաց, ինչպես օրենքն ու մարգարեները, որ գուշակելով՝ Քրիստոսին աշխարհի Փրկիչ պիտի ցույց տար:

«Իսկ Մարիամը տանը նստած էր»: Մեկը եղավ իբրև բերանի խոսք, իսկ մյուսը՝ իբրև սիրտ՝ խորհուրդների շտեմարան. սիրտն իր տեղում հաստատուն մնաց, իսկ խոսքն ընդառաջ գնաց՝ հայտնելու սգավոր սրտի պաղատանքը Նրան, Ով կարող է վերացնել սուգը Իր սիրելիների տնից: Մարթան, որ խոսքն է, տեսավ, որ [իրենց տանն] հավաքված բոլոր մխիթարիչների հոգիները լի են տրտմությամբ. տրտումը տրտումին ուրախացնել չի կարող, և սգավորը սգավորին չի մխիթարի: Մեկն ասում էր. «Մի՛ այրվիր, իմ եղբայրը ավելի վաղ մեռավ՝ դեռ մանուկ», և ուրիշներ ի-

րենց հարազատների տարածամ մահերի մասին էին պատմում և կտոր-կտոր անում սրտերը, գալարում աղիքները, վայր վրա վայ ավելացնում: Մարթան թողեց այս ամենը և Հիսուսին ասաց. «Տե՛ր, եթե Դու այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի» (Հովհ., ԺԱ, 21): Մարգարեացավ Մարթան: «Ով մարգարեին ընդունում է իբրև մարգարեի, մարգարեի վարձ կստանա, իսկ ով Աստծուն է ընդունում, աստվածային փառքը կժառանգի» (տե՛ս Մատթ., Ժ 41): Այդ ասաց երկնավոր իմաստությամբ և դեպի աստվածային փառքերը բարձրացավ, քանի որ մահը չի մտնում այնտեղ, ուր Կենդանությունն է: Տերը բազում անգամ մտել էր Մարթայի ու Մարիամի տուն և [կարո՛ղ էր] մահն հալածել գյուղից, ուր մնաց թե՛ նրանց տնից: Հոգևոր իմաստությունը, աստվածային սերը, ճշմարիտ հավատը և ստույգ մարգարեությունը չորս հարազատ եղբայրներ են, քանզի նրանց շարժողը Մեկն է՝ Աստված: Ինչպես որ երածիշտն է մեկ բերանով փչում նվագարանն ու բազում փողերը. մեկը՝ պարզ, մյուսը՝ թավ, մեկ այլը՝ թանձր, այսպես և Մարթան, Մարիամը և Ղազարոսը (եթե այլ մեկն էլ լիներ նրանց տանը), բոլորը մի հավատ ունեին, մի սիրով էին սիրում Քրիստոսին, բոլորը մի հոգևոր իմաստություն ունեին:

«Հիմա գիտեմ, թե ինչ էլ որ Աստծուց խնդրես, Աստված քեզ կտա» (Հովհ., ԺԱ, 22): Կինը մարգարեացավ ո՛չ միայն մեկ մեռյալի հարուցությունը, այլ դարերի ընթացքում [բոլոր մեռյալներին], որ. «Կարո՛ղ ես հարուցություն տալ Հոր և Հոգու կամակցութեամբ»: Տերն ասում էր. «Ամեն բան տրվեց ինձ Հորից» (Ղուկ., Ժ 22): Մա հաստատում էր լսողների միտքը. «Ոչ ոք չի ճանաչում Հորը, բացի Որդուց, և ոչ ոք չի ճանաչում Որդուն, բացի Հորից». այս խոսքերը [Հոր և Որդու] միակամությունն ու Մի բնությունն են ցույց տալիս և ո՛չ թե ավագություն կամ կրտսերություն, այդ պատճառով էլ Քրիստոս հավանեց Մարթայի հավատը:

ուով էլ Քրիստոս հավանեց Մարթայի հավատը:

«Հիսուս նրան ասաց. «Քո եղբայրը հարուցյուն կառնի» (Հովհ., ԺԱ, 22): Տերը նրան հայտնեց նրա եղբոր առաջին ու վերջին հարուցյան մասին: Ո՛չ աղաչանքներ են պետք, ո՛չ էլ կասկած՝ հայցվածքների մեջ, ինչպես թվում է ոմանց:

«Գիտեմ, որ հարուցյան ժամանակ՝ վերջին օրը, հարուցյուն կառնի»: Երկնքի դռները բացվեցին կնոջ առջև. կինն իր աչքերով տեսավ անսկզբնական Լույսը, հասավ անմատչելի տեղը, հավասարվեց Զեբեդեոսի որդուն, ոչ թե մարմնով Հիսուսի կրծքին ընկավ, այլ Աստծուց [տրված] իմաստությունը զորացավ, շոշափեց կենաց խոսքը, Աստծու կյանքին փոխվեց, բացվեցին նրա մտքի աչքերը, լուսավորվեց ներքին մարդը, եկավ արտասուքով, լցվեց ուրախությամբ: Վշտացողը բերկրեց, նրա երեսների գույնը զվարթացավ, լսեց հարուցյան ավետիս, մինչև եղբոր հարուցյուն առնելը տեսավ նրան, որովհետև բոլոր մեռյալներին Կենդանացնողին տեսավ:

«Ես իսկ եմ հարուցյունը և կյանքը» (Հովհ., ԺԱ, 25): Եղիան հարուցյուն տվեց մեռածներին, բայց նրանք կրկին մեռան, Եղիսեն [նույնպես] երկու հոգու [հարուցյուն տվեց]: Ես հարուցյուն եմ տալիս և անմահության մեջ պահում: «Ով հավատում է ինձ, թեպետև մեռնի, կապրի, և ով ինձ հավատում է, հավիտյան մահ չի ճաշակի» (Հովհ., ԺԱ, 25-26), ինչպես որ մոտիկից պիտի տեսնես, այդպես և ինձ հավատացողները պիտի փրկվեն հավիտենական մահից: Որովհետև հույժ բարձր [բան] էր ասում Փրկիչը, ուստիև իր վարդապետության վարձը փնտրեց նրանից. «Հավատո՞ւմ ես այն ամենին, ինչ լսեցիր»: Թեև երկմիտ էր նրա խոսքը, բայց Մարթան իր հույսը նրա վրա դրեց, ասաց. «Այո՛, Տե՛ր, ես հավատում եմ, որ դո՛ւ ես Քրիստոսը՝ Աստծու Որդին, որ աշխարհ էիր գալու»: Մարգարեների խոսքը կրկնեց, ինչ-



պես այն սամարացի կինն ասաց. «Երբ Մեսիան գա, մեզ ամեն բան կպատմի» (Հովհ., Գ, 25): Ասաց կուսական ծննդյան մասին և ակնարկեց երկրորդ գալուստը, ամեն բանի տեղյակ եղավ և Աստծու մեծամեծ [գործերի մասին] լսեց: Եկավ տրտում՝ իբրև մարդ, և գնաց ուրախացած՝ իբրև Աստծու հրեշտակ, լուելյայն կանչեց իր քրոջը, որ հեշտակամ աշակերտեց նույն վարդապետությունը: Հրեաների պատճառով գաղտնաբար ակնարկեց իր քրոջը, որպեսզի իր քույրը նույնպես նույն խնդրանքը դնի Քրիստոսի առջև և շարժի Նրա գուլթը, որպեսզի Նա կենդանացնի իրենց եղբորը: Եվ Մարիամը կրկնեց քրոջ խոսքերը: Մարթան ասաց. «Վարդապետը եկել է և քեզ է կանչում»: Արդարև, ճշմարիտ վարդապետն առանց այբուբենի է սովորեցնում, ուսուցման համար անհրաժեշտ ամեն բան կատարում: «Վարդապետ» ասաց և մտավ աշակերտների կարգի մեջ:

«Երբ նա լսեց, իսկույն վեր կացավ և եկավ Հիսուսի մոտ»՝ դեպի նույն տեղն ու նույն ուրախությունը, դեպի նույն Ուսուցիչը. և Նա մեկին՝ ծածուկ, մյուսին հայտնի կերպով այս սգավոր աշխարհից ձգեց անտրտում ուրախություն կյանք: Հիսուս դեռևս գյուղ չէր մտել, այլ դեռ այնտեղ էր, ուր Նրան ընդառաջ էր եկել Մարթան: Ինչո՞ւ էր հապաղում և դեպի գերեզման չէր շտապում, որպեսզի Նրա գալստյան լուրն առնելով՝ ժողովուրդը հավաքվի, յուրաքանչյուր ոք շտապի՝ տեսնելու աստվածագործ նշանները, որոնք դադարել էին մարդկանց մեջ պատվիրանապահությունը դադարելու պատճառով, և մեղքերի պատճառով մարդը մերկացել էր աստվածատուր փառքերից: Այստեղ ահա կյանք էր տալիս գերեզմանից Ղազարոսի՝ Աստծու պատվիրանները պահած լինելու համար:

Իսկ հրեաները, որոնք եկել էին նրանց մխիթարելու, երկնային ուրախությունից դատարկ մնացին, տանը նստած,

սգից թախծելով, արտասվում էին առաջվա պես և «Երբ տեսան Մարիամին, որ վեր կացավ իսկույն և գնաց, իրենք նույնպես գնացին նրա ետևից» նույն տրտմությունը՝ ո՛չ թե հարությունը տեսնելու, այլ՝ մեռյալի գերեզմանը, որովհետև. «Ով ունի, նրան պիտի տրվի և պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցածն էլ» (Մատթ., ԺԳ 12) ոչ թե որովհետև Տվողն ազահ է, այլ որովհետև ընդունողն անարժան է, ինչպես երևում է առաքյալների և Հուդայի դեպքում:

«Կարծում էին, թե գերեզման է գնում, որ այնտեղ լաց լինի» (Հովհ., ԺԱ 31): Որովհետև հանապազ գերեզմանասեր էին, ոչ միայն մարդկանց, այլ նաև սուտ աստվածների մասին էին ասում, թե մեռել է. ինչպես մարգարեն է ասում. «Նստած ողբում էին Թամուզին» (տե՛ս Եզեկ., Ը 14):

«Իսկ Մարիամը եկավ Հիսուսի մոտ»: Մարիամը հեռացավ նրանցից և եկավ Նրա մոտ, ում արդեն իսկ ճանաչում էր. «Եթե իմ բազում մեղքերին ձրի թողություն տվեց, ապա ուրեմն կարող է նաև ծանր տրտմությունս փարատել»: Ընկավ Հիսուսի ոտքերի առջև և ասում է. «Տե՛ր, եթե Դու այստեղ լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի»: Մի դպրոցի աշակերտները մի լեզվով են խոսում, Վարդապետի կամքին միաբան աստվածային ուսմամբ են կրթվում: Այդպես էլ երկու քույրերն իբրև մեկ կենդանի որս բռնվեցին, մի սիրով սիրեցին Տիրոջը, մի աղբյուրից խմեցին կենդանի ջուրը, տեսան մարդացած Աստծուն, հավատացին բոլորի Տիրոջը: Թվում է, խորհել էին Հիսուսին բերել, որպեսզի կենդանացնի իրենց եղբորը. որովհետև երկուսի խոսքն էլ նույնն է. երբ խոսում են իրենց մեռած հարազատի մասին, [կարծես] ասում են. «Տե՛ր, եթե չանտեսեիր մարդկային ազգին, չէին մեռնի մեղքերով մահվամբ. «Որովհետև մենք մեղանչեցինք, Դու բարկացար» (Եսայի, ԿԳ 5), — ասում է մար-

գարեաներից մեկը՝ իբրև պարկեշտ վարք ունենալու սքանչելի խրատ:

«Հիսուս տեսավ, որ նա լալիս է, և նրա հետ եղողներն էլ լալիս են»: Հոգնած մարմնից քրտինք է բխում, իսկ գայրազին սրտից արտասուք է հեղվում մեռյալի, նաև ողջ սիրելիի վրա, երբ նա հեռվից է գալիս: Մարիամը տեսավ Հիսուսին, և գուժի երկունքը ստիպեց նրան մեռածի հիշատակով, բայց չճշաց ըստ աշխարհի կարգի, այլ ցնծությամբ արտասուք թափեց Ողորմածի առջև այնպիսի աղիողորմ տեսքով, որ մինչև իսկ բարձրաձայն ողբով լաց լինել տվեց հրեաներին: Խռովվեց իր հոգում, ամբողջ գորությամբ տրտմեց, չկարողացավ պարզաբար ասել՝ ո՞ւր դրեցիք, այլ մոռնալով, կիսաբան տրտմակից եղավ իր սիրելիի համար: Հորդահոս անձրևներից բերրի են դառնում անդաստանները և դալար խոտ են բուսցնում արածող անասունների համար, նույնպես և մարդկային հորդ արտասուքն է շարժում Աստծու գուժը: Նրանց սգակից եղավ, որպեսզի մարդիկ Աստծով մխիթարվողներ լինեն: Կամ մոռնաց սատանայի, ինչպես առյուծը իր որսի վրա, որովհետև տրտմածները ստուգապես շարժել չէին կարողանում Նրան, ինչպես որ մեզ են հաղթում մարմնի շարժումները, որովհետև աստվածային բնությունն անախտ ու անտրտում է: Իսկ Նրա խռովվելը նշանակում է, թե հրամայեց տրտմությանը՝ գալու և կամավորաբար արտասուքներ բխեցնելու: Սա ցույց է տալիս, թե երբ ինքն էր կամենում, այնժամ էր զիջում բնական կարիքներին՝ հայտնի դարձնելով իր ճշմարիտ մարդեղությունը, քանի որ թեպետև Աստված միացավ մարմնին, բայց մարմնին բնական կարիքներով շարժվել չտվեց, այլ երբ ինքը թույլ էր տալիս, իջնում էր ուտելու, խմելու և քնելու, և երբ կամենում էր, անցնում էր, որ գերիվեր է մեր բնությունից, պահում էր իրեն աստվածային միությամբ:

«Ասում է. «Ո՞ւր դրեցիք նրան»: Նրան ասացին: «Արի՛ և տե՛ս»: Ոչ անգիտությամբ, ինչպես Նրա Հայրն էր հարցնում. «Ո՞ւր ես, Ադամ՝» (ՄԱՌ., Գ 9), Կայենին՝ «Ո՞ւր է քո եղբայր Աբելը» (ՄԱՌ., Գ 9), և Մովսեսին՝ «Այդ ի՞նչ է քո ձեռքին» (ԵԽ, Դ 2): Արարիչը փնտրում է իր պատկերին՝ նրան, ում իր կերպարանքով ստեղծեց, իսկ չարը նախանձեց Ադամի բարիքներին և վայր գցեց նրան երանելի կյանքից. Տերը եկած՝ որսում էր մարդկության փրկությունը: Բեթանիայից մինչև Բեթաբեթ յոթանասուներկու մղոն է. այնքան հեռվից իմացար Ղազարոսի մահը, իսկ կամրջի մոտ անգիտանո՞ւմ ես: Դուք դիակ դրեցիք, ես կենդանի եմ վերցնում նրան, դուք դազաղով տարաք, ես ձայնով հարուժյուն եմ տալիս: Ուրեմն ինչո՞ւ ես հարցնում, Տե՛ր: Ասում է՝ աստվածային հրաշք եմ գործելու այստեղ. [չլի՛նի թե] մարդիկ զրկվեն: Զգուշանում է երկու կողմի՝ և՛ հոգիների, և՛ մարմինների համար էլ, որովհետև մարդացած Աստված էր, բայց որպեսզի իրենք իսկ ցույց տան տեղը և վկա լինեն և՛ մեռածին, և՛ տեղին:

«Հիսուս արտասվեց»: Ոչ միայն մարմնի աչքերն են արտասվում, այլ ամբողջ մարմինն է քրտնում, որով մեր Տերը բազում անգամ շարժվեց աշխարհում, քանզի Նա [կրեց մարդկային] մինչև իսկ ամենանվազագույն կարիքը, որպեսզի իր՝ [մեզ հետ] ազգակցությունը, [նաև] մեզ վշտակից լինելով, ցույց տա: Դարձյալ՝ որպեսզի այն իբրև սահման և կետ ուսուցանի, հավատացյալների այնքան արտասվելը, որ իրենց մեջ հարուժյան հույս ունենան: Դարձյալ՝ որպեսզի, մեռյալին տեսնելով, արտասվեն այն մարդու վրա, որ ի սկզբանե [մահվան] ժառանգորդ դարձրեց մարդկային ազգը: Կամ էլ արտասվեց հրեաների վրա, որ թերահավատելով՝ ետ պիտի կանգներ աստվածագործ նշաններից և գեհենի ժառանգորդ պիտի լիներ:

«Հրեաներն ասացին. «Տեսե՛ք ինչքան էր սիրում նրան»: Նրանցից ոմանք ասում էին. «Սա, որ կույրի աչքերը բացեց, չէ՞ր կարող նաև այնպես անել, որ սա չմեռներ» (Հովհ., ԺԱ, 37): Դուք սովո՛ր եք հայհոյելու. երբ Նա բաժանեց ծովը և բազում հրաշքներ գործեց, հայհոյեցիք և չգոհացաք Աստծուց և Նրան անասունի հետ փոխանակեցիք, երգմամբ ուրացաք Մովսեսին, շնորհակալ չեղաք Նրան, ով ծովի միջով ճանապարհ բացեց և ամբողջ ժողովրդին փրկեց փարավոնի սրից, կույրի բժշկության համար շնորհակա՞լ կլինեք: Կույրի աչքն էր մեռած, իսկ հոգին կենդանի էր և շարժում էր մարմինը: Մեռած մարմնի մեջ շունչը չի բնակվում, ոչ էլ արեգակի լույսը՝ մեռած աչքում: Եթե կենդանացրեց մեռած աչքը և վերադարձրեց այնտեղից հեռացած լույսը, ուրեմն կկենդանացնի նաև ամբողջ մարմինը: Բայց դուք ձեր կամքով շատացնում եք հայհոյանքները. թերևս ամաչեք այն նույն տեղում, երբ ձեզնից շատերը փառաբանեն իմ Աստվածուծությունը մեծամեծ սքանչելիքների համար, որ պիտի տեսնեն:

«Հիսուս դարձյալ խոսովեց իր մտքում» (Հովհ., ԺԱ, 38): Այնտեղ ասում է, թե խոսվեցրեց իր անձը՝ դեպի Իրեն կոչելով արտասուքը, իսկ այստեղ սաստում է բնությունը՝ դադարեցնելու տրտմության շարժումը, որին կանչելով՝ խոսովեց:

«Հիսուս գնաց Ղազարոսի գերեզման, որ մի քարայր էր, որի վրա մի մեծ քար էր դրված» (տե՛ս Հովհ., ԺԱ, 38): Առաջինների սովորությունն էր ամրացնել գերեզմանները, որովհետև նրանցից հեռու էր հարություն հույսը. այս էին կյանք համարում, իսկ այն՝ մահվան դառնություն, մեռյալի հիշատակը շիրիմն էին համարում և մեռածի անունը փորագրում էին գերեզմանի վրա: Մովսեսը նույնպես ակամայից տեղի տվեց այս սովորության առջև՝ ասելով, թե՝ «Անոր-

դի մեռած եղբոր կնոջ հետ թող ամուսնանա մյուս եղբայրը և մեռածի անունով զավակ ունենա՝ վիճակված երկիրը ժառանգելու համար» (տե՛ս Բ Օր, ԻԵ 5, Մատթ., ԻԲ 24): Կամ էլ կափարիչ-վեմը խորհրդանշում է սատանային, որ դժոխքում էր պահում իր իշխանություն տակ փակված հոգիներին:

«Հիսուս ասաց. «Քարայրի բերանից մի կո՛ղմ տարեք քարը»: Դու, ումից դողում է երկիրը, և հալչում են լեռները, մի փոքր վեմ [տեղաշարժելու] համար օգնակա՞ն ես փնտրում մարդկանցից: Հարություն վկա՛ եմ կանչում. դո՛ւք հանեք քարը և նայեցե՛ք գերեզմանի մեջ. թող ձեր աչքերն ու թիկունքը վկայեն վեմի ծանրություն մասին, իսկ նեխածի հոտի մասին [թող վկայեն] մոտ կանգնածներին ուռնգները: Նրանց չար սովորությունը գիտեր և զգուշանում էր բոլոր կողմերից, որպեսզի արգելեր չարախոսությունը: Ի՞նչ կարիք կար վեմը վերցնելու. Նրա հրամանով դժոխքը [դուրս] էր փսխելու մեռյալներին: Բայց հրաշքները ժխտող և ուրացող հրեաների պատճառով թող նրանց ձեռքերը դատախազ լինեն և հանդիմանեն նրանց թերահավատությունը: Կամ վեմ՝ ծանրալույծ սատանային՝ մեղքերի պահակի բռնությունը [նկատի ունի], որ մեղքերի իշխանության տակ փակված էր պահում մեղավորներին: Տերը վերցնում է վեմը՝ դեռի բռնակալությունը, որպեսզի մարդիկ իր գալուստից հետո դյուրություն վեր բարձրանան մեղքերից:

«Մարթան՝ մեռածի քույրը, Նրան ասաց. «Տե՛ր, հիմա արդեն նեխած կլինի» (Հովհ., ԺԱ, 39): Նախաստեղծին է օրինակ բերում, իսկ մեռելությունն ու նեխվածությունը՝ ըստ մարգարեի. «Նեխեցին ու փտեցին իմ վերքերը» (Սաղմ., ԼԷ 6): Մյուս մարգարեները նույնպես, յուրաքանչյուրն իր խոսքում մեղադրում է մարդկային ազգին, Արարչի առջև բացահայտում մեղքերի գարշահոտությունը, որովհետև ամ-

բողջ աշխարհն էր ամբողջովին նեխած: Մարդու համար՝ մեռելից է նեխահոտ գալիս, Աստծու համար՝ մեղավորից, և Աստված իր անուշահոտութեամբ համեմեց բոլորին: Մշակը սերմերից նեխահոտ չի զգում, որովհետև նրա միտքը լեցուն է ուրախութեամբ, քանի որ նրա անդաստանների հոտը զմայլեցրել է նրա միտքը, որի մասին փոքր-ինչ վկայում է Իսահակը, երբ Հակոբին զննելիս և օրհնելիս ասում է. «Իմ որդին բերրի արտի հոտն ունի» (ԾԱՅՈՒՆ, ԻԷ 27):

«Քանի որ չորս օրվա է» (Հովհ., ԺԱ, 39): Մարդկային չորս նյութից կազմված բնությունը, թվում է, խորհրդանշում է չորս կողմ ունեցող աշխարհը, որովհետև բոլորը մեղանչեցին և զրկվեցին Աստծու փառքից: Քրիստոս բազմօրյա մեռելներին չորսօրյա մեռելի հետ մեղքերով հարուստություն տվեց մահից:

«Հիսուս նրան ասաց. «Եթե հավատաս, կտեսնես Աստծու փառքը» (Հովհ., ԺԱ, 40): Ո՛վ Մարթա, այդտեղից մարդկություն անապական կյանքն է բուսնելու. միայն հավատա՛ Աստծուն, և քեզ կղիպչի կենդանության և անուշուրբյան հոտը, և կտեսնես Աստծու փառքը, և կկապապանձվեն հայհոյողների բերանները, երբ չորսօրյա մեռելին կենդանի կտեսնեն այդ հրապարակում: Անուշեցուցիչ ա՛ղ է դա բոլոր հարված մարմինների համար, թափանցիկ լո՛ւյս է կուրացած աչքերի համար, և ձա՛յն է խլացած ականջների համար, որը գործով կտեսնես քո եղբոր վրա և մտքով կիմանաս Աստծու փառքը:

«Երբ քարը վերցրին» (Հովհ., ԺԱ, 41): Մինչև քարը վերցնելը Ղազարոսը հարուստ էր առել գերեզմանից. և արժան է գերեզման անվանել, այլ՝ հարուստ: և արժան է գերեզման անվանել, այլ՝ հարուստ:

«Հիսուս աչքերը երկինք բարձրացրեց»: Մինչև աչքերը երկինք բարձրացնելը Հիսուս տեսնում էր Հորը:

«Հա՛յր, գոհություն եմ տալիս Քեզ, որ ինձ լսեցիր: Գո-

հանում եմ Քեզնից, որ ծածկեցիր սա իմաստուններից ու գիտուններից և հայտնեցիր անմեղ մանուկներին» (տե՛ս Հովհ., ԺԱ, 41): Մինչև ձայն տալը, Հայրը լսում էր Նրան ամեն ժամ:

Թող ամաչե՛ն Թեոդորիտոսը և նրա նման հերձվածողները, որ ասում էին, թե Մեկը ձայն է տալիս, Մյուսը լսում է. հիմարություն է լեցուն ձեր խոսքը. ո՛վ անիրավներ: Երբ քահանայապետի տանը մեռելներից հարուստություն տվեց նրա դստերը, չաղաչեց և երկինք չնայեց, ոչ էլ Հորը ձայնեց: Նայեց մեռածին և ասաց. «Տալիթա՛, կու՛մի՛. «Աղջի՛կ, դո՛ւ, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց»: Եվ աղջիկը կանգնեց ողջացած» (Մարկ., Ե 41): Նային քաղաքում նույնպես մեծ ամբոխ էր [հավաքվել], և ոչ ոք Նրան չթախանձեց, ոչ էլ Նա Հորը կանչեց, միայն ձեռքը դիպրեց դագաղին, և մեռյալը կանգնեց», այդպես նաև ուրիշ հրաշքներ գործելիս: Ուր անձամբ էր անում, ցույց էր տալիս աստվածային գորությունը, ուր աղաչում էր Հորը, ցույց էր տալիս սիրելիությունը, քանզի երանելի բնության՝ Սուրբ Երրորդության Բնությունը, անսահմանելի միապես Երեք Անձերը՝ Հայրը և Որդին և Սուրբ Հոգին [գործեցին]: Իսկ յուրաքանչյուր հատկություն երեքին է, քանզի երեքի բնությունն այս է: Տեր Աստված ամենակալ, ամենախնամ, անիմանալի, Արարիչ, անպարագրելի, անձև, անչափ, անտեղ, անժամանակ, ոչ սկսված և ոչ ավարտված: Իսկ Հոր առանձնավորությունը՝ Ծնող և Պատճառ, անսկիզբ և սկիզբ, չսկսված որևէ մեկից, Առաքող, ո՛չ որևէ մեկից ծնված և ո՛չ արարված Իրենից կամ այլ որևէ մեկից: Որդու առանձնավորությունը՝ Որդի և Խոսք, Ծնունդ, Լույս, [Հոր] Կերպարանք, Իմաստություն, ճառագայթ, պատկեր, կնիք, նկարագիր: Իսկ Սուրբ Հոգու առանձնավորությունը՝ ճշմարիտ Բխում, Նորոգող, Մխիթարիչ, Ճշմարիտ, Բարի: Հորից են Որդին և Սուրբ Հոգին, բայց չեն անվանվում եղբայրներ,

ոչ էլ երկուսով՝ Որդիներ. ինչպես որ, օրինակ, Ադամից են Սեթն ու Եվան, բայց երկուսը ո՛չ եղբայրներ են և ո՛չ էլ որդիներ: Քանզի Հայրը Ծնող է, Որդին՝ Ծնունդ, Սուրբ Հոգին՝ Ելնող: Որդին նստում է Հոր աջ կողմում, իսկ Սուրբ Հոգին՝ Որդու աջ կողմում: Հարյուր իններորդ սաղմոսում ասվում է. «Տերն իմ Տիրոջն ասաց՝ նստի՛ր իմ աջ կողմում» (Սաղմ., ԾԹ՝ 1): Հայրն է Որդուն ասում, իսկ քիչ հետո ասում է. «Դու հավիտենական քահանա ես՝ ըստ Մելքիսեդեկի կարգի, և Տերը Քո աջ կողմում է» (Սաղմ., ԾԹ՝ 4): Հայրը Որդու հետ ասում է Սուրբ Հոգու մասին:

Եվ արդ, Սուրբ Երրորդություն մեջ չի երևում մեծություն և փոքրություն, քանի որ մեծն ու փոքրը, ծանրն ու թեթևը, շատն ու սակավը բովանդակվում են ժամերի ու ժամանակների մեջ, իսկ այնտեղ, ուր չկան ժամեր ու ժամանակներ, անբավելի Բնությունը չի մերձենում ո՛չ չափ և ո՛չ կշիռ, այնտեղ չի կերպավորվում ո՛չ փոքրը և ո՛չ մեծը: Կամեցա մեծ ասել Հորը՝ որպես Ծնողի և Պատճառի, բայց վախեցա նույն Իրենից՝ Հորից, որպեսզի տկար չդարձնեմ սկիզբը և մեծարանքներով թշնամացնեմ, քանզի փառքը Հորը չէ, եթե Իրենից փոքր լինեն, քանզի տկարանում է՝ Իրեն հավասար Որդի ծնել չկարողանալով և կամ Իրենից Բխող Հոգի, այլ Նրա հրաշափառ զորությունը վայել է, որ Նրանք, ովքեր Նրա բնությունից են, Իրեն փառակից ճանաչվեն: Արդ, Հայրը ո՛չ ծնունդ է և ո՛չ ելնող, Որդին ո՛չ ծնող է և ո՛չ ելնող, Սուրբ Հոգին ո՛չ ծնող է և ո՛չ ծնունդ, այլ միշտ ելնող: Հայրը ցնծում է Որդու փառքով, Որդին ուրախանում է Հոգու պատվով, և Հոգին փառավորում է Հորը և Որդուն, քանի որ Նրանց էությունից է առնում և նորակերտում արարածներին, Որից եղավ ամեն բան երկնքում և երկրի վրա՝ երևացողներն ու աներևույթները, զգալիներն ու իմանալիները, մարմնավորներն ու անմար-

մինները: Ա՛յս դավանությունն ընդունեցին Հայերը մեծ Գրիգորից, սուրբ Արիստակեսից և երանելի Ներսեսից:

«Այս անում եմ այս ժողովրդի համար» (Հովհ., ԺԱ, 42): Ինքն էլ մեկնում է. Աստված չի նայում իր պատվին [այնպես], ինչպես մեր փրկությունը, քանզի երբ Իրեն հավասարեցնում էր Աստծուն և թողություն էր տալիս մեղքերին, Նրան հայհոյող ու դիվահար էին անվանում:

«Որպեսզի հավատան, թե Դու ինձ ուղարկեցիր»: Եթե ասում եք, թե ես Հորը հակառակ ու հայհոյող եմ, ուրեմն թող Նա գործակից չլինի՝ Հակառակվողիս. Քեզ ինձ հետ գործակցության եմ կոչում, որպեսզի հաստատեմ հավատացյալներին և հանդիմանեմ անհավատներին: Անքավելի մեղքերի տակ են բոլոր նրանք, ովքեր բաժանում են անբաժանելի Բնությունը, նրանք պարսավվում են մարդկանց կողմից, դատապարտվում են Աստծուց և ջնջվում են կյանքի գրքից:

«Երբ Հիսուս այս ասաց, բարձր ձայնով աղաղակեց» (Հովհ., ԺԱ, 43): Աղաղակեց մարդկանց համար, որպեսզի ղեպի Իրեն ձգի բոլոր աչքերն ու ականջները: Մեռածին չմոտեցավ, այլ տասներկու կանգուն հեռու կանգնեց գերեզմանից: Զեռքը դիպցնելու փոխարեն ձայնը բարձրացրեց՝ կատարելով օրենքը, որ ասում է. «Դիակին ղիպչող ամեն ոք թող մինչև երեկո պիղծ համարվի» (Ղևտ., ԺԱ, 24): Այդ ձայնը երկնային որոտ եղավ. քանզի մեկ հատիկի բուսնելով՝ բոլորի համար է հարություն ականակիք լինում: Մեռյալի նեխահոտն անուշահոտություն դարձավ, և նա կենդանի դուրս ելավ: Զայնը մտավ գերեզման, բռնեց մեռածի ձեռքից. ձայնի հնչումը մեռած զգայարանների վրա չի ազդում, որպեսզի այնտեղ գտնվողները նայեն աստվածային հրամանին, լսեն ձայնը, և հայտնի կերպով երևա, որ մեռելը դուրս եկավ Նրա հրամանով: Մարդկային սովորությունը հեռու

կանգնած է ձայն տալիս, ընտանեբար մատակարարում և ձայնի զորությամբ բանսարկուի ձեռքից վեր է հանում հոգին՝ այն կապելով լուծված մարմնին և [կենդանացնում] հող դարձած հողեղեն մասը և ջուր դարձած ավիշը, հրին [խառնված] հրանյութը և օդում ցնդած օդը, ո՛չ թե ձեռքով ստեղծագործում է կենդանի, ինչպես առաջին [մարդուն], այլ սոսկ ձայնով անունն է տալիս, և [մեռածը] սարսափով իսկույն ելնում է: Բեթանիա նշանակում է հնազանդության տուն, որովհետև Ղազարոսը հնազանդվեց մահվանը Ադամի պատճառով, որն ընկավ մահվան իշխանության տակ: Իսկ մահը հնազանդվեց Հիսուսին՝ Նրա արարչական զորության պատճառով, ծառայապես լսեց տերունական ձայնը և աստվածային հրամանով տվեց մեռյալին: Հիսուս եկավ հնազանդության տուն, որ Բան Աստծու հնազանդության ներքո միավորեց մարդկանց անհնազանդությունը, Ադամի անհնազանդության փոխարեն աստվածախառը մարմնով հնազանդվեց Բոլորի Հորը և Իր Աստվածությամբ Հոր հետ բարեբանվեց հրաբուն զորքերի կողմից:

«Ղազարո՛ս, դո՛ւրս արի» (Հովհ., ԺԱ, 43): Բազում մեռելներ են գերեզման դրվում, բայց նրանցից մեկը միայն պետք է դուրս ելներ. եթե անունը չտար, ո՞վ գիտե, թե մեռելներից ով դուրս կելներ: Այդ պատճառով էլ անունով է կանչում. «Ղազարո՛ս, դո՛ւրս արի»: Շատ Ղազարոսներ կային այնտեղ, բայց Հիսուս կանչեց մեկին. դո՛ւ, որ Մարթայի ու Մարիամի եղբայրն ես, ում ես սիրում եմ, դրա համար էլ [Հորը] աղաչելով կանչեցի, առայժմ միայն դո՛ւ դուրս արի, և քեզնով թող ուրիշների համար [հարության] հույս լինի: Եթե անունով չկանչեր, ապա Քրիստոսի ձայնի զորությունը կքանդեր բոլոր գերեզմանները: «[Աշխարհում ամեն գործ ունի իր ժամանակը]. սերմանելու ժամանակը և հնձելու ժամանակը» (Փող., Գ 1). դեռևս սերմերը սերման-

վում են, բույսերը՝ բուսնում, պտուղները հասունանում են և մատուցվում են Աստծու Որդուն: Նաև մեռյալին գերեզմանից ուրիշի անունով չի կանչում. Իր գումարտակ մարգարեները Տիրոջ անունով [էին կանչում], առաքյալները՝ Իր՝ Հիսուս Քրիստոսի անունով, իսկ Ինքը ազատ, իշխանական ձայնով հրամայում է. «Դո՛ւրս ելիր», որպեսզի սովորեն, որ հոգին կենդանի է և զգայական և [որքան էլ որ] հեռու էր մարմնից, լուծեց մահվան իշխանությունը և նրա կողմից բռնվածին հոգով ու մարմնով կորզելով՝ կենդանացրեց այն զորությամբ, որ ասաց. «Թող ջրերն հանեն կենդանության շունչ ունեցող գեոուններ» (ՄԱՌ., Ա, 20). գերեզմանի մոտ նույն այն ձայնն էր, որ «ասաց, և եղան» (տե՛ս ՄԱՌ., Ա 6):

«Եվ մեռյալը ելավ կապված ոտքերով, ձեռքերը երիզով ամրացված և երեսը վարչամակով պատած» (Հովհ., ԺԱ, 44): Ո՛չ քաշեց և ո՛չ էլ քայլել տվեց՝ ըստ մարդկային սովորության, քանի որ կապված էր կապանքներով և պատված էր պատանքով: Ինչպես որ հրեշտակը հնձողների համար հաց ու թան տանող Ամբակում մարգարեին Բաբելոն տարավ (տե՛ս Դաճ., ԺԳ 32-36): Աստծու խոսքն ավելի արագընթաց է, քան երկնային հրեշտակները, և ըստ արագության էլ՝ առավել հզոր. հրեշտակը, [Ամբակումի] մազերից բռնելով, իր հետ տարավ ամբողջ մարմինը, իսկ Հիսուս սաստիկ ձայնով ո՛չ թե գլխին մոտեցավ, այլ մի ակնթարթում նրա հոգին բերեց հեռուներից և միավորեց լուծված մարմնին, վեր հանեց անդնդային քնից, և նա առանց քայլ անգամ փոխելու հայտնվեց այնտեղ, ուր կամենում էր Աստված: Կտավեղեն կապանքը չկարողացավ արգելք լինել տերունական հրամանին, Արարչի կամքը կատարելով՝ լուծեց իր կարգը, և մահը ծառայաբար հնազանդվեց Տիրոջ հրամանին: Այսօր առաջին մարդու կապանքներն է արձակում



մահվան անեծքից, և մեղքերի բազմութիւնը չի կարող արգելք լինել տերունական հրամանին, դեպի Իրեն է կորզում հանցանքները և որպէս հանցավոր՝ հանցավոր մարդու փոխարեն մեղապարտ է դառնում Անմեղը և մեղավորին կանգնեցնում է Հոր առջև:

«Եվ Հիսուս նրանց ասաց. «Արձակեցե՛ք դրան և թողե՛ք, որ գնա» (Հովհ., ԺԱ, 44): Դուք ինքներդ արձակեցեք, որ կապեցիք, և դուք ինքներդ, որ պատանքեցիք, քակտեցե՛ք. մի՛ գարշեք, նեխահոտ չկա, մի՛ խորշեք, ինչպէս օրենքն է հրամայում. մեռած չէ, այլ կենդանի է. տեսեք ձեր նշաններով, իմացե՛ք ձեր ձեռքերով, բաց արեք այդ կապված բերանը և նրա մահվան այլ վկաների հետ միասին բոլորդ վկա՛ եղեք այդ հարությանը, որ տեսաք: Մեկ մրգով երկրի բոլոր պտուղներն են ճանաչվում, այժմ այս մեկով՝ ապագայի [հարության] ավետիսը: Իսկ ինչո՞ւ է նրանց հրամայում քանդել [կապանքները]. որովհետև անամոթ էին և միշտ ջանում էին եղծել ճշմարտութիւնը, ուստիև ձեռքերն ու հոտոտելիքը նրանց դատախազ ու վկա է դարձնում: Հնում Աստված դադարեց բարերարութիւնից Ադամի՝ պատվիրանապահութիւնից դադարելու պատճառով, Նորում Ղազարոսի քրիստոսասիրութեան պատճառով նորոգում է գերեզմանի անշնչութիւնից և արձակում կտավապատ մահազգեստ ծածկույթից:

«Հրեաներից շատերը, որ եկել էին Մարիամենց մոտ, երբ տեսան, ինչ որ արեց, հավատացին Նրան» (Հովհ., ԺԱ, 45): Ումանք հավատացին մեծաքանչ նշաններին, թեև հետո ուրացան. սգավորներին մխիթարելու եկածներն իրենց անձեքը մխիթարեցին անտրտում ուրախութեամբ և ուրիշներին ավետիս տարան քաղաք: Ումանք էլ գնացին փարիսեցիների մոտ և պատմեցին, ինչ որ Հիսուս արեց, իսկ ումանք էլ դեւերից մոլեգնածների պէս գնացին սաղուկեցիների մոտ և

ասացին, թե՛ «Նրան շատերը հավատացին. այժմ շտապեցե՛ք լռեցնել նորասքանչ նշանների զորութիւնը»:

[Հիսուս] Մարիամի ու Մարթայի տանը ճաշկերույթի է նստել, և գերեզմանից հարութիւն առած Ղազարոսը նստած է Նրա դիմաց. նա իր հետ իբրև հավատարիմ վկա ունի ամուր երիզով կտավը, որպէսզի [ոչ միայն] իր ուտելու և խմելու, [այլ նաև] գերեզմանական կտավի միջոցով հավատան, որ իր հարութիւնը ճշմարիտ է ու հավաստի: Ընդունում է Մարիամի բարեպաշտութիւնը, յուզով օծումը խոստովանում է իբրև իր մահվանն սպասավորութիւն և անմաքուր վարքի վրա լվացում, մազերով [սրբելը]՝ մեռելու մարմնական վարքի համար, արտասուքը՝ անմաքուր վարքի ջնջիչ, ոտքերը արտասուքով թրջելը՝ որ Տերն իր մաքուր ոտքերով սրբեց այն ժամանակը և յոթնյակները, որոնցով առաջ են ընթանում ամիսներն ու տարիները, երբ նա իր անսուրբ վարքի գործերով էր ապրում, Մարիամին ու Մարթային շնորհագարդեց հավատով, չորսօրյա մեռչալին գերեզմանից կենդանի ընդունեց:

Հայրը հաճում է, Որդին՝ աղաչում, Հոգին բարեխոսում է. երբ այս աշխարհն ավարտվի, բոլոր էակների Տերը հայրենի սկզբնատիպ փառքով և զորութեամբ արարող Հոգով և հրեշտակների բազմութեամբ անձեռագործ փողի ձայնով երկնքից երկիր գա, դրվեն աթոռները, ատյաններն ուղղվեն, գրքերը բացվեն, հնչեն կենդանիների ձայները, երկինքը գալարվի, լուսատուները վար թափվեն, երկիրը դղրդա, ժայռերը պատռվեն, գերեզմաններն ավերվեն, մեռածները հարութիւն առնեն, այն ժամանակ Ղազարոսը նույնպէս մեզ հետ հարութիւն առած կերևա: Երկնայիններն ու երկրայինները կմիաբանեն, միմյանց խառնվածները կբաժանվեն, և վճիռները կսահմանվեն, արդարների կողմը վեր կբարձրանա՝ մշտապէս Տիրոջ հետ լինելու անմահների ա-



նուշահատ օդում, կակուղ ու փափուկ գարշապարներով անմահ մարդիկ կմիաբանեն հրեշտակների պարին, որին թող հասնենք բոլորս մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ, որին փառք հավիտյանս հավիտենից. ամեն:



## ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԵՐՈՒՍԱՂԵՄ ԳԱԼՍՏՅԱՆ ՄԵԾ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

**Մ**ստվածային նախախնամող ու մշտնջենավոր գլխությամբ եկանք հասանք օրհնաբանության այս օրվան, երբ ամբողջ աշխարհի հավատացյալների հետ համախմբված՝ հիշատակում ենք երկնագոչ բարեբանությունն ու պատմում ենք մանուկների աստվածաբանության մասին՝ հռչակելով այն, և տիեզերական անվամբ բարեբանելով խոստովանում ենք [Փրկչի]՝ Դավթի զարմից գալուստը: Երբ երևելապես հանդիպում ենք մերակերպ բնության՝ արարչության հետ միավորությունը և գոչելով երկու գալստյան՝ եկած լինելու և [ապագայում] գալստյան մասին՝ խոստովանում ենք Արարչի հայտնությունը, որ և երանելի ավետարանիչները աստվածաբանությամբ հրաշալի և ըղձալի օգուտ ընձեռեցին Եկեղեցուն: Նրանցից մեկն ասում է. «Երբ մոտեցան Երուսաղեմին, Բեթփագեին ու Բեթանիային, Ջիթենյաց լեռան մոտ, Նա ուղարկեց աշակերտներից երկուսին և նրանց ասաց. «Դուք գնացե՛ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է: Եվ հենց որ այնտեղ մտնեք, կգտնեք մի կապված ավանակ, որի վրա ոչ մի մարդ արարած չի նստել. արձակեցե՛ք այն ու բերե՛ք: Եվ եթե որևէ մեկը ձեզ ասի՝ «Այդ ավանակն ինչո՞ւ էք արձակում», կասեք՝ «Տիրոջը պետք է», և նա իսկույն դրան այստեղ կուղարկի» (Մարկ., ԺԱ. 1-3):

Երուսաղեմ թարգմանվում է խաղաղություն, որովհետև Իսրայելի ժողովուրդը խաղաղվեց այնտեղ՝ քահանայության միջոցով զանազան կենդանիների արյան հեղմամբ և ամենօրյա և շաբաթօրյա լվացումներով պատվիրանազանցությունը քաված: Այսպես նաև Եկեղեցու մոտ էր

ճշմարիտ խաղաղությունը՝ Հիսուս, որ Իր մերձակա մահվամբ պիտի խաղաղեցնէր բազմաստվածութեան [առաջացրած] վրդովմունքը: Հիսուսի՝ Իր չարչարանքներին մոտենալու ժամանակ հեթանոսները դատապարտութիւնից [Աստուծու] որդեգրութեան ազատութեանն էին մոտենում:

Արդ, հեթանոսները երկնային խաղաղութեանը մոտեցան երկնքից Իջածի և մեր մարդկային բնութեանը մարմնակից եղածի միջոցով: Եվ Եկեղեցուն մոտ էր Հիսուս խաղաղությունը մարգարեների կանխագուշակութեամբ և տերունական մահվամբ, որ աշխարհից վերացնում էր մահվան իշխանութիւնը և աստվածային հարատև կենդանութեամբ անմահ կյանքն էր ընձեռում բոլորին, քանզի մարդկային բնութիւնը խաղաղվում էր այն մարմնի շնորհիվ, որ անանջատապես միավորվեց Աստվածութեան հետ:

«Եկան Բեթփագե և Բեթանիա» (Մարկ., ԺԱ 1):

Բեթփագե նշանակում է Ծնոտի տուն, իսկ Բեթանիա նշանակում է Սգո տուն և Հնազանդութեան տուն: Ծնոտի տուն, որովհետև բանական բնութեան ծնոտը շարժման շնորհիվ սպասավոր է, պատվիրանի ծառայող: Առաջին մարդու ծնոտը պատվիրանազանցութեան պատճառով հեռացրեց նրան բանական սպասավորութիւնից, և ամբողջ մարմնական տաճարը թափուր մնաց [իր մեջ] Բնակվողից, ուստիև Հիսուս եղավ մարմնեղեն տուն և Եռյակ Միութեան հավիտենական կացարան: [Դարձյալ]՝ ծնոտ, որպէսզի մարդկային ծնոտի համար վարդապետի արարչական վարդապետութիւնը:

Իսկ Բեթանիա [նշանակում է] Սգո տուն. որովհետև առաջին մարդը, տերունական [չնչի] փշուրն ընդունելով, ուրախութեան տուն էր, իսկ երբ նրա պատվիրանազանցութեան պատճառով [չունչը] վերադարձավ Փշողի մոտ, նախաստեղծի անձը անփառունակ ու սգավոր դարձավ:

Եվ Հնազանդութեան տուն. որովհետև մարմնավոր և բանական տունը Հնազանդվեց արարչաղիւր հրամաններին, տուն դարձավ նրա Ստեղծիչը, ամբողջապես Հնազանդվեց Հորը և վերացրեց առաջին մարդու անհնազանդութիւնը:

«Այնժամ Հիսուս ուղարկեց Իր աշակերտներից երկուսին» (Մարկ., ԺԱ 1): Օրինական (Մովսիսական) և հոգևոր պատվիրանների մասին է ասում, որոնցից մեկը՝ առաքելական և առաջին՝ շնորհով, թեպետև ժամանակով հետո է, իսկ երկրորդը՝ մարգարեութիւնը, սահմանվեց Սուրբ Հոգուց, որպէսզի երկուսի վկայութեամբ հավատալ տան [Տիրոջ] տնօրինութեանը: Եվ դարձյալ՝ եթե որևէ մեկը սայթաքի դրանցից մեկից, մյուսով ոտքի կանգնի, իսկ հավատից սառածները մտքով վերստին հագնեն այս երկու հրամաններն էլ և ջերմանան աստվածային սիրով:

Իսկ [ուղարկեց] աշակերտներից երկուսին. որովհետև Հիսուս, վերին ութաստիճան երկնագումար խմբերում ունենալով բազում աշակերտներ՝ հրեշտակներ, հրեշտակապետներ, աթոռներ, տերութիւններ, պետութիւններ, իշխանութիւններ, սերովբեներ, քերովբեներ (որի մասին պատմում է Պողոսը), իսկ մեզպեսներից [մարդկանցից]՝ դատավորներ, թագավորներ և այլ աստվածաշնորհ պարգևներ [ընդունածներ], որոնցից, ինչպէս բազում աշակերտներից երկուսին ուղարկելով, [ցույց էր տալիս] մարգարեութիւնը, որ կանխավ ճշմարտապես գուշակում էր [Բանի] մարմնավորումը և առաքելութիւնը, որին Իր խորհուրդների վերակացու դարձրեց: Ասում է. «Գնացե՛ք այդ գլուղը, որ ձեր դիմացն է» (Մարկ., ԺԱ 2): Քանզի աստվածային ու ամենատես աչքի առջև մարդկանց տիեզերական բազմութիւնը նման է գլուղի, ուր Իր գալուց առաջ ուղարկում է մարգարեներին, իսկ մարմնանալուց հետո՝ առաքյալներին:

Ասում է. «Կգտնեք մի կապված էջ» (Մարկ., ԺԱ, 2): Այն անմաքուր կենդանիներից է, որ [խորհրդանշում է] հրեաների ժողովարանը, որ մաքուր կենդանի էր՝ երկնային Հովվապետի հոտը՝ մարմնավոր լինելու պատճառով անսուրբ կենդանի դարձած, իսկ կապված [լինելը խորհրդանշում է բազմաստվածութան իշխանութան տակ գտնվելը, որից առաքելական կոչմամբ քակտում է նրանց:

Դարձյալ՝ կապված, որովհետև հրեաները կապված էին օրենքների պահպանության [հրամանի ներքո], իր ավետարանական վարդապետությունում կապարանից արձակում է նրանց մարգարեական ու առաքելական կոչմամբ: Իսկ «նրա մոտ [կապված] ավանակ» ասելով՝ [նկատի ունի] հեթանոսներին, որոնց օրենքի կապանքի տակ չէր դրել, այլ արձակ և համարձակ էր թողել յուրաքանչյուրին՝ կատարելու ինչ հաճելի է իրեն, և որոնց հեռացնում է իրենց անմաքուր կենցաղավարությունից ու կոապաշտությունից իր՝ երկնքից բերված շնորհով: Այդ պատճառով էլ հասուն կենդանուն նմանեցնում ենք հրեաներին, իսկ ավանակին՝ հեթանոսներին: Որովհետև նրանք, ովքեր նախապես ընդունեցին աստվածային խոսքը, հասուն են ու առաջին, ըստ այն խոսքի, որ [Աստված Մովսեսի բերանով] ասում է փարավոնին. «Իմ անդրանիկ որդին Իսրայելն է» (Ելք, Դ 22), իսկ մեծ Պողոսն ասում է. «Իսկ փառք, պատիվ և խաղաղություն յուրաքանչյուրին, ով բարին է գործում, նախ՝ հրեայի և ապա՝ հեթանոսի» (Հռոմ., Բ 10):

«Ավանակը բերեցին Հիսուսի մոտ և դրա վրա զգեստներ գցեցին, և Հիսուս նստեց դրա վրա» (Մարկ., ԺԱ, 7): «Բերել» առաքելական ու մարգարեական կոչի մասին է ասում, որոնցով փնտրելով՝ մոտեցրեց իրեն, իսկ [ավանակի վրա] զգեստներ գցելը [խորհրդանշում է] Ավագանի մաքուր և անապական զգեստը, որ շնորհում է Սուրբ Հոգին,

որովհետև անապական զգեստով մաքրությունը սրբում է մարմինը, փչմամբ լուսավորում հոգին և լցնում է միտքը՝ իր Միածին Որդու համար հանգստյան տեղ դարձնելով այն: Դարձյալ՝ «Նստեց նրանց վրա», քանզի երկուսին էլ՝ և՛ հրեաներին, և՛ հեթանոսներին կոչելով դեպի սուրբ Եկեղեցի՝ որդեգրվելու երկնավոր Հորը, բոլորի մաքուր և առաքինի վարքի վրա է նստում և տիրապես ու աստվածաբար հանգստանում:

Իսկ անմաքուր կենդանիների վրա նստելը [ցույց է տալիս հետևյալը]. որովհետև երկու՝ հրեաների ու հեթանոսների ժողովարանները մաքրությունում Աստծուն չմերձեցան, մարմին առած Բանը վարդապետությունում կանչեց, իր չարչարանքներով լուծեց հանցանքները, իր մահվամբ ազատեց մահից, իրեն աթոռ դարձրեց, նստեց բոլորի խորհուրդների վրա և դատում ու դատախարակում է բոլորի հոգին ու մարմինը և շնորհում է յուրաքանչյուրին ճանաչել և ընդունել բարին: Իսկ նույն տեսակի կենդանիների վրա գցված զգեստները, որոնց վրա նստում է ճշմարտապես երկինքների երկնքում քերովբեական կառքերի վրա Նստողը. «զգեստները» պետք է իմանալ առաքելական վարդապետությունը, քանզի այնտեղ նստում ու հանգստանում է սերովբեական սրբության վրա, իսկ այստեղ առաքելական քարոզության վրա է նստում, շատերին է հրաշակերտում և [իր] վարդապետության երասանակը տիրապես ուղղում դեպի երկինքների երկինք:

Արդ, Միածինը հավասարապես նստած էր երկնքում՝ քերովբեների վրա, և երկրում՝ նվաստ կենդանիների վրա. այնտեղ՝ իբրև Արարիչ և Հորը համապատիվ, այստեղ՝ մեր բնությունում աստվածացած և չբաժանված Հորից և ամբողջ Երրորդությունից՝ չբաժանված լինելով նաև երկրից: Բայց կատարելապես նստելը կենդանիների վրա Արարչի՝ իր ա-

րարածները հանդեպ սիրո մեծությունն է ցույց տալիս, որից հաղթված՝ տերունական կամքը, առանց խտրություն դնելու, դեպի իր անճառելի շնորհներն է կոչում ամբողջ մարդկությունը և հանգստանում ու բերկրում է Ավագանից վերստին ծնվածների մեջ՝ իբրև նրանց եղբայր ու հարազատ՝ մարդկային բնությունը մեզ հետ եղբայրացած լինելով:

Զիթենյաց լեռը [խորհրդանշում է] աստվածային բնություն՝ մարմնավոր բնությունը նվաստանալը. որովհետև տե՛ս ձեթը գիշերվա լուծիչ է, այսպես և խոսքը, Հորից ելնելով և մարմնին միավորելով, արեգակի պես փայլելով, լուծեց ամբողջ մարդկության հոգու գիշերը:

Երուսաղեմ գալը [խորհրդանշում է Տիրոջ՝ իր] կամավոր չարչարանքները հավանելը. քանի որ Երուսաղեմ թարգմանվում է խաղաղություն՝ խաղաղություն, որ վեր է բոլոր մարգարեական ու առաքելական շնորհներից, որ պարզվեց մեզ աստվածային մահվամբ, քանզի [մեր Տիրոջ]՝ Երուսաղեմ իջնելը մեզ դեպի վեր՝ դեպի աստվածակերտ գավառ տանելն էր [ցույց տալիս նաև]: Որովհետև դիմելը Երուսաղեմ դիմելն էր դեպի մահ, իսկ մահվամբ մեր՝ մահվան արժանացած անձերն էր ազատում մահից:

Իսկ ի՞նչ էր [նշանակում] Նրա առջևից ու ետևից ընթացող ժողովրդի բազմությունը և նրանց՝ իրենց զգեստները ճանապարհին փռելը: Առջևից ընթացող ժողովուրդը նախահայրերն են, մարգարեները, քահանաները, դատավորները, թագավորները, ծերերի ատյանները, դպիրների ու փարիսեցիների կաճառները և Հովհաննեսի՝ կարապետական կոչումը. նրանք են ժողովուրդները, որ Քրիստոսի մարմնանալուց առաջ են: Իսկ երանելի առաքյալները, մեծ վկաները, վարդապետները, Ավագանից բոլոր վերստին ծնվածները, որ տնօրինությունից հետո կանչվեցին, Նրա ե-

տևից ընթացող ժողովրդի բազմությունն են: Նրանց՝ զգեստները ճանապարհին փռելը ամբողջ աշխարհի՝ ավետարանական վարդապետությանը հնազանդվելն [է խորհրդանշում]. նրանց, ովքեր իրենց սիրտը փռեցին և իրենց մեջ քառահոլով ճանապարհ պատրաստեցին չորս ավետարանիչների համար, որոնցով գնում և որոնց հետևում են, իսկ մեր կերպարանքն առած էմանուելը բերկրում է ողջախոհներով: Որովհետև օրինակներից մաքուր անձինք, [կանխապես] տեսնելով Նրա՝ մեր կերպարանքով գալուստը, ոչ միայն խոստովանեցին խոսքով, այլ նաև նյութեղեն գիրը, որպես զգեստներ, տարածեցին՝ պատմագրելով ժամանակի մեջ, ինչպես ճանապարհի վրա, որովհետև այս հողեղեն բնությունը նմանվեցինք և այս հողեղենից հոգեղեն պատկեր հագանք:

Իսկ «ծառերից ճյուղեր կտրել և [ճանապարհի վրա] գցելը». քանի որ սկզբում՝ արարչագործության ժամանակ, Հոր խոսքն ասաց. «Թող լույս լինի» (ՄԱՌ., Ա, 3). և «Թող հավաքվեն ջրերը» (տե՛ս ՄԱՌ., Ա, 9), և «Թող երկիրն աճեցնի ծաղիկներ ու ծառեր» (տե՛ս ՄԱՌ., Ա, 11). և ամեն բան գոյանում էր ակնթարթից էլ արագ [ժամանակում], և երկիրն ամբողջությամբ ծաղկավետ էր դառնում՝ [լեռների] գագաթներին թագազարդ պսակներ երևացնելով: Նախահոր պատվիրանագանցության պատճառով նույն՝ Հորից անբաժանելի Բանը ծաղկազարդ երկիրն փշաբեր լինել հրամայեց (տե՛ս ՄԱՌ., Գ, 18), որի համար գլխավոր՝ իրենից անբաժանելի իր ծոցածին Բանին առաքեց: Բայց քանի որ մեր բնությունն անկարող է տեսնելու [Նրա] բնությունը, առավ մեր կերպարանքը, շնորհով իրեն կերպարանակից դարձրեց մեր բնությունը և մեր բնությամբ մահու չափ պատերազմելով մահվան դեմ՝ կամեցավ վերացնել նրա իշխանությունը և երկիրն ու տարերքները նորոգել առաջին հրաշափա-

ոււթյամբ: Եվ այս ամենը՝ ոչ առանց խորհուրդի, այլ այն ժամանակ, երբ պատուհասակիր դարձան մարդը և երկրի վայելչությունը, որ պատրաստվել էր մարդու համար, նույն ժամանակ՝ գարնանային գիշերահավասարի օրը, երբ երկրի լինելության սկիզբը եղավ, նույն գիշերահավասարի օրը եկավ և վերադարձրեց երկիրն իր առաջին կարգին: Այդ պատճառով էլ ծերերն ու մանուկները ծառերից ճյուղեր էին կտրում ու փռում ճանապարհին՝ տերևազգեստ ու ծաղկազարդ [դարձնելով այն], որով ցույց էին տալիս երկրի՝ փշաբեր դառնալու անեծքից ազատվելը և նրա՝ առաջին աստվածակերտ բուրաստանի նման դառնալը:

Դարձյալ՝ «Ծառերից ճյուղեր էին կտրում և գցում ճանապարհի վրա», քանի որ առաջին ծառի ճյուղերից ընդունեցինք պատվիրանագանցության պտուղը, այդ պատճառով էլ նույն ճյուղերն էին փռում ճանապարհին, որպեսզի Հիսուսի ոտքերը, դրանց վրայով գնալով, մեր ոտքերի տակ դնեն հակառակորդի գորությունը: Իսկ ըստ իմանալի տեսակի՝ ծառը հրեշտակական գորություններն են, որոնք [իրենց] բանական և հոգևոր բնությամբ գատվելով, բաժանվեցին և բարձրակա վայրում են, որոնցից առավել բարձր են սերովբեները, որոնք տերունական ոտքերի տակ սուկառումով իրենց չորս թևերով ծածկում են իրենց՝ չկարողանալով նայել կիզող [հրի] պատճառով, և սարսափելով՝ անդադար երգում են հաղթական ու պանծալի սրբասացությունը: Այսպիսի բարձրագույն ոստերից կտրելով՝ մանուկներն օրհնում էին և բարձր ձայնով հնչեցնում [Տիրոջ] ներկա և ապագա գալուստը, աղաղակում էին՝ ասելով. «Օրհնեա՛լ ես, որ գալիս ես Տիրոջ անունով» (Մարկ., ԺԱ 9):

Նրանց հետ նաև համարձակախոս Զաքարիա մարգարեն է ճշգրիտ կերպով խոսում Կույսի կուսական հղության, ծնված Մանկան՝ էմմանուելի՝ գալիք օրերում կենդանինե-

րի վրա նստած Երուսաղեմ գալու մասին. ընդ որում ո՛չ թե այլաբանորեն, այլ հայտնապես է ասում. «Ուրախացի՛ր, Սիոնի՛ դուստր, որովհետև քո Թագավորը՝ մարմնացած Աստված, պիտի գա քեզ մոտ՝ նստած անմաքուր կենդանիների վրա» (տե՛ս Ձաք., Բ 10): Ինչո՞ւ է Սիոնին ասում, որ ուրախանա, և ոչ մեծ Երուսաղեմին: Երբ Դավիթը թագավորեց Հրեաստանում, Սիոնն ամրոց էր: Դավիթը եկավ Երուսաղեմ, իսկ հերուսացիներն արգելեցին նրան Երուսաղեմը թագավորանիստ դարձնել: Եվ Դավիթը պատերազմեց ու առավ Սիոն կոչվող ամրոցը և այն իրեն տուն ու արքունական վայր դարձրեց, այնտեղ վերստին նորոգեց սեղանը, որ կործանվել էր Սելովում, այնտեղ բերեց և գերությունից ազատած [ուխտի] տապանակը, նորոգեց բովանդակ քահանայական կարգը զոհաբերություններով հանդերձ: Եվ որովհետև անճառելի Հորից անբաժանելի Բանը մեր կերպարանքով անապական Կույսից և Դավթի զարմից խոստովանվեց մաքուր բերանով, որդեգրապես նորոգեց հայրենի՝ Դավթի լուծված թագավորությունը, խաղաղություն արարող Հիսուս Իր բերանով տիեզերական փրկությամբ խաղաղություն [ավետեց], քանզի հրամայեց Պասեքին ոչ ուրիշ տեղ, այլ Սիոնում կատարել Զատիկը, այնտեղ էլ կերավ գառը: [Իր հարությունից հետո] փակ դռների [միջով] այնտեղ եկավ, աշակերտների մեղրի [խորսխից այնտեղ] ճաշակեց և նոր արքայությունը, որ Իր հարությունն էր, հավաստի դարձրեց՝ նրանց հետ ուտելով. այս ամենի համար է Սիոնի դատերը հրամայում ուրախանալ:

Սիոնի դուստր, որովհետև Դավթի քաղաքը Սիոն կոչվեց, իսկ քաղաքը իր ծնունդների բնությունն ունի, ինչպես որ Հովսեփը Դավթի զարմն է [ասվում], իսկ Հիսուսը Դավթի Որդի խոստովանվեց, այսպես էլ՝ Սիոնը: Ներկայիս բնակիչները դուստրերն են առաջին բնակիչների:

Բայց ըստ իմանալի տեսության՝ Սիրոնի դուստրը խաղաղության դուստր է անվանվում, որովհետև Տերը, երկնքից բերելով ճշմարիտ խաղաղությունը, այն տվեց սուրբ առաքյալներին՝ ասելով. «Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ» (Հովհ., ԺԴ 27), և անպատմելի խաղաղությունը՝ փչումը, որ առաջին մարդը անմաքրությամբ դուրս էր տարել, և որ ընդունեցին աշակերտները, առան Սիրոնից: Սիրոնում՝ Վերնատանը, փակված դռների միջով երևալով՝ Տերը փչեց առաքյալների վրա՝ ասելով. «Ստացե՛ք Սուրբ Հոգին» (Հովհ., Ի 22): Այսպես նաև Պենտեկոստեի օրը Սիրոնում՝ Վերնատանը, [երկնքից] հնչող ձայնից բաժանված լեզուները առաքյալների [վրա իջան], որ [Աստծու]՝ հրեղեն լեզուներով նրանց միջոցով ազգերին կանչելն էր նշանակում: Եվ ճշմարտապես Սիրոնից ստացան խաղաղությունը, աշխարհը խաղաղեցրին բազմաստվածության պատճառած վրդովումներից և Արարիչ Հորը հաշտեցրին արարածների հետ, նույն Սիրոնում հիմնավորեցին, սկզբնավորեցին Եկեղեցին: Այսպիսի նորագործ հրաշքների համար էլ մարգարեն հրամայում է Սիրոնին՝ ուրախանալ բոլորից առաջ:

Իսկ Սիրոնի դուստրը, այսպիսի շնորհների ծնունդն ու պտուղը Եկեղեցին է, որովհետև Սիրոնում սկիզբ առավ առաքելական վարդապետությունը: Սա մայր Սիրոնն է, և այնտեղ ծնվեց մարդը. ծնվեց Ավագանից՝ իբրև երկնավոր Հոր որդեգիր, այդ պատճառով էլ Սիրոնի դուստր [անվանումը] նախորդում է մայր Սիրոն [անվանը]. նախապես Սիրոնից [սկսվեց] առաքյալների՝ հեթանոսներին կանչելը և [նրանց] առաջին սքանչելագործությունները, որոնք Սիրոնից հետո անցան դեպի հեթանոսների Եկեղեցի:

Արդ, հրամայում է ուրախանալ Սիրոնի դստերը, որ անվանումն է տիեզերական Եկեղեցու, իսկ Թագավորը՝ Հիսուս, որ արարչական գորությունը թագավորում է երկն-

քում և երկրի վրա, Թագավոր է մարմնով, որ միացրեց արարչական բնությունը, իսկ «գալ» անվանում է Նրա՝ դեպի չարչարանքները դիմելը, անմաքուր կենդանիների վրա նստելը՝ Իր մահվամբ հրեաների ու հեթանոսների անմաքրությունը սրբելը: Իսկ [նրանց] վրա նստելը՝ սրբությունը տաճար է դարձնում Իրեն Երրորդությունից անբաժանելի հավատացողների մտքերը: Ասում է. «Իր ավանակին կկապի որթատունկից» (ՄԱՌ., ԽԹ 11): Որթատունկ Իրեն է խոստովանում՝ ասելով. «Ես եմ ճշմարիտ որթատունկը» (Հովհ., ԺԵ 11), իսկ էջ՝ հավատացյալ հրեաներին, որոնց կապեց Իրեն, որպեսզի այս աշխարհի փորձությունները չկարողանան քակտել այդ կապը:

«Եվ որթատունկի ոստից՝ էջի քուռակին» (ՄԱՌ., ԺԵ 11): Ավանակ է անվանում սուրբ Եկեղեցին, իսկ որթատունկի ոստ՝ երանելի առաքյալներին, որովհետև որթատունկը՝ Հիսուս, Իր հրաշագործությամբ Իրեն կապեց հրեաների անմաքրությունը՝ իբրև բժիշկ հպվելով բոլոր ախտաժեւանքներին: Որթատունկի ոստը տասներկու առաքյալներն են, որոնք, ինչպես որթատունկի ոստը, ծնվեցին Նրա վարդապետությունից, որովհետև հեթանոսներին կոչելը նրանց հավիտենապես կապեց առաքելական վարդապետությունը:

Իսկ ժողովրդի բազմությունն աղաղակում էր. «Օրհնեա՛լ ես, որ գալիս ես Տիրոջ անունով» (Մարկ., ԺԱ 9): Մովսեսն ու մարգարեները կանխապես գուշակել էին Փրկչի այսպիսի գալուստը, քահանայությունը միշտ ընթերցում էր, և [բոլորը] սպասում էին աստվածային գալստյանը. մանուկներին աստվածաբան դարձրեց Սուրբ Հոգին՝ մատնացույց անելով, թե՛ Նա է, ով պիտի գար, և ում կրկին գալուստն եք ակնկալում, որպեսզի գալով՝ կոչի ձեզ դեպի անապական ու անճառելի Երրորդության շնորհները: Եվ պիտի գա՝ դատելու աշխարհը և հատուցելու ըստ գործերի:

Իսկ քահանայապետներն ու դպիրները, նախանձից կուրացած, չկարողացան տեսնել ճշմարտությունն ու անսուտ Արեգակին, քանի որ ոչ միայն մտքով ու աչքով կուրացան, այլ նաև մանուկների ձայներից համրացած՝ մոտեցան Հիսուսին ու ասացին. «Սաստի՛ր այդ ժողովրդին, որ լուի», իսկ նա ասաց. «Եթե դրանց լռեցնեմ էլ, այդ քարերը կաղաղակեն» (Ղուկ., ԺԹ 39-40): Քարերն անպտուղ և ամուլ բնություն ունեն. այդպիսին են նաև հեթանոսները, որոնք նույնպիսի քարացած սրտերով անպտուղ ու անբույս էին աստվածային բարեպաշտության մեջ, բայց առաքելական քարոզություններ պիտի խոստովանեին Նրա Աստվածությունը:

Դարձյալ՝ «Այդ քարերը կաղաղակեն». ասում էր նույն իրենց՝ այդ քահանաների մասին, որոնք դեռևս չէին լսել առաքյալների վարդապետությունը և անպտուղ էին հավատի մեջ, և որոնք պիտի կրկնեին աշակերտների բարեբանությունը. նրանցից էին Նիկողեմոսը, Կայիափան, Պողոսը, յոթ [սարկավագները]՝ Ստեփանոսը [և մյուսները], հազարավոր բազմությունները, որոնք [Տիրոջ] հարությունից հետո առաքյալների քարոզությամբ [դեպի Տերը] դարձան:

Դարձյալ՝ «Այդ քարերը կաղաղակեն»: Քարերը դրվում են շինությունների հիմքում և ամբողջ շինությունն անշարժապես կրում են իրենց վրա: Այդպես և երանելի առաքյալներն իրենց կարծր և անշարժելի հավատով դրվեցին Եկեղեցու հիմքում, և նրանց վրա դրվեցին Եկեղեցու դասակարգությունները. ըստ որում՝ աստվածային բերանով վեժ դավանվեց Պետրոսը, որ Հիսուսին Հորից առանց բաժանվելու իջած խոստովանեց (տե՛ս Մատթ., ԺԶ 16): Այսպես նաև Գիրքը քարեր է անվանում մարգարեությունն ու քահանայությունը՝ ասելով. «Սուրբ քարեր են գլորվում նրա երկրում» (տե՛ս Չաք., Թ 16): «Գլորվում» աստվածային հրամանի՝ դեպի քահանայություն, դատավորություն, թագա-

վորություն կոչումն է ասում, որովհետև երանելի առաքյալների քարոզությունն ու կանչող ձայները, փրկության տանող նրանց խոսքերը ավետարանության խոսքով հասան ամբողջ երկրին ու աշխարհին:

Արդ, «եթե այդ մանուկները լռեն», Պետրոս վեժը առաքյալների հետ միասին կաղաղակի [Աստծու] Որդու՝ մարմնով և աստվածաբար Հորից անբաժանելի գալստյան մասին, Ով բովանդակապես երկրում և ամբողջովին երկնքում [լինելով]՝ Հոր հետ լցնում է քերովբեական աթոռը և [միաժամանակ] անմաքուր կենդանիների վրա նստելով՝ մտնում է Երուսաղեմ: Այնտեղ սերովբեներից է ընդունում մաքուրը և արարչականը՝ աստվածավայել գովասանությունը, իսկ այստեղ՝ մեր կերպարանքով [Երուսաղեմ] մտնելիս՝ մանուկներից նախախնամաբար է ընդունում: Այնտեղ՝ իմանալի տեսություններ և ամբողջ Աստվածություններ երևում է սերովբեներին, այստեղ՝ զգալի բնություններ շոշափվում է, ամեն բան է ամեն բանում, լցնում պարփակում է ամեն բան նա, ով «թզով [չափում] է երկինքը և քլով՝ երկիրը» (տե՛ս Եսայի, Խ 12):

Դարձյալ՝ «Այդ քարերը կաղաղակեն». քանի որ Աբրահամի գործերով միշտ պարծենում էին [հրեաները], որոնց հանդիմանելով՝ ասում էր. «Աբրահամին չնմանվողներ՛ր, մի՛ պարծեցեք, որ Աբրահամը ձեր հայրն է: Ասում եմ ձեզ, որ Աստված կարող է այս քարերից էլ Աբրահամի զավակներ հանել» (տե՛ս Մատթ., Գ 9, Ղուկ., Գ 8): Ինչպես որ ամուլ արգանդից ծնվեց Իսահակը, որից էլ ծնվեցիք դուք, այդպես էլ հեթանոսների անհավատ ու անծնունդ ժողովրդից իմ տերությունը կարող է ծնել Աբրահամի հավատի մանուկներ, որոնք կաղաղակեն իմ՝ մարմնով և աստվածաբար գալստյան մասին. «Օրհնեա՛լ ես, որ գալիս ես Տիրոջ անունով»:



Իսկ մենք, այս օրերն աստվածավայել տոներով, ավարտենք մեր խոսքը՝ այն մանուկների հետ աստվածաբանելով և գոչելով արարչական սարսափելի բարեբանությունը, աշակերտների հետ սպասավորենք Տիրոջ գալստյանը, ժողովրդի բազմություն հետ զգեստներ և ծառերի ճյուղեր փռենք արարչական ոտքերի տակ, որպեսզի ամեն բանով և ամենքի հետ հաղորդվենք Քրիստոսի աստվածապես և մարմնավոր անբաժանելի Անձնավորությունը և անբաժան և համապատիվ Սուրբ Երրորդությունը, Որին գովություն, մեծ վայելչություն, փառաբանություն [մատուցենք], մեր բերանով Նրան անբաժանելի և անպատմելի Մի Աստվածություն խոստովանենք և Երեք Անձ՝ բաժանված առանձնավորությամբ և միավորված Աստվածությունամբ, քանզի Նրանն է պատիվը, փառքը և զորությունը հավիտյանս. ամեն:



## ՓՐԿՉԻ՝ ԵՐՈՒՍԱՂԵՄ ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ

Լ մանուկի բազում հրաշագործությունները թողնելով՝ փութանք բացահայտել երեկվա և այսօրվա հրաշքները և երկու զարմանալի գործերը՝ գովեստի արժանի պատմությունը, քաջահայտ առավելությունները հանդիսավոր հայտնենք հրապարակում, քանզի նախապես գործված աստվածային հրաշքներից [հետո], երեկ կատարեց խոստացված գալուստը Բեթանիա. եկավ՝ բովանդակելու [Իր բոլոր հրաշագործությունները] Ղազարոսի նախաձառյալ հարություն, իսկ այսօր, ավանակի վրա նստած, մտնում է Երուսաղեմ՝ հավաստի դարձնելով մարգարեական նախագուշակությունները: Երեկ հավատով շնորհագարդեց Մարիամին ու Մարթային, չորսօրյա մեռելին կենդանի ընդունեց գերեզմանից, այսօր աստվածաբար սրբում է աշակերտներին ու մանուկներին և մանուկների բարեբանությամբ հայտնի է դարձնում իր՝ բոլորի փրկության համար եկած լինելը: Երեկ լուծեց մահվան իշխանությունն ու կենդանացրեց նրա կողմից ըմբռնվածին՝ մարմնով ու շնչով կորցելով նրան [մահվան իշխանությունից], այսօր հակառակամարտի ծառայությունից ազատում է հեթանոսներին ու հրեաներին վարդապետությամբ և խորհրդավոր նշանով՝ երկու կենդանիների վրա նստած, երասանն ուղղում է դեպի խաղաղություն՝ մտնում է Երուսաղեմ: Երեկ [գերեզմանից] դուրս կանչեց [պատանքներով] կապված Ղազարոսին, և կտավե բանտը, անկարող արգելելու տերունական հրամանը, լուծեց իր կարգը՝ ամբողջապես պահելով Արարչի հրամանը. այն արարչական հրամանին հնազանդվելով էր մահին ծառայակցում: Այսօր անեծքի կապանքներից արձակում է առաջին մարդուն, և հանցանքների բազմու-

Թյունն անզոր է արգելք դառնալու տերունական հրամանին, և որպես հանցավոր՝ դեպի Իրեն է կորզում մեղքը և մեղավոր մարդու փոխարեն դատապարտվում. Անմեղը մեղավորին Իրենով կանգնեցնում է Հոր առաջ:

Անցած օրը կենագործեց մեռած զգայարանները, պատուեց կտավե կապանքը, պնդերիզ շղթաներից ազատեց ձեռքերը, ճանաչեցրեց արարչական գորությունը և հողին դարձած հողեղեն մասը կենդանագործեց ո՛չ թե ձեռքերով, ինչպես սկզբում՝ [արարչագործության ժամանակ], այլ սոսկ անունը կանչելով, և [Ղազարոսը] սարսափով արագորեն դուրս ելավ [գերեզմանից]: Իսկ այսօր փարիսեցիներին ու սաղուկեցիներին դիմելով՝ տիեզերական կոչն է ասում. «Եթե մանուկները լուեն, այդ քարերը օրհնաբանություն կաղաղակեն» (Ղուկ., ԺԹ՝ 40): Դրանով խորհրդանշում է անպտուղ հեթանոսների՝ բարեպաշտություն և հավատ պտղաբերելը: Երեկ՝ Բեթանիայում, որ թարգմանվում է Չարչարանաց տուն կամ Հնազանդության տուն. Չարչարանաց տուն՝ [Հիսուսի] բարեկամ Ղազարոսի ննջելու պատճառով, որի համար արտասուլքներ թափվեցին Արարչի աչքերից, որ բարեկամի և ազգականի պես կարեկցում էր ամբողջ մարդկության բնությանը: Իսկ Հնազանդության տուն է կոչվում, որովհետև Ղազարոսը նախահոր՝ մահվան իշխանության տակ ընկած լինելու պատճառով հնազանդվեց մահվանը, իսկ մահը հնազանդվեց Հիսուսին Նրա՝ արարչական գորության պատճառով, ծառայապես լսեց տերունական հրամանը և աստվածային հրամանով տվեց մեռածին: Իսկ այսօր գալիս է Երուսաղեմ՝ Իր Չարչարանքների տուն, որովհետև այնտեղ Իր չարչարանքներով պետք է չարչարանքներից ազատեր մարդկային բնությունը: Նաև գալիս է Հնազանդության տուն, որպեսզի մարդկային անհնազանդ բնությունը միավորի հնազանդ Բանին, և առաջին մարդու

անհնազանդության փոխարեն հնազանդվում է բոլորի Հորը. մարմնով որպես ծառա հնազանդվում է բոլորի Հորը, և Աստվածությամբ որպես Արարիչ Հոր հետ համապատվաբար ընդունում է ծառայությունը:

[Բեթանիա] գնացած օրը Մարիամի ու Մարթայի տանը ուտում է ընթրիքը, և Նրա դիմաց նստած էր գերեզմանից հարուժյուն առած Ղազարոսը, որ իր ձեռքին իբրև [իր հարուժյան] հավաստի վկա ուներ պնդերիզ կտավը, որպեսզի [ոչ միայն] իր ուտելու և խմելու, [այլ նաև] իր գերեզմանական կտավի միջոցով հավատան իր ճշմարիտ հարուժյանը:

Իսկ այսօր՝ Պասեքի տոնին, դղրդացնում է ամբողջ Երուսաղեմը՝ մտնելով այնտեղ, և նոր ժողովրդից քննվում և ստուգվում է, որ «Հիսուս Գալիլիացիների Նազարեթից է» (տե՛ս Հովհ., Ա, 46), և նրանց խոստովանությունն համաձայնում է Բեթղեհեմում հովիվներին երևացած հրեշտակի խոստովանությանը (տե՛ս Ղուկ., Ա, 11):

[Բեթանիա] գնացած օրը ընդունում է Մարիամի բարեպաշտությունը, թանկարժեք յուղով օծումը խոստովանում իբրև սպասավորություն Իր մահվանը և գործակցություն Իր չարչարանքներին, նրա արտասուլքը՝ անմաքուր վարքի լվացում, մազերը՝ մարմնավոր վարքի մեռելություն, ոտքերը՝ կենդանության ժամանակ ոտքերով ընթանալ. և [Իր] մաքուր ոտքերով սրբում է յոթ օրերը, որոնցով առաջ էին ընթանում ամիսները, տարիները, երբ նա շարժվում էր իր անմաքուր գործերով: Իսկ այսօր կատարում է քահանաների սրտի բաղձանքը. գալիս է հայտնապես, աշակերտների բազմությամբ, սրբում է մանուկների լեզուն՝ [Իրեն] օրհնաբանելու, ազդում է ժողովրդի մտքին, որպեսզի Իր ճանապարհին ծառերի ճյուղեր սփռեն, որ Աստծուն ու թագավորին [վայել] սպասավորություն է: Երկու հրաշագործություն գործվեց երկու կատարյալ օրում՝ յոթերորդ՝ շաբաթ

օրը, որ նշանակում է հանգիստ, և որում ոչ մի գործ էլ չէր գործվում, և միաշաբաթի օրը, որ սկիզբն է: Աստված գործեց հանգստյան օրը՝ մեռելութունից հրաշափառ հարություն տալով մեր բանական բնությանը. քանզի նախ արարչագործության ժամանակ յոթերորդ օրը դադար եղավ: Իսկ որ արարված ամեն բան բարի է, Մովսեսն է խոստովանում. «Ահա ինչ որ Աստված ստեղծեց, բարի է» (ԾԱՌ., Ա, 8-10): Աստված դադարեց բարեգործելուց, որովհետև առաջին օրից մինչև վեցերորդ օրը փառազարդեց երկինքն ու երկիրը, իսկ վեցերորդ օրը Իր իսկ ձեռքով կենագործեց մարդուն և ավանդեց Օրենքը՝ որպես պահպան: Իսկ երբ մարդը դադարեց պատվիրանապահ լինելուց, Աստված էլ դադարեց բարեգործությունից. քանի որ վեց օրերին մարդը դադարեց օրենքը պահելուց, յոթերորդ օրը Աստված դադարեց բարեգործությունից. և սա՝ ոչ իզուր, այլ արարչական ճշմարտությամբ. որովհետև երկինքն ու երկիրը մարդու համար են, իսկ մարդը՝ պատվիրանի համար է: Պատվիրանապահությունը աստվածային բարերարության մասին էր հայտնում. պատվիրանապահության դադարելու հետ դադարեց նաև աստվածագործ հրաշքը, որովհետև մեղանչելու պատճառով մարդը մերկացավ արարչատուր փառքից:

Եվ Ղազարոսը մեռել էր երկրավոր և ժամանակավոր մահով: Այն ժամանակ նախահոր պատվիրանազանցության պատճառով Աստված դադարել էր մեղքերը թողնելուց, այժմ պատվիրանապահ Ղազարոսի պատճառով սիրով կյանք էր տալիս գերեզմանից:

Նմանապես՝ առաջին և երկրորդ շաբաթ. առաջինում նախահոր՝ պատվիրանապահությունից դադարելու պատճառով Աստված դադարեց բարեգործությունից, երկրորդում Ղազարոսի քրիստոսասիրության պատճառով նորագեց նրան գերեզմանային անշնչությունից և ազատեց պա-

տանքներից ու կապերից: Իսկ միաշաբաթը բարեբանության օր է. [այդ օրը] աշակերտների բազմության հետ անմաքուր կենդանիների վրա նստած ահավորապես Երուսաղեմ մտավ, և [մանուկները] բարեբանեցին Նրան, [ժողովրդի բազմությունը] զգեստներ և ծառի ճյուղեր փռեց Նրա ոտքերի տակ, Երուսաղեմը դղրդաց այնտեղ եկած ժողովրդի հետ, քահանաները, նախանձի ախտով լցված, Հիսուսին ասացին. «Ի՞նչ են աղաղակում Քո մասին»: Տերը պատասխանեց. «Եթե մանուկները լուեն էլ, այդ քարերը կաղաղակեն»:

Միաշաբաթը սկիզբն է լինելության. նրանով սկզբնավորվեց երկնքի ու երկրի արարչագործությունը: Արդ, որովհետև մեր նախահոր հանցանքի պատճառով ապականվեց առաջինն ու աստվածավայելը, [Տերը] հանցավորի կերպարանք առավ, որպես հանցավոր՝ Իր անձը դատապարտության տվեց, և թույլ տվեց դատողներին՝ դատապարտել Իրեն, որպեսզի առաջին մարդու դատապարտության գինը վճարի. մարդացած Աստված դատապարտություն ընդունեց և, որպես փրկագին Հորը, Աստվածացած և անմեղ մարմնով կամավորաբար ընդունեց մեղքերը և մեղավորի պես և մարմնացած Աստվածությամբ լուծեց առաջին մարդու բոլոր մեղքերը և նրան անմեղ կանգնեցրեց Հոր առջև:

Աշակերտների բազմությունը խորհրդանշում է ամբողջ աշխարհի հավատացյալների՝ ապագայում կանչվելը, Զիթենյաց լեռը. ձեթը արեգակի գործակիցն է. լեռ աստվածային վարդապետության բարձրությանն է ասում, ձեթ՝ տերունական լուսափայլ բերանին, որ լուսավորում է արտաքին աստվածաբանությունը: Իսկ ծառերի ճյուղերը Նրա ոտքերի տակ փռելը [խորհրդանշում է] երկրի՝ առաջին՝ փշաբեր դառնալու անեծքից ծաղկավետության դառնալը և ճյուղերի՝ վերստին վեր բարձրանալն ու վերածնվելը՝ առատապատուղ ու բարեսաղարթ դառնալը, որոնք առնելով՝

ժողովուրդը ընծայում էր անեծքը Վերացնողին և երկիրը առաջին արարչուության պես Նորոգողին: Իսկ զգեստները փռելը [խորհրդանշում է] հոգով ու մարմնով ախտացածներին՝ նրանց, ովքեր բժշկվեցին՝ հավատով մոտենալով Հիսուսին: Խորհրդանշում է նաև քահանաների՝ մանուկների օրհնաբանության պատճառով անհանգստանալը, նորահավատներին [ճշմարտությունը] խոստովանել արգելելը և առաքելական քարոզությանը զորություն մատուցելը:

Իսկ Տիրոջ խոսքը. «Եթե նրանք լուեն էլ, այդ քարերը կաղաղակեն»։ Քարեր երանելի առաքյալների կարծր և հիմք դնող քարոզությանն է ասում. եթե այդ մանուկներին արգելեմ, ապա Պողոսը, Նիկողեմոսը, Գամաղիելը և Կայիափան, որոնք դեռևս անպտուղ են, հավատի մեջ՝ քարի նման և հրեության մեջ՝ խիստ անպտուղ, սրանք պիտի խոստովանեն իմ մարդացած Աստվածությունը և բարձրաձայն պիտի բարբառեն իմ երկու՝ առաջին և երկրորդ գալստյան մասին:

Դարձյալ՝ «Այդ քարերը կաղաղակեն»։ պետք է իմանալ նաև, որ քարերը մարգարեներն են, որոնք օրենքի ժամանակ շինության հիմքեր հանդիսացան, և նրանց մարգարեական խոստովանությունը: Նրանք կանխապես գուշակելով բովանդակ տնօրինությունը՝ ապագայում եղողներին գրով հիշատակ և անկողոպտելի գանձ թողեցին երկու հավատարիմ վկաներով՝ մարգարեական և ավետարանական աստվածաբանության գրքերով:

[Մեր Տերը] թող տոնախմբողներին նույնպես արժանի դարձնի նոր արքայությանը, քանզի Նրանն են փառքը և զորությունը հավիտյանս. ամեն:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան .....	5
Ս. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ	
Ներքող Աստվածընկալ Սուրբ Խաչին .....	7
Ներքող Կաթողիկե Սուրբ Եկեղեցուն .....	27
ՄԱՄԱՐԵ ՎԵՐԾԱՆՈՂ	
Փրկչի ծննդյան եւ Նրա՝ ութերորդ օրը մկրտության մասին .....	35
Ղազարոսի հարության օրվա առիթով .....	47
Ղազարոսի՝ շաբաթ օրը հարության մասին .....	69
Մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ գալստյան Մեծ օրվա առիթով .....	95
Փրկչի՝ Երուսաղեմ գալստյան մասին .....	109

Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա  
Ծապիկը՝ Ա. Օհանջանյանի  
Սրբագրիչ՝ Ա. Բուլաթյան